Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____ 2021թ. N_____Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին և 83-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է՝*

1. Հաստատել Երևանի զարգացման 2022 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2022 թվականի ծրագիրը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված կարգով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Հ.ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2022 թվականի ծրագիրը» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Հ.ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2022 թվականի ծրագիրը» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՀԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածի՝ Երևանի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները: Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) առանձին բաժիններով ներկայացված են Երևանի վարչական շրջանների զարգացման ծրագրերը:

Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի հիմնական նպատակն է՝ նախանշել քաղաքային տնտեսության զարգացման ուղղությունները մեկ տարվա կտրվածքով՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները:

Ծրագրի կառուցվածքում առանձին ներկայացված են քաղաքային տնտեսության ոլորտները և Երևանի վարչական շրջանները: Յուրաքանչյուր բաժին հիմնականում բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Վիճակի նկարագիր», «Հիմնախնդիրներ» և «2022 թվականին նախատեսվող աշխատանքներ»:

2022 թվականին նախատեսվող աշխատանքներն ու ծրագրերը կազմվել են՝ հիմք ընդունելով Երևանի զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրի գերակայությունները և առկա հիմնախնդիրները: Այս առումով կարևորվում է բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը՝ ինչպես Երևանի բնակիչների, այնպես էլ մայրաքաղաքի հյուրերի համար, մասնավորապես հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, շենքերի և բակային տարածքների բարեկարգումը, ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը, բնակչության սակավաշարժ խմբերի համար համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը:

Մշտական ուշադրության կենտրոնում են լինելու Երևանի բնակիչների սոցիալական պաշտպանության խնդիրները: Այդ նպատակով սոցիալական բնույթի ծրագրեր կիրագործվեն նաև մասնավոր հատվածի, բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Առողջապահության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման, բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակական բարելավման նպատակով՝ աջակցություն կցուցաբերվի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական կազմակերպությունները ժամանակակից բուժսարքավորումներով համալրելու գործընթացին:

Կարևորվում է նաև գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, միջազգային համագործակցության ընդլայնումը:

Երևանի զարգացման 2022թ. ծրագրում նախատեսվում է համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ ծրագրերի իրականացում, դրանց շրջանակի ընդլայնում:

Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագիծը 2021թ. հոկտեմբերի 14-ին տրամադրվել է Երևանի քաղաքապետի՝ 2019թ. հունիսի 7-ի հ.1881–Ա որոշմամբ (13.10.2020թ. հ. 3208-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներին, որոնք 2021թ. հոկտեմբերի 21-ին հրավիրված նիստի ընթացքում միաձայն կողմ են քվեարկել ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելուն:

Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագիծը՝ հաստատված ժամանակացույցի համաձայն, 2021 թվականի հոկտեմբերի 18-ին ներկայացվել է Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամներին, հոկտեմբերի 21-ին հրավիրված նիստում տրվել է դրական եզրակացություն՝ 2021 թվականի հոկտեմբերի 22-ից մինչև նոյեմբերի 5-ը Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնելու համար: Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է մամուլում և Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական http://www.e-draft.am կայքում, ինչպես նաև Երևան քաղաքի պաշտոնական կայքում հրապարակվել է ծրագրի նախագծի էլեկտրոնային տարբերակը: 2021 թվականի նոյեմբերի 9-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծի հանրային քննարկում՝ հանրային բաց լսումների եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթերթ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 11-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման արդյունքները: Նույն նիստում Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը տվել է դրական եզրակացություն Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելու համար:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածը, համաձայն որի Երևանի քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնում Երևանի բնակչության կենսական շահերը, Երևանի զարգացման ծրագրերը,

ինչպես նաև առկա ռեսուրսները՝ որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում Երևանի զարգացման 2022 թվականի ծրագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Հ.ՍԱՐԳՍՅԱՆ**

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 10
ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ 14
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒՅԹՅՈՒՆ 17
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 24
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 32
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 35
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ 40
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 55
ՄՇԱԿՈՒՅԹ 62
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ 72
ՏՐԱՆՍՊՈՐՏ 77
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 86
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ 100
ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ 107
ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 111
ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 119
ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 125
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 131
ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 138
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 143
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 151
ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 157
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 162
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 165
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 170
ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 176

ՆԱԽԱԲԱՆ

Երևանը Հայաստանի խոշորագույն տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է: Մայրաքաղաքի տարածքը կազմում է 223 քառ.կմ, բնակչությունը՝ 1084.0 հազ. մարդ, որը կազմում է հանրապետության բնակչության ավելի քան 36%-ը:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն:

Երևանում տեղական ինքնակառավարումը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով սահմանված սկզբունքների վրա՝ ապահովելով Երևանի բոլոր վարչական շրջանների համաչափ և կայուն զարգացումը:

Երևանում է գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարությունները և պետական կառավարման մարմինները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների գերակշիռ մասը: Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների գրասենյակները, օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունները, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերն ու ֆինանսական հաստատությունները: Երևանը հանդիսանում է նաև կարևորագույն տրանսպորտային հանգույց:

Երևանի զարգացման 2022 թվականի ծրագիրը նպատակ ունի ապահովել բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը՝ երաշխավորելով երևանցիների կյանքի որակի բարելավումը:

Երևանը պետք է լինի մաքուր, կանաչ ու բարեկարգ, աշխատանքի և կարգուկանոնի, հարմարավետ, ավանդույթների և ապագայի քաղաք, որտեղ ապահովված կլինի հասարակության յուրաքանչյուր անդամի անվտանգ և արժանավայել կյանքը, ինքնաարտահայտման հնարավորությունը, բավարարված կլինեն սոցիալական ապահովության կարիք ունեցող քաղաքացիների նվազագույն անհրաժեշտ կարիքները:

Զարգացման ծրագրի իրականացման գրավականը հանդիսանում է քաղաքացիների վստահությունը վայելող և արդյունավետ գործող քաղաքային իշխանությունը, ինչպես նաև Երևանի ավագանին, որոնք հիմնված են՝ հարգելու իրավունքները և ազատությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակությանն ակտիվ երկխոսության միջոցով կառավարման գործընթացներին մասնակից դարձնելը: Ծրագիրը ներկայացնում է Երևան քաղաքի ընդհանուր վիճակի բնութագիրը, քաղաքային տնտեսության առանձին բնագավառներում և վարչական շրջաններում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև 2022 թվականին նախատեսված միջոցառումները՝ հիմք ընդունելով Երևանի զարգացման 2018-2023թթ. հնգամյա ծրագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երևանի քաղաքաշինական նոր ռազմավարության (City Development Strategy) մշակման անհրաժեշտություն,
2. Երևան քաղաքում կիրառվող տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթերի համակարգը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և մշակված նախագծերի գործող համակարգի վերանայմամբ, գոտևորման նոր սկզբունքներն ընդունելով, Երևան քաղաքի միասնական գոտևորման հատակագծի կազմում /զոննինգ/ ծագած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված առաջնահերթ մշակման գոտիներ առանձնացնելու սկզբունքով,
3. Վերականգնվող էներգիայի զարգացմանը և աղբյուրների կիրառմանն ուղղված քաղաքականության իրականացում,
4. Էլեկտրոմոբիլների կիրառման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծում,
5. Մայրաքաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավում, աղբի վերամշակմանն առնչվող ռազմավարության մշակում,
6. Վերելակային տնտեսության արդիականացում,
7. Երևան քաղաքի հասարարական տրանսպորտի համակարգի ամբողջական արդիականացման ապահովում,
8. Զբոսաշրջիկների համար տեղանքների և տրանսպորտային ուղիների հասանելիությունը բարձրացնելու նպատակով օտար լեզուներով ուղեցույցերի և էլեկտրոնային քարտեզների կազմում, համապատասխան փողոցների և զբոսաշրջանային վայրերի նշաններով կահավորում, այդ թվում զբոսաշրջային ծառայություններ մատուցող ընկերությունների գովազդային վահանակների նույնաոճ կահավորում,
9. Երևան քաղաքի կանաչ տարածքների պահպանում և ավելացում, ոռոգման համակարգի արդիականացում, նոր ոռոգման ցանցերի կառուցում,
10. Զբոսայգիների ռազմավարության մշակում, հանգստի գոտիների ստեղծում, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացում, մայրաքաղաքի կանաչ ֆոնդի երիտասարդացում,
11. Առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում և ծառայությունների որակի բարձրացում,
12. Բժշկական կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում,
13. Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում՝ մասնավորապես արտակարգ դրությունների իրավիճակում,
14. Կայուն և սոցիալական միջավայրի ապահովում, բնակչության առանձին նպատակային խմբերի համար տեղական սոցիալական ծրագրերի կազմում և իրագործում,
15. «Համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրում, սոցիալական ապահովության համակարգի բարելավում»,
16. Նախակրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում,

17. Նախադպրոցական կրթության որակի բարձրացում, ներառականության խթանում,
18. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող համակարգերի ներդրում, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացում, համակարգի անվտանգության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում,
19. Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում,
20. Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում,
21. Երևան քաղաքի հողային ռեսուրսի մշակում և ստեղծում,
22. Բնակելի ֆոնդի վերանորոգում և պահպանում, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովում,
23. Քաղաքային միասնական կառավարման կենտրոնի ստեղծում,
24. «Խելացի քաղաք» ծրագրի ներդրում, կառավարման օպտիմալացում և ծառայությունների որակի բարելավում,
25. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակույթի բոլոր ճյուղերում մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովում,
26. Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատման պահպանում,
27. Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորում՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և տեղական հանրաքվեների միջոցով,
28. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանում,
29. Ծրագրերի պլանավորման և իրականացման ընթացքում Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով առաջացած նոր իրողությունների, մարտահրավերների, ի հայտ եկած նոր շահառու խմբերի կարիքների հաշվի առնում:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2021**
Առևտրի օբյեկտներ	հատ	10327
Հանրային սննդի օբյեկտներ	հատ	2244
Կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտներ	հատ	2818
Հյուրանոցային համալիրներ	հատ	172
Գյուղական արտադրանքի շուկաներ/տոնավաճառներ	հատ	23
Սպառողական ապրանքների տոնավաճառներ	հատ	11
Սգո սրահների քանակ	հատ	23
Հանրային սննդի ժամանակավոր սեզոնային ծառայություն կազմակերպող տնտեսվարողների քանակ	հատ	353

Հիմնախնդիրներ՝

1. Առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետներն անցած, ոչ ընթեռնելի պիտանիության ժամկետով, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով ապրանքների վաճառքը բացառելու նպատակով հսկողության ուժեղացում:
2. Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում:
3. Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն:
4. Առևտրի և ծառայությունների ոլորտում օրենսդրական դաշտի կարգավորում:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով նշված ոլորտներում գործունեության կանոնների և դրանց կիրառման լրացուցիչ պայմանների մշակում		Առևտրի և ծառայությունների ոլորտի առանձին օրենսդրական ակտերի ոչ կատարելագործված, դրանցում ոլորտի նկատմամբ սահմանված կանոնների ու ներկայացվող պահանջների թերի լինելը բացասաբար են անդրադառնում աշխատանքների արդյունավետության ու որակի վրա և ավելացնում ոլորտում իրականացվող գործառույթներից բխող ռիսկերը: Մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս մշակված չեն առևտրի և ծառայությունների ոլորտի թույլտվությունների տրամադրման կարգերը, ուստի օրենսդրական կարգավորումից հետո կմշակվեն ոլորտը կարգավորող համապատասխան կանոններ և նորմատիվ իրավական ակտեր:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. ընթացքում	
2	Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում, արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում	ՀՀ ոստիկանություն	Օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումն ապահովելու, սպառողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու, նրանց վերը նշված բացասական հետևանքներից զերծ պահելու նպատակով առաջիկա տարվա ընթացքում կտրուկ միջոցառումներ կձեռնարկվեն			

			բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման ուղղությամբ, ինչպես նաև 2020 թվականին բացօթյա ապօրինի առևտուրը կանխարգելելու ուղղությամբ մշակված օրենսդրական նախագծերն անհրաժեշտության դեպքում կլրամշակվեն և կդրվեն շրջանառության մեջ:			
3	Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Երևան քաղաքի վարչական շրջաններում պահանջարկ առաջանալու դեպքում աշխատանքներ կտարվեն գյուղատնտեսական արտադրանքի նոր շուկաների կազմակերպման և գործունեության իրականացման ուղղությամբ			
4	Հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման կանոնակարգում		Ուսումնասիրությունները ցուց են տվել, որ գործող հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման հետևանքով երբեմն խոչընդոտվում է հետիոտնի երթևեկը, որն առաջացնում է քաղաքացիների դժգոհությունը, ինչպես նաև տարբեր էսքիզային լուծումներով նշված ծառայությունների կազմակերպման արդյունքում աղավաղվում է մայրաքաղաքի ճարտարապետական տեսքը, ուստի 2020 թվականին հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպումը կանոնակարգելու			

			վերաբերյալ մշակված օրենսդրական նախագծերի փաթեթի ընդունումից հետո կմշակվեն համապատասխան կարգավորումներ:			
5	Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն և ապամոնտաժում	<< ոստիկանություն	Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով առաջիկայում միջոցներ կձեռնարկվեն չգործող, լքյալ, ապօրինի, հողամասի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և ծառայությունների ոլորտի կրպակների, ինչպես նաև ապօրինի տեղադրված ավտոմատ սարքավորումների ապամոնտաժման ուղղությամբ:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. ընթացքում	

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտի գերակայությունն առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումը, վերազինումը:

Երևան քաղաքում բնակչությանը արտահիվանդանոցային և հիվանդանոցային անվճար բժշկական օգնություն և սպասարկման ծառայություններ են մատուցվում ավելին քան 115 առողջապահական կազմակերպությունների կողմից:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական կազմակերպություններ	
Առողջապահական հիմնարկ	**30**
Մասնագիտացված հիվանդանոց	1
Ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց	3
Շտապբուժօգնության ծառայություն	1
Դիսպանսեր	1
Գիտահետազոտական ինստիտուտ-մասնագիտացված հիվանդանոց	1
Ծննդատուն	1
Պոլիկլինիկա	2 2

Երևան քաղաքի բնակչությանը որակյալ բուժծառայությունների մատուցման և մատչելիության բարձրացման տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բուժհաստատությունների հագեցվածությունը: Երևանի ենթակայության պոլիկլինիկական բուժհաստատություններից 7-ը հագեցած են անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, 15-ը՝ միջին հագեցվածության են, հիվանդանոցային ծառայություններից՝ 2-ը հագեցած են, 4-ը՝ միջին հագեցվածության են:

Շարունակական բնույթ ունեցող «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում 2013-2021 թվականների ընթացքում Երևանի ենթակայության բուժհաստատությունները հագեցվել են 740 անուն նոր բուժսարքավումներով, այդ թվում՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ և ֆիզիոթերապևտիկ սարքավորումներով, բժշկական պարագաներով /վիրահատական սեղաններ, լամպ, գինեկոլոգիական աթոռներ և այլն/ և այլ անհրաժեշտ սարքավորումներով և պարագաներով: 2021 թվականին ձեռք են բերվել նաև ժամանակակից 5 թվային ռենտգեն սարքավորումներ, ստացիոնար ուլտրաձայնային հետազոտման սարքեր՝ սրտի էխոսրտագրության հնարավորությամբ:

Ծրագրի իրականացման արդյունքում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններից սկսեցին օգտվել ոչ միայն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձինք՝ պետական պատվերի շրջանակներում, այլ նաև վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից օգտվող քաղաքացիներ, որն էլ իր հերթին նպաստեց նաև վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական ծառայությունների ծավալի ավելացմանը:

Վճարովի հիմունքներով մատուցվող ծառայությունների ծավալի ավելացումը հնարավորություն է ընձեռում ստանալ լրացուցիչ եկամուտներ, ինչն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում ոչ միայն ապահովել բուժհաստատությունների ընթացիկ գործունեությունը, այլև ստեղծել ֆոնդեր՝ հետագա զարգացման համար: Մասնավորապես՝ ընկերությունները իրենց միջոցների հաշվին իրականացրել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

Միաժամանակ՝ 2021 թվականին Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված լարված համաճարակային իրավիճակը իր տնտեսական հետևանքներն է թողել ինչպես տնտեսության, այնպես էլ առողջապահական ոլորտի վրա, արդյունքում՝ Երևանի ենթակայության առողջապահական ընկերությունները հայտնվել են ծանր ֆինանսական վիճակում և ընթացիկ գործունեությունը ապահովել են շնորհիվ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից ստացված եկամուտների, որը 2021 թվականին 2020 թվականի համեմատ ունի նվազման միտում:

Պետություն-մասանավոր հատված համագործակցության շրջանակներում բուժհաստատությունների զարգացման համար լավագույն ուղղություն դիտարկելով հավատարմագրային կառավարման ինստիտուտը՝ Երևանի ենթակայության հիվանդանոցային ծառայությունների զարգացման նպատակով նախատեսվում է հետագայում դիտարկել նաև մասանավոր հատվածի կողմից Երևանի ենթակայության հիվանդանոցային բուժհաստատությունները հավատարմագրային կառավարման հանձնելու ծրագրեր:

Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող սոցիալապես անապահով բուժաշխատողների համար կազմակերպվել է վերապատրաստման գործընթաց, արդյունքում՝ 2014 թվականից առ այսօր վերապատրաստվել են թվով՝ 438 բժիշկ և 390 բուժքույր: 2022 թվականին նախատեսվում է վերապատրաստման գործընթաց կազմակերպել 100 բժշկի և 100 բուժքրոջ համար:

Համակարգչային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտությունները պետության կողմից երաշխավորված դժվարամատչելի հետազոտությունների ցանկում ներառված լինելու պատճառով հասանելի չեն հասարակության լայն շերտերի համար, ուստի սոցիալական լարվածությունը որոշ չափով մեղմելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից ձեռք է բերվել մագնիսա-ռեզոնանսային և կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն, ընդ որում կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայությունից 2014-2020 թվականներին օգտվել է 1238 քաղաքացի, իսկ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայությունից 2018-2020 թվականներին օգտվել է 256 քաղաքացի:

2021 թվականի համար ձեռք է բերվել 150 կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն, 84 մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն և առաջին անգամ մինչև 200 անձի համար կրծքագեղձի սքրինինգային հետազոտություն՝ ներառյալ կրծքագեղձի մամոգրաֆիա և սոնոգրաֆիյա:

Հիմնախնդիրներ՝

1. Բժշկական ծառայությունների որակի բարելավում:
2. Բժշկական հաստատությունների շենքային պայմանների բարելավում:
3. Մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարձրացում:
4. Տեխնիկական հագեցում, այդ թվում՝ վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխանող բժշկական սարքվորումներով և պարագաներով, գույքի արդիականացում:
5. Վճարովի հիմուքներով մատուցվող բժշկական և ոչ բժշկական ծառայությունների ծավալի ավելացում, վերջիններից ստացված մուտքերից աշխատակիցներին լրավճարների տրամադրում:
6. Երևան քաղաքի բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների անցկացման մատչելիության ապահովում:
7. Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող բժիշկների, բուժքույրերի և դեղագետների վերապատրաստում:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում		Նախատեսվում է ձեռք բերել. 1.Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 3 տվիչով՝ 8 հատ, 2.Ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք 2 տվիչով՝1հատ, 3.Ռենտգեն ապարատ՝ 5 հատ, 4.Ճեղքային լամպ՝ 2 հատ, 5.Հիվանդի մոնիտոր՝ 20 հատ, 6.Բազմաֆունկցիոնալ հիվանդանոցային մահճակալ՝20 հատ, 7.Ավտոռեֆկերատոմերտր՝ 2 հատ, 8.Էլեկտրասրտագրության (ԷՍԳ) երկարատև մոնիտորինգի կրովի համակարգ /հոլտեր/՝ 4 հատ, 9.Աչքի կոնտակտային տոնոմետր՝ 8 հատ, 10.Ինֆուզյոն պոմպ /ներարկիչային/՝ 20 հատ, 11.Ավտոկլավ՝ 20 հատ:	Երևանի ենթակայության բուժհաստատություններ, Երևան քաղաքի բնակիչներ	2022 թ.	Երևան համայնքի բյուջե
2	Երևանի ենթակայության բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավում		Նախատեսվում է «Նոր Արեշ պոլիկլինիկա», «Արշակունյաց պոլիկլինիկա», «Թիվ 12 պոլիկլինիկա», «Թիվ 15 պոլիկլինիկա», «Արաբկիր մանկական պոլիկլինիկիա» ՓԲԸ-ների և «Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 2-րդ մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում			
3	Բնակչության համար կոմպյուտերային և		Նախատեսվում է ձեռքբերել.			

	մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայությունների տրամադրում		1.Կոմպյուտերային տոմոգրաֆիայի հետազոտություն – 132 հատ 2.Մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտություն – 100 հատ, 3.Կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային ծառայություն-մինչև 100 անձի համար, 4.Կորոնորագրաֆիկ հետազոտություն-մինչև 80 անձի համար:			

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

Երևան քաղաքի վարչական շրջանների տարածքում գովազդային գործունեություն է իրականացնում թվով 160 մասնագիտացված գովազդային կազմակերպություն, տեղադրված (տեղաբաշխված) գովազդային վահանակների թիվը 1770 հատ է՝ ընդամենը 32.400 քմ. մակերեսով:

Երևանում գտնվող շենք/շինությունների վրա գովազդ տեղադրած տնտեսվարող սուբյեկտների թիվը կազմում է 8534 հատ, իսկ շենք/շինությունների վրա տեղադրված գովազդի ընդհանուր մակերեսը կազմել է 37.456 քմ :

Երևան քաղաքում տեղադրված է ընհանուր 2696 «Երևան» գրվածքով նստարան, 1930 հատ ձուլվածքով աղբաման, 370 հատ հասարակ նստարան:

Հիմնախնդիրներ՝

1. Գովազդային տարածքների հաշվառման, իրավական դաշտին համապատասխանեցման անհրաժեշտություն՝ Երևանի բյուջե համապատասխան մուտքերի ապահովում:
2. Շենքերի և շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների կանոնակարգման անհրաժեշտություն:
3. Էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման անհրաժեշտություն:
4. Արտաքին գովազդի դաշտի կառավարման օպտիմալացման անհրաժեշտություն:
5. Գովազդային վահանակների մրցութային կարգով տրամադրման աշխատանքներ:
6. Պատմամշակութային շենքերի գովազդային անձնագրերի մշակման շարունակականության ապահովման անհրաժեշտություն:
7. Տոնական ձևավորման հայեցակարգի և արտաքին ձևավորման գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների մշակման անհրաժեշտություն:
8. Համայնք-մասնավոր հատված համագործակցության ընդլայնման անհրաժեշտություն:
9. Երևան քաղաքի կահավորում արդեն իսկ տեղադրված գույքի՝ նստարան, աղբաման և այլն վերանորոգում և արդիականացում:
10. Արտաքին ձևավորման միասնական չափանիշների ձևավորման անհրաժեշտություն բնակիչների մասնակցության ապահովմամբ:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Շենքերի գովազդային անձնագրերի մշակում և գովազդների համապատասխանեցում գովազդային անձնագրերին	Մրցույթում հաղթող կազմակերպություն	Յուրաքանչյուր շենքի համար նախագծվում է գովազդի համար նախատեսված բոլոր տեղադիրները, գովազդի չափսերը, պատրաստման նյութը և տեսակը: Տնտեսվարողներին կտրվի խելամիտ ժամանակ իրենց գովազդները համապատասխանեցնելու գովազդային անձնագրի պահանջներին: Կենտրոն վարչական շրջանում նախատեսվում է մրցութային կարգով իրականացնել թվով 150 հատ շենքերի գովազդային անձնագրերի պատվիրում	Համայնք, համատիրություններ, տնտեսվարողներ	2022թ. ապրիլ-դեկտեմբեր	Երևան համայնքի բյուջե
2	Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրում	Երևան քաղաքի կառավարման տեխնալոգիաների կենտրոն	Արդեն իսկ ստեղծված էլեկտրոնային բազայի հիման վրա կստեղծվի կայք, որի միջոցով գովազդային կազմակերպությունները և տնտեսվարողները կտեսնեն յուրաքանչյուր շենքի գովազդային անձնագիրը և հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով ուղարկել հայտեր գովազդի հաստատման, տեղադրման թույլտվություն ստանալու համար: Հնարավորություն կտրվի նաև էլեկտրոնային եղանակով վճարել արտաքին գովազդի համար նախատեսված տեղական տուրքի գումարը:	Գովազդային կազմակերպություններ և տնտեսվարողներ	2022թ. հունվար-դեկտեմբեր	Երևան համայնքի բյուջե
3	Ներդրումային ծրագրերի իրականացում՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների	Մասնավոր ներդրողներ	Բնակչության հարմարավետ կենսակերպի ապահովման բազմաթիվ տարրեր, ինչպիսիք են օրինակ քաղաքային կահույքը, կանգառասրահները և վերգետնյա անցումները կարող են կառուցվել որպես փոխհատուցում գովազդային տարածքների տրամադրմամբ:	Համայնք, մասնավոր կազմակերպություններ		

	տրամադրման սկզբունքով		նախատեսվում է ներդրումային ծրագրով իրականացնել գովազդային մակերեսների տրամադրմամբ մասնավոր կազմակերպություններին նոր կանգառասրահների, հեծանվականգառների և վերգետնյա անցումների մրցույթների հայտարարում			
4	Գովազդային վահանակների մրցութային կարգով տրամադրման և տեղական տուրքերի և վճարների հավաքագրման նոր մեխանիզմի ներդրում	Գովազդային կազմակերպություններ	Գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպությունների գործունեությունից է կախված արտաքին գովազդից համայքի եկամուտների չափը: Սա դժվարություններ է ստեղծում համայնքի եկամուտների պլանավորման գործընթացում և հնարավորություն չի տալիս ավելի արդյունավետ կառավարիչների մուտք գործելը շուկա: Հարկավոր է՝ • Նախապես սահմանել գովազդային վահանակների բոլոր պոտենցիալ վայրերը և տեսակները՝ ելնելով քաղաքի համար դրանց նպատակահարմարությունից • Բաժանել պոտենցիալ գովազդային տեղերը լոտերի և հայտարարել մրցույթ գովազդային կազմակերպությունների միջև • Նախատեսվում է իրականացնել մրցութային կարգով գովազդային նոր վահանակների տեղադիրների լոտերի սահմանման նախապատրաստական աշխատանքներ	Համայնք	2022թ. ապրիլ-դեկտեմբեր	

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2021**
Քաղաքային նշանակության այգի	միավոր	86
Կանաչապատ տարածքներ	հա	6760
Ընդհանուր օգտագործման կանաչապատ, այդ թվում՝ ընդլայնված և բարելավված տարածք	հա	869
Տնկված ծառատեսակներ	հատ	7590
Տնկված թփեր, այդ թվում կենդանի ցանկապատ	հատ	75000
Տնկված ծաղիկներ (վարդեր, միամյա և բազմամյա ծաղկատեսակներ)	հատ	53000
Ծառերի և թփերի քարտեզագրման աշխատանքներ	հատ	23100
Մեկ բնակչին բաժին ընկնող կանաչապատ տարածք	ք.մ	8
Կանաչ տարածքների գույքագրում	ք.մ.	500000
Ծառերի և թփերի գույքագրում	հատ	23000
Ոռոգման ցանցի երկարություն	կմ	321
Ոռոգման ցանցի նոր կառուցված ջրագիծ	մ	3630
Հավաքված թափառող շներ	հատ	2520
Ստերջացված թափառող շներ	հատ	2099
Կատաղության դեմ պատվաստումներ	հատ	2099
Քնեցված թափառող շներ	հատ	375
Որդեգրված շներ	հատ	144

Երևան քաղաքի բնապահպանական քաղաքականության հիմնական նպատակը մայրաքաղաքի շրջակա բնական միջավայրի պահպանությունը, պաշտպանությունը և բարելավումն է՝ քաղաքային տնտեսության կայուն, առողջ և համաչափ զարգացման և բնակչության բարեկեցության ապահովման համար:

Երևան քաղաքում շրջակա միջավայրի կառավարումը պայմանավորված է դրա հիմնական բաղկացուցիչ տարրերի՝ հողային ռեսուրսների, մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների և կենսաբազմազանության մշտադիտարկման, դրանց վիճակի բարելավման ուղղությամբ ՀՀ օրենսդրությամբ վերապահված գործառույթների հետևողական իրականացման մակարդակով:

Երևանի կենսաբազմազանությունը սերտորեն կապված է բնապահպանական ակտիվների որակի, ինչպես նաև կանաչ տարածքների գոյության հետ: Քաղաքային կանաչ տնկարկների վրա անթրոպոգեն գործոնների ազդեցության բարձր աստիճանը (ուրբանիզացված տարածքներին բնորոշ), առկա ծառատեսակների մեջ ոչ արժեքավոր տեսակների գերակշռումը, ծեր և հիվանդ ծառերի մեծ զանգվածն օրինաչափորեն հանգեցնում են բուսականության վիճակի վատթարացմանը, հիվանդություններով և վնասատուներով վարակմանը և տնկարկների աստիճանական ոչնչացմանը: Արդյունքում, մթնոլորտում գազերի, փոշու և ծխի բարձր պարունակությունները, ինչպես նաև օդի և հողի ջերմային և ջրային ռեժիմների առանձնահատկությունները բացասաբար են ազդում բնակչության կենսունակության և առողջության վրա:

Ներկայումս Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցություն առաջացնող շուրջ 671 կազմակերպություն: Մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման

հիմնական պատճառներից են նաև Երևան քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները, որոնց թիվը կազմում է շուրջ 600000, հրդեհները, կենցաղային և արդյունաբերական աղտոտումը, հողատարումները, հողի էրոզիան, կանաչ տարածքների կրճատումը և այլն:

Նշված գործոնների ազդեցությամբ է պայմանավորված ածխաթթու գազի արտանետումների ավելացումը մոտ 10 անգամ, ինչը կլիմայի փոփոխության հիմնական գործոններից է: Համաձայն կանխատեսումների, մինչև 2100 թվականը ջերմաստիճանը կբարձրանա 1.7°C, իսկ տեղումների մակարդակը կնվազի 10 մմ-ով:

Կանաչապատ տարածքների բարելավման և ընդլայնման, մթնոլորտային օդի աղտոտման նվազեցման և հողապաշտպան միջոցառումների իրականացման նպատակով ներկայումս քաղաքը որդեգրել է հետևյալ գիտահեն քաղաքականության իրագործումը.

1. կայուն և արժեքավոր ծառատեսակների ընտրություն՝ գազի, փոշու, ծխի և այլ աղտոտիչների նկատմամբ,
2. գեղազարդ և մշտադալար ծառատեսակների ընտրություն՝ հաշվի առնելով դրանց տնկման տարածքի միկրոկլիմայական և էկոլոգիական պայմաններն ու առանձնահատկությունները,
3. հողերի աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումներ՝ թփաշերտով մեկուսացում փողոցին հարող տարածքից,
4. կանաչ ցանկապատերի ներդրման մշակույթ տարբեր հարկաշարքային բուսականության տեղադրությամբ,
5. միամյա մեծաքանակ ծաղիկների փոխարինումը բազմամյա և սեզոնային հերթագայմամբ ծաղկող թփերով՝ լանդշաֆտային ճարտարապետական նախագծերի իրականացմամբ:

2021 թթ. տնկվել են շուրջ 7700 ծառեր, 75.000 պատնեշային և սեզոնային հերթագայմամբ ծաղկող թփեր Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում: Բարեկարգվել և կանաչապատվել են Երևան քաղաքի խոշոր այգիներից Քանաքեռ ՀԷԿ-ի այգին, Նոր Արաբկիր զբոսայգին, Մ. Սարյանի անվան պուրակը և Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածը: Ներկայումս մեկնարկել է Խ. Աբովյանի անվան պուրակի բարեկարգման և կանաչապատման աշխատանքները, որը նախատեսվում է ավարտել 2022 թ.-ին: Կանաչապատման մեծաքանակ աշխատանքներ են իրականացվել Եռաբլուրի լանջերում, Սիրո և հավատի այգում, Վերածնունդի այգում, վերականգնվել և ստեղծվել են նոր սիզամարգեր: Սարալանջի և Ծիծեռնակաբերդի տարածքներում իրականացվել է ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ, որտեղ ներկայումս կանաչապատման նախապատրաստական աշխատանքներ են ընթանում: Ներկայումս մասնագիտական գործիքների միջոցով իրականացվում է կանաչ տարածքների գույքագրման աշխատանքներ, որի շրջանակներում գույքագրվել են շուրջ 500000 քառ.մ. կանաչ տարածք, 23000 ծառեր և թփեր: Այս աշխատանքների միջոցով հնարավոր կլինի հստակ և թվային տեղեկատվություն ունենալ կանաչ տարածքների վիճակի վերաբերյալ, որն էլ կնպաստի կանաչ տարածքների առավել արդյունավետ խնամքին և սպասարկմանը, նոր կանաչ տարածքների ստեղծմանը:

Մայրաքաղաքի կլիմայական և օրեցօր վատթարացող բնապահպանական պայմանների նկատմամբ բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակով կարևորվում են Երևան քաղաքում բուֆերային գոտիների պահպանումը, վերականգնումը և ավելացումը: Այդ նպատակով 2019թ. Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվել են Սիլիկյան թաղամասի, Նուբարաշենի և Ջրաշխարհի աջակողմյան հատվածի լանջի անտառպաշտպանիչ գոտիների նախագծման աշխատանքներ, որոնք նախատեսվում է իրականացնել 2022 թվականին: Այն կնպաստի ընդհանուր էկոլոգիական վիճակի բարելավմանը՝ միաժամանակ մեղմելով տարածքի կլիմայական պայմանները, նվազեցնելով հողի սողանքները, էրոզիոն երևույթները, քամիների բացասական ազդեցությունը: Բուֆերային գոտիների ստեղծման շրջանակներում նախատեսվում է իրականացնել նոր ոռոգման ցանցի, ջրավազանի և պոմպակայանի ստեղծում, ծառերի, թփերի տնկում և այլ աշխատանքներ: Երևանի քաղաքապետարան և մասնավոր համագործակցության արդյունքում նախատեսվում է շուրջ 11 հա բուֆերային

անտառաշերտ ստեղծել Տիչինայի 320 և 322 հասցեների հարակից տարածքում, որով կառանձնացվի նոր կառուցվող թաղամասը գերեզմանատներից:

Կանաչապատման նորարական մոտեցումները ներդրվում են նաև Երևանի քաղաքապետարան ներկայացվող կանաչապատման նախագծերում, որտեղ կանաչապատման նախագծերի ներկայացման պարտադիր պահանջներ են համարվում պատնեշային և ծաղկող թփերի առկայությունը, ինչպես նաև էկոլոգիապես կայուն և մեր տարածքի կլիմային առավելապես հարմարված ծառատեսակների ընտրությունը, ինչը կարող է առավել արդյունավետ դարձնել ծառերի և թփերի էկոհամակարգային ծառայությունները:

Կանաչ տարածքների բարելավման և ընդլայնման նախապայման է հանդիսանում ոռոգման ցանցի կառուցումը և արդիականացումը: 2019-2020 թվականներին իրականացվել է Երևան քաղաքի ոռոգման ցանցի գույքագրում, որի արդյունքում պարզվել է, որ ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 321 կմ, որից շուրջ 70 կմ-ը գտնվում է վթարային, 9 կմ՝ խցանված, 152 կմ՝ մաշված և միայն 90 կմ է գտնվում նորմալ վիճակում: Ոռոգման ցանցի վերակառուցումը, արդիականացումը, ինչպես նաև ոռոգման նոր ջրագծերի կառուցումը հրատապ խնդիրներ են: 2021 թվականին վերանորոգվել և կառուցվել է շուրջ 30 կմ ջրագիծ, ներդրվել են ոռոգման նոր մեթոդներ, կառուցվել է Եղվարդի խճուղու նոր ջրատարը (1954 գծ.մ), ինչը հնարավորություն կտա գրավիտացիոն եղանակով ոռոգել Ծիծեռնակաբերդի ավելի քան 100 հա տարածքը: Պոմպակայաններում տեղադրվել են թվով 7 նոր պոմպեր և թվով 3 շարժիչներ: Կազմվել է նաև Նորքի ջրանցքից Բաբայան փողոցով դեպի Հաղթանակ զբոսայգի նոր ջրագծի կառուցման նախագիծը, որը ներկայումս գտնվում է կառուցման փուլում: Դա հնարավորություն կտա պատշաճ ձևով ոռոգել միաժամանակ և՛Հաղթանակ զբոսայգու, և՛ Սարալանջի նոր ստեղծվող կանաչ տարածքները: 2020-2021 թթ կառուցվել են Իտալիայի, Բեյրութի, Մինսկի փողոցների և Ծիծեռնակաբերդի համայնքային 8.5 հա տարածքի ոռոգման ջրագծերը: Կազմվել է նաև Ա. Խաչատրյանի ոռոգման ջրագծի նախագիծը, որը նախատեսվում է իրականացնել 2022 թվականին: 2022 թվականին կվերակառուցվի և կստեղծվի շուրջ 30 կմ ոռոգման ցանց: Նոր ջրագծերի կառուցումը թույլ է տալիս զգալիորեն կրճատել ջրցանների կիրառումը, ինչը ծախսատար պրակտիկա է:

Շրջակա միջավայրի վրա ոչ պակաս ազդեցություն ունի մայրաքաղաքի ջրային ավազանի էկոլոգիական վիճակը, որի հիմնական բաղադրիչներն են հանդիսանում Երևանյան լիճը, Հրազդան գետը և Գետառը: Ներկայումս Հրազդան գետի և Երևանյան լճի աղտոտվածությունը հիմնականում պայմանավորված է մեծ քանակությամբ կենցաղային և պոլիէթիլենային աղբի, ներհոսող կոմունալ-կենցաղային և գյուղատնտեսական կեղտաջրերի շնորհիվ տարբեր քիմիական տարրերի ՍԹԿ նորմերի նկատմամբ բարձր պարունակությունների առկայությամբ:

Երևանի քաղաքապետարանը 2021թ. իրականացրել է Երևանյան լճի և Հրազդան գետի շուրջ 15 հա ափամերձ հատվածի վնասակար ճահճային բուսականության ոչնչացման, կենցաղային աղբի մաքրման ծրագիր, ինչպես նաև նախագծվել են աղբարոսիչ միջոցառումներ՝ Հրազդան գետի վրա տեղադրելով լողացող մարմինները հավաքող ճաղավանդակներ: Երևանի ավագանու կողմից 2021 թվականի մայիսի 25-ի N383-Ա որոշմամբ հաստատվել է «Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը, որով նպատակ է հետապնդվում մաքրել Երևանյան լճի և Հրազդան գետի առափնյա տարածքները կենցաղային աղբից և արտադրական թափոններից, բարեկարգել հարակից տարածքը և ռեկրեացիոն գոտին վերածել Երևան քաղաքի սիրված ու հաճելի այցելության վայրերից մեկը: Ծրագիրն ունի էկոհամակարգի և կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև ռեկրեացիոն գոտու առողջապահական նորմերի ապահովման ուղղվածություն: Ուսումնասիրություններ են իրականացվում Գետառի Հրազդան գետ թափվող հատվածում տեղային փոքր կեղտաջրերի մաքրման կայանի

կառուցման հնարավորությունների վերաբերյալ, որի համար 2022 թվականին նախատեսվում է համապատասխան նախագծային լուծման առաջադրում:

Կենսաանվտանգության ապահովման առումով Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում են Երևան քաղաքում թափառող կենդանիների գլխաքանակի կառավարման վերահսկման և զոոնոտիկ հիվանդությունների տարածման կանխարգելման աշխատանքներ 2019թ փետրվարի 12-ին N 63-Ա ավագանու որոշմամբ ստեղծված «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ) կողմից: ՀՈԱԿ-ի գործառույթներն են այդ կենդանիների հավաքումը, տեղափոխումը, նախնական զննումը, պատվաստումը, ստերջացումը և համարակալումը: 2021 թթ. ընթացքում Երևան քաղաքում հավաքվել են շուրջ 2520 թափառող կենդանիներ, ստերջացվել՝ 2099-ը և քնեցվել՝ 375-ը, որդեգրվել՝ 144-ը:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 14-ի N 442-Ն որոշման 4-րդ կետի 11-րդ ենթակետի, Երևան քաղաքի բոլոր 12 վարչական շրջանների տարածքներում պետք է առանձնացվեն շների զբոսանքը կազմակերպելու համար վայրեր: Ներկայումս ավարտվել են բոլոր վարչական շրջաններում թվով 12 զբոսայգիների նախագծման աշխատանքները, որտեղ իրականացվելու են զբոսայգիների ցանկապատման և կահավորման աշխատանքներ՝ միջազգային փորձին համապատասխան: 2021թ. կառուցվում են թվով 2 զբոսայգիներ, իսկ 2022 թվականին կշարունակվեն թվով 9 զբոսայգիների կառուցման աշխատանքները:

Հաշվի առնելով Երևան քաղաքի աղտոտվածության բարձր մակարդակը՝ Երևանի քաղաքապետարանի կողմից մշակվել է հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելման ու նվազեցմանն ուղղված քաղաքականություն և 2022թ. Երևանի քաղաքապետարանի կողմից նախատեսվում է իրականացնել հողերի գույքագրման և հողերի բարելավման աշխատանքներ:

Թափոնների կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում է Երևան քաղաքի տարածքում թափոնների տեսակավորման պիլոտային ծրագիրը, որի ծավալները նախատեսվում է ընդլայնել:

Հիմնախնդիրներ՝

1. Մայրաքաղաքի հնացած, հիվանդ, չոր, տապալման ենթակա և/կամ ինվազիվ ծառերի փոխարինում առավել գեղազարդ, արժեքավոր ծառատեսակներով,
2. Ներհամայնքային ոռոգման ցանցի ընդլայնում և բարեկարգում,
3. Մայրաքաղաքի տարբեր հատվածներում բուֆերային անտառաշերտի ստեղծում, կանաչ տարածքների ավելացում,
4. Կենցաղային աղբի տեսակավորման, աղբի վերամշակման ապահովման մշակույթի ձևավորում,
5. Հրազդան գետի և Գետառ վտակի ջրերի որակի բարելավման միջոցառումներ:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Երևանի ջրային ավազանի էկոլոգիական վիճակի բարելավում	Աշխատանքների իրականացման համար մրցույթում հաղթած կազմակերպությունների հետ	Երևանյան լճի և Հրազդանի կիրճի մաքրում տարատեսակ աղբից ու թափոններից:	Բնակչություն	2022-2023թթ	Մասամբ պետական բյուջե և մասամբ համայնքային բյուջե
2	Նոր Նորք վարչական շրջանի Ջրաշխարհի աջակողմյան լանջին կանաչ տնկարկներով պաշտպանիչ շերտի ստեղծում		Շուրջ 12 հա անտառպաշտպանիչ գոտու հիմնում:			
3	Յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող կանաչ մակերեսի ավելացում և բարելավում:		Որակյալ կանաչ տարածքների ավելացում:	Երևան քաղաքի բնակչություն, զբոսաշրջիկներ, հյուրեր, այցելուներ:		
4	Բազմամյա ծաղկասածիլներով համալրված ծաղկանոցներ և ճանապարհի փոշու և աղտոտիչ նյութերի, աղմուկի կլանման նկատմամբ պաշտպանիչ և տարանջատող շերտ հանդիսացող կանաչ ցանկապատերի ստեղծում		Ճանապարհի նկատմամբ պաշտպանիչ և տարանջատող շերտի ստեղծում՝ գազակլանիչ, գեղատեսիլ և ծաղկող թփերով:	Բնակչություն		Երևան համայնքի բյուջե

5	Կանաչապատման սակավ հնարավորությամբ տարածքներում կիրառել այլընտրանքային կանաչապատում՝ Երևան քաղաքի ինտենսիվ կառուցապատման պայմաններում կանաչապատման ոլորտում հույժ կարևոր միջոցառում հանդիսացող ուղղաձիգ կանաչապատման կիրառմամբ:	Ծրագիրն ամբողջությամբ կիրականացվի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի միջոցով՝ համաձայն սահմանված սկզբունքների:	Կանաչ զանգվածի ավելացում կանաչ պատի միջոցով:			
6	Երևան քաղաքի կանաչ տարածքների գույքագրում, ԱՏՀ հենքով տվյալների բազայի ստեղծում:	Ծրագիրն ամբողջությամբ կիրականացվի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի միջոցով՝ համաձայն սահմանված սկզբունքների:	Ունենալ լրացված ոռոգման ցանցի, ծառերի անձնագիր յուրաքանչյուր փողոցի, զբոսայգու, պուրակի և անտառպուրակի համար:			Երևան համայնքի բյուջե
7	Կանաչ տարածքների խնամքի և ծառատնկման համար ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում		Ձեռք բերել կանաչապատման ծառայությունների համար տեխնիկա:			
8	Ոռոգման ցանցի վերակառուցում		Կվերակառուցվի և կստեղծվի շուրջ 30 կմ ոռոգման ցանց:			
9	Շների զբոսանքի համար զբոսայգիների ստեղծում	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մրցույթում հաղթող ճանաչված, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների, բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ:	Ստեղծել և կահավորել շների համար նախատեսված թվով 9 զբոսայգի			

10	Երևան քաղաքում աղբի տեսակավորում	Ծրագիրն ամբողջությամբ կիրականացվի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի միջոցով՝ համաձայն սահմանված սկզբունքների:	Վերամշակման ենթակա աղբը տարանջատել ընդհանուր աղբից, վերամշակման միջոցով նվազեցնելով աղբի ծավալը և նպաստելով շրջակա միջավայրի պահպանությանը աղտոտումից: Իրականացնել աղբի տեսակավորման վերաբերյալ իրազեկման միջոցառումներ:			
11	Գետառի ջրի որակի բարելավման միջոցառումներ	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մրցույթում հաղթող ճանաչված, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների, բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ:	Գետառի ջրի որակի բարելավման միջոցառումների, այդ թվում՝ կեղտաջրերի մաքրման կայանի վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում	Երևան քաղաքի բնակչություն, զբոսաշրջիկներ, հյուրեր, այցելուներ:		Երևան համայնքի բյուջե

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**ք. Երևան**	
	Չափի միավոր	**2021**
Բնակչություն	մարդ	1.091.747
Տղամարդ	մարդ	504770
Կին	մարդ	586977
Երեխաներ	մարդ	252633
Տղա	մարդ	132578
Աղջիկ	մարդ	120055
Կենսաթոշակայիններ	մարդ	187793
Հաշմանդամություն ունեցող	մարդ	57173
Տղամարդ	մարդ	29.573
Կին	մարդ	27.600
Երեխաներ	մարդ	2.560
Տղաներ	մարդ	1.680
Աղջիկներ	մարդ	880

2022թ. զարգացման ծրագիրը հիմնված է ՀՀ կառավարության 2019-2023թթ. ծրագրի առաջնահերթությունների վրա, որը նախանշված է երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտներում:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Երևան համայնքը աջակցում է մայրաքաղաքում պետական սոցիալական ծրագրերի իրագործմանը, ինչպես նաև կազմակերպում և իրականացնում է տեղական և անհատական սոցիալական ծրագրերի մշակումը, իրականացնում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառումը: Իրականացվող աշխատանքների ռազմավարությունն ուղղված է մայրաքաղաքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորմանն ու պահպանմանը:

Երեխաների պաշտպանության ոլորտում բարեփոխումների նպատակն է իրականացնել երեխաների պաշտպանության համակարգի և նրանց իրավունքների գործում իրացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծման համալիր միջոցառումներ՝ հիմնվելով նախորդ փորձառության, ինչպես նաև առաջնորդվելով երկրի միջազգային հանձնառություններով և ոլորտում գործող միջազգային պարտավորություններով, իսկ սոցիալական պաշտպանության ոլորտում՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավմանը, սոցիալական իրավունքների լիարժեք և արդյունավետ իրացմանը՝ հիմնված հավասար հնարավորությունների և աշխատանքի քաջալերման սկզբունքի վրա: Այս համատեքստում Երևանի քաղաքապետարանում Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի N258-Ա որոշմամբ ստեղծվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը՝ սոցիալական ապահովության վարչության և ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի փոխարեն: Նոր համակարգի ներդրման երկրոդ փուլը մեկնարկել է 2021թ.-ին, որի արդյունքում 12 վարչական շրջանների սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների փոխարեն նախատեսվում է ստեղծել երեխաների, սոցիալական պաշտպանության և առողջապահության բաժիններ: Գործընթացը շարունակվելու է 2022թ.-ին և նոր բաժինների ստեղծմամբ ներդրվելու է հոգեբանի ու սոցիալական աշխատողի հաստիքներ:

Նոր համակարգը ներդնելու արդյունքում առաջնային կդիտարկվեն սոցիալական պաշտպանության ոլորտում ավելի արդյունավետ կառավարումը՝ մասնավորապես, համապատասխան գործիքակազմի, ֆինանսական, մոնիթորինգի և գնահատման մեխանիզմների ձևավորումը: Այս գործընթացների համար կարևոր է պետական մարմինների, Երևանի քաղաքապետարանի, միջազգային և հասարակական կազմակերպությունների ու մասնավոր հատվածի համագործակցությունը, ինչպես նաև ժամանակակից և արդյունավետ տեղեկատվական ու մարդկային ռեսուրսների կառավարման համակարգերի առկայությունը:

2022թ.-ին Երևան համայնքում սոցիալական պաշտպանության ոլորտում կիրականացվի ավելի արդյունավետ կառավարում և նոր մեխանիզմների ձևավորում:

Հարկ է նշել նաև, որ հաշվի առնելով բազմաչափ աղքատությունը, ինչը հիմնված է զրկանքների առկայության վրա, օրինակ՝ բնակարանային պայմանների բացակայություն, որակյալ ծառայությունների անմատչելիություն կամ կրթության հնարավորությունների բացակայություն, ընտանիքները և երեխաները դառնում են ավելի խոցելի և պահանջում են թիրախավորված լուծումներ իրենց ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքն ապահովելու համար:

Աղքատության վրա ազդող գործոններն ուղղակի կապ ունեն աղքատության մակարդակի և տնային տնտեսությունում երեխաների թվի հետ. որքան շատ է երեխաների քանակը, այնքան բարձր է աղքատության մակարդակը և աղքատության ու ծայրաստիճան աղքատության մեջ հայտնվելու ռիսկը:

Աղքատության հաղթահարման լավագույն և արժանապատիվ միջոցը աշխատանքն է: Սակայն, գործազրկության մակարդակը 2020թ. տվյալներով կազմել է մայրաքաղաքի աշխատունակ տարիքի բնակչության շուրջ 19.8%-ը: Սակայն հաշվի առնելով երկրում ստեղծված իրավիճակը՝ պայմանավորված COVID-19-ով և պատերազմական իրավիճակով, գործազրկության հետ կապված խնդիրներն ավելի բազմաշերտ են դարձել և պահանջում են համակարգային լուծումներ:

Երևանի քաղաքապետարանը՝ որպես երեխաների պաշտպանության ոլորտում քաղաքականության կիրառող, աջակցություն է իրականացնում ապաինստիտուցիոնալացման և երեխայի խնամքի այլընտրանքային ձևերի զարգացմանը՝ կարևորելով նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման անհրաժեշտությունը և նրանց խնամքն ընտանեկան միջավայրում կազմակերպելը:

Խնամատարության նոր ընթացակարգով սահմանված մասնագիտացված խնամատարության համակարգը հնարավորություն է ստեղծում հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքը ընտանիքներում կազմակերպելու համար: Ճգնաժամային /օրինակ՝ պատերազմի ժամանակ/ և արձակուրդային խնամատար ինստիտուտի միջոցով արագ արձագանքման մեխանիզմ է ներդրվում խնամքի հաստատություն երեխայի մուտքը կանխարգելելու, ինչպես նաև փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորումն ապահովելու նպատակով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի դրույթներով ամրագրված պահանջներին համաձայն՝ Երևան քաղաքում որդեգրողների, խնամատար ծնողների, խնամակալների կամ հոգաբարձուների ընտանիքներում դաստիարակության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ իրականացվող մշտադիտարկումը նպաստում է երեխայի իրավունքի ոտնահարման կանխարգելմանը:

Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման համալիր ծրագրի նպատակն է՝ ամրագրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների՝ իրենց կենսաբանական ընտանիքներում ապրելու իրավունքի իրացմանն ուղղված և դրա անհնարինության դեպքում, ընտանեկանին մոտ այլընտրանքային խնամքի ծառայությունների տեսականու և ցանցի ընդլայնումն ապահովող համապարփակ միջոցառումների ցանկը, սահմանել դրանց կատարման համար պատասխանատու մարմինները, կատարման ժամկետները, ֆինանսավորման աղբյուրները, թիրախներն ու արդյունքները առաջիկա տարիների համար:

Երևանի քաղաքապետարանը, որպես երեխաների պաշտպանության ոլորտում քաղաքականության կիրառող, աջակցություն է իրականացնում ապաինստիտուցիոնալացման և երեխայի խնամքի այլընտրանքային ձևերի զարգացմանը՝ կարևորելով նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման անհրաժեշտությունը և նրանց խնամքն ընտանեկան միջավայրում կազմակերպելը:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ապահովման ուղղություններն են՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և արժանապատվությունը, նրանց լիակատար ներառումը հասարակության մեջ, մատչելի պայմանների, որակյալ ծառայությունների առկայությունը և դրանցից օգտվելու հնարավորությունները: Սոցիալական ծրագրերում առաջնահերթություն է տրված ԼՂՀ պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների:

Հաշվի առնելով հայրենադարձ և փախստական ընտանիքների /այդ թվում Արցախից տեղահանված/ սոցիալական խնդիրները՝ նախատեսվում են ըստ կարիքի սոցիալական ծրագրերի իրականացում, որոնք առաջին հերթին ուղղված կլինեն նրանց ինտեգրմանը:

Երևան համայնքը խիտ բնակեցված լինելու պատճառով առանձնանում է իր սոցիալական խնդիրներով: Եվ թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով աջակցություն կտրամադրվի բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքներին պատկանող խմբերին:

Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում գործող սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգը բավարար չէ և տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունները Երևան համայնքում բաշխվել են անհամաչափորեն, ինչպես նաև խնամքի կարիք ունեցող տարեցներին մատուցվող սոցիալական և առողջապահական ծառայությունների որակը եղել է ոչ բավարար և անմատչելի: Տարեցների իրազեկվածությունը սեփական իրավունքների և գործող ծառայությունների վերաբերյալ եղել է ցածր: Հաշվի առնելով վերոնշյալը՝ տարվելու են աշխատանքներ՝ ուղղված տարեցների սոցիալական խնդիրների լուծմանը:

Սոցիալական կարևորագույն խնդիր է նաև անօթևանների հետ տարվող աշխատանքում առաջացող դժվարությունները՝ օրենսդրական բացերի և ծառայությունների կազմակերպման հետ կապված տեխնիկական խնդիրների պատճառով: Այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում Երևան համայնքի, ՀՀ ԱՍՀ նախարարության, ՀՀ ոստիկանության հետ: Չնայած տարվող աշխատանքներին՝ դեռևս չլուծված են մնում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անօթևան անձանց խնդիրները:

Արդիական է նաև արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին /օրինակ՝ COVID, ռազմական դրության, շենքերի փլուզման և այլն/ աջակցության տրամադրումը:

Հիմնախնդիրներ՝

1. Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության արդյունավետ կառավարման համակարգի ներդրման՝ ներառյալ սոցիալական աշխատանքի, տեղական սոցիալական պլանավորման, սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման գործառույթների ուժեղացման, ինչպես նաև համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով՝ թվայնացման և ֆինանսավորման անհրաժեշտություն:
2. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխաների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման անհրաժեշտություն:

3. Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովման համալիր աջակցության անհրաժեշտությունը երեխաների կենսաբանական ընտանիքներին՝ որպես առաջնահերթություն դիտելով երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպումը, ինչպես նաև խնամքի ձևերի աջակցման ու ընդլայնման անհրաժեշտությունը՝ այդ թվում որդեգրման, խնամատարության և խնամակալության միջոցով:
4. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավման ուղղությամբ նպատակային ծրագրերի, ինչպես նաև ծառայությունների պատվիրակման մեխանիզմների մշակման, կազմակերպման և իրականացման անհրաժեշտություն:
5. Համագործակցության շրջանակներում բնակչության զբաղվածության խթանում՝ սոցիալական գործընկերության և ձեռներեցության միջոցով:
6. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության, սոցիալական ներառմանն ուղված ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:
7. Արժանապատիվ ծերացմանն ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտություն՝ ներառյալ որակյալ սոցիալական ծառայությունների ընդլայնում:
8. Հայրենադարձ և փախստական ընտանիքների համար, հասարակական ինտեգրման նպատակով թիրախային ծրագրերի մշակման և իրականամա անհրաժեշտություն:
9. Անօթևանների աջակցության նպատակով սոցիալական ծառայությունների տրամադրման մեխանիզմների մշակման և իրականացման անհրաժեշտություն:
10. Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրված նոր համակարգի շարունակական զարգացում՝ արդյունավետ կառավարման նպատակով	Համապատասխան ոլորտի գերատեսչություններ, միջազգային, հասարակական կազմակերպություններ այլն:	Երեխաների և սոցիալական պաշտպանության նոր համակարգի տեղայնացման ընթացքում առաջացած և վեր հանված խնդիրների լուծման համար համայնքային ծառայողների, սոցիալական աշխատողների համար անհրաժեշտ է՝ 1.1 մասնագիտական վերապատրաստումների շարունակական իրականացում /մշակված մոդուլին համապատասխան/, սուպերվիզիայի իրականացում 1.2 նյութատեխնիկական միջոցների ապահովում 12 վարչական շրջանների համապատասխան բաժինների աշխատակիցների համար: 2. Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի վերաբերյալ՝ 2.1 հանրային իրազեկման միջոցառումների, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացմանը միտված աշխատաժողվների կազմակերպում: 2.2 համակարգի ներդրման համար անհրաժեշտ ընթացակարգերի մշակում (օրինակ էլեկտրոնային հարթակ, տեղական սոցիալական	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական պաշտպանության ոլորտի աշխատակիցներ, համայնքային ծառայության սոցիալական ոլորտի դերակատարներ, սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներ:	2022թ. ընթացքում	Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված միջոցներ

			ծրագրեր, մշտադիտարկում, փորձագետների ներգրավում և այլն): Տնտեսավարման և ծնողավարման հմտությունների զարգացման մոդուլների մշակում և վերապատրաստումների կազմակերպում՝ ուղղված սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին:			
2	Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն	Համապատասխան ոլորտի գերատեսչություններ, միջազգային, հասարակական կազմակերպություններ այլն:	1. Քաղաքային մշակութային միջոցառումներում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ներգրավում: 2.Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար միասնական պրակտիկայի ձևավորման նպատակով իրազեկում /2 օր տևողությամբ վերապատրաստումների կազմակերպում/:	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներ, վարչական շրջանների աշխատակիցներ:	2022թ. ընթացքում	Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված միջոցներ
3	Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովում		Մանկալքության կանխարգելման նպատակով ծառայությունների մատուցման համատեքստում սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում, այդ թվում՝ կացարանի և կոմունալ վճարների փոխհատուցում/3 ամիս/:	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներ, ծնողներ, օրինական ներկայացուցիչներ:		
4	Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում		1.Երևան համայնքում տարբեր սոցիալական խմբերի համար որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպումը նախատեսում է՝	Սոցիալական աջակցության կարիք ունեցող տարբեր սոցիալական խմբեր:		

			1.1 անօթևանների համար նախատեսված շուրջօրյա խնամքի կենտրոն /մինչև 3 ամիս/ 1.2 հաշմանդամության խումբ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի կենտրոն /օր. հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ մինչև 3 ամիս/ 1.3 սոցիալական աջակցության և ներառական կրթության կարիք ունեցող երեխաների աջակցություն / օր.՝ ցերեկային կենտրոն մինչև 6 ամիս/ 1.4 տարեցների շուրջօրյա խնամքի կենտրոն /մինչև 3 ամիս/ 1.5 պատերազմից տուժած ընտանիքներին / վիրավոր, զոհված, գերեվարված, անհետ կորած, զինծառայողների ընտանիքներին/ սոցիալական աջակցության տրամադրում /օր.՝ հոգեթերապևտիկ աջակցություն՝ այդ թվում մեկ նախնական կոնսուլտացիա և յոթ հերթական հանդիպում/ 1.6 ըստ կարիքի սոցիալական ծառայությունների մատուցում /օր.՝ սոցիալական տաքսի/ Ծրագրերն իրագործվելու են որպես տեղական սոցիալական ծրագիր և իրականացվելու են համաֆինանսավորմամբ:			
5	Հայրենադարձ և փախստական ընտանիքներին աջակցություն	Համապատասխան ոլորտի գերատեսչություններ, միջազգային,	1. Կարիքների գնահատման արդյունքում փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքներին աջակցության տրամադրում	Երևան համայնքում բնակություն հաստատած հայրենադարձ և փախստական	2022թ. ընթացքում	Երևան համայնքի բյուջե, օրենքով

		հասարակական կազմակերպություններ այլն:	2. Փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքներին ձմռան ամիսներին առաջացած խնդիրների լուծման նպատակով կոմունալ վարձերի մասնակի փոխհատուցում /1 ընտանիքին 4 ամիս/	ընտանիքներ /համապատասխան կարգավիճակի առկայություն/:		չարգելված միջոցներ
6	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն		1.Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն /օրինակ՝ COVID, պատերազմ և այլն/: 2. ԿԴԻՀ ընտանիքներին ծառայությունների մատուցման շրջանակում կացարանի ժամանակավոր տրամադրում /մինչև 3 ամիս/:	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերից տուժած անձինք/ ընտանիքներ /շահառուների թիվն ըստ իրավիճակի/:		
7	Հասարակական կազմակերպություններին աջակցություն	Համապատասխան ոլորտի գերատեսչություններ, միջազգային, հասարակական կազմակերպություններ այլն:	1.Դրամական օժանդակություններ սոցիալական հիմնահարցերով զբաղվող ՀԿ-ներին: 2. Համագործակցության շրջանակներում սոցիալական գործընկերություն և ձեռներեցություն՝ զբաղվածության խթանման նպատակով /պատերազմի մասնակից և սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներ/	Համագործակցող կազմակերպությունե, սոցիալական աջակցության կարիք ունեցող անձինք/ ընտանիքներ:	2022թ. ընթացքում	Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված միջոցներ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Երևանը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային շուկայում կարևոր դեր և նշանակություն ունի, այն ոչ միայն բազային զբոսաշրջային կենտրոն է հանդիսանում, այլև պետության հիմնական մշակութային և զբոսաշրջային ենթակառուցվածքների կենտրոն: Միջազգային զբոսաշրջային հոսքերը (ներգնա և արտագնա) ՀՀ-ում վերջին երկու տասնամյակում կայուն աճել են: Հաշվի առնելով նախորդ տարիների աճի տեմպերը՝ կանխատեսվում էր, որ 2020 թ. ներգնա զբոսաշրջիկների քանակը կգերազանցեր 2 մլն-ը, սակայն, COVID-19-ով պայմանավորված իրավիճակի հետևանքով, ներգնա և արտագնա զբոսաշրջիկների քանակը կտրուկ նվազեց 2020 թ.-ին: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2021 թ. հունվար-հունիս ամիսներին Հայաստան է ժամանել 488,558 զբոսաշրջիկ: Զբոսաշրջային ծառայությունների արագ աճող պահանջարկը վերջին տարիներին հանգեցրեց հյուրանոցների թվի աճին:

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների՝ 2020 թվականի դրությամբ Երևան քաղաքում գործում է 480 ՀՏՕ (հյուրանոցային տնտեսության օբյեկտ): Երևան քաղաքում գործում են զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման երկու կենտրոններ, որոնք այցելուներին անվճար տրամադրում են Երևանի բազմալեզու քարտեզներ, համայնքային թանգարանների, «Երևան Սիթի Տուր» էքսկուրսիոն ծրագրի, Կենդանաբանական այգու, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային ծառայությունների, բնակիչների ընդունելության ժամանակացույցի, «Թեժ գիծ» ծառայության վերաբերյալ տեղեկատվական բրոշյուրներ:

Մայրաքաղաքի զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնները 2021 թվականի հունվարից մինչև սեպտեմբեր սպասարկել են 4560 այցելու (հիմնականում ՀՀ, ՌԴ, ԻԻՀ քաղաքացիներ):

Հիմնախնդիրներ՝

1. Երևան քաղաքի զբոսաշրջային բրենդի բացակայություն
2. Երևանում թեմատիկ երթուղիների բացակայություն
3. Երևանի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի ոչ բավարար չափով գովազդում և ներկայացում միջազգային շուկայում
4. Զբոսաշրջության ոլորտի ենթակառուցվածքների շարունակական զարգացում և արդիականացում

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանս ավորման աղբյուր**
1	Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման բրենդի մշակում	ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտե, զբոսաշրջության ոլորտը ներկայացնող կազմակերպություններ	Նախատեսվում է ծրագիրն իրականացնել բաց մրցույթների և հանրային քննարկումների միջոցով, որի արդյունքում կընդունվի լավագույն առաջարկը: Այս ծրագիրը հնարավորություն կտա շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ ձևավորել Երևանի՝ որպես կազմակերպված հանգստի, զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ քաղաքի նկարագիր և ճանաչելի դարձնել Երևանը միջազգային զբոսաշրջային շուկայում:	Բնակրություն, զբոսաշրջիկներ	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե
2	Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում	Միջազգային զբոսաշրջային կազմակերպություններ, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	Սույն ուղղությունը ենթադրում է տարաբնույթ միջոցառումների մշակում և իրականացում մի շարք քույր և գործընկեր քաղաքների հետ, մասնավորապես գործարար հանդիպումների, ճանաչողական այցերի, փորձի փոխանակման, սեմինարների, կոնֆերանսների, կլոր-սեղանների կազմակերպում՝ պետական և մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ, միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին, ճանաչողական այցերին մասնակցության ապահովում:			
3	Երևան քաղաքում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման	Հասարակական կազմակերպություններ, զբոսաշրջային ընկերություններ	«Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու կատարելագործում ու արդիականացում, որը մեծ հետաքրքրություն ունի ինչպես			

	ուղղությամբ ծրագրերի իրականացում		մայրաքաղաքի հյուրերի, այնպես էլ բնակիչների շրջանում: Իրականացվելու են տոն և հիշատակի օրերին նվիրված (ինչպես նաև առանձին դեպքերում) անվճար ակցիաներ՝ մասնակից դարձնելով երեխաներին, սոցիալապես անապահով խավերին և հաշմանդամություն ունեցող անձանց: Երևան քաղաքում գործող զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնների գործունեության ապահովում, բարեկարգում և արդիականացում:			
4	Զբոսաշրջության զարգացման մարքեթինգային քաղաքականության իրականացում	Ճամփորդական պարբերականներ, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ	Կարևորելով Երևանի դերը՝ մեծ ուշադրություն է դարձվում մայրաքաղաքի հանրահռչակմանն ուղղված աշխատանքներին միջազգային հարթակներում: Սույն ուղղությունն իր մեջ ներառում է Երևանի մասին տեղեկատվության տրամադրում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ճամփորդական ամսագրերին և թերթերին, մայրաքաղաքի մասին հոդվածների պատրաստում, Երևանը որպես զբոսաշրջային արդյունք դիրքավորումը, գովազդումն ու ներկայացումը: Visit Yerevan պաշտոնական զբոսաշրջային կայքի և հավելվածի ֆունկցիոնալության, բովանդակության թարգմանության ապահովում և առաջխաղացում	Համաքաղաքացիներ, զբոսաշրջիկներ	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**Ք. Երևան**	
	Չափի միավոր	**2021**
Բազմաբնակարան շենք	հատ	4941
Վերելակներ	հատ	4638
Բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների մակերես	քմ	1300964
Բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների մակերես	քմ	2347458
Մուտքեր	հատ	12893

Հիմնախնդիրներ՝

1. Վերելակային տնտեսության արդիականացման, կառավարման օպտիմալացման և միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկման անհրաժեշտություն,
2. Ընդհանուր օգտագործման տարածքների, այդ թվում հարթ և թեք տանիքների վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն,
3. 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի ամրացման անհրաժեշտություն,
4. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակ,
5. Բազմաբնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործում, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» նոր օրենքի ընդունման անհրաժեշտություն,
6. Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների ընկալման և իրազեկվածության ցածր մակարդակ:

«Երքաղլույս» ՓԲԸ

Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի 2022թ. զարգացման ծրագրի գլխավոր նպատակն է կանխորոշել քաղաքի արտաքին լուսավորության սոցիալ-տնտեսական զարգացման այն ուղղությունները, որոնք կբերեն Երևան քաղաքի հետագա զարգացմանը, մայրաքաղաքի բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովմանը, օրվա մութ ժամերին անվտանգ տեղաշարժման ապահովմանը, արձանագրվող ճանապարհատրանսպորտային պատահարների կրճատմանը:

Տարեց տարի իրականացվող վերականգնողական աշխատանքների հետևանքով շահագործվող լուսավորության ցանցի երկարությունը 2020 թվականի դրությամբ կազմում է 1678.3կմ-2628, իսկ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 1691.34կմ-2665 օբյեկտ:

Ներկայումս արտաքին լուսավորության ցանցի լուսատուների գերակշիռ մասը բարձր ճնշման նատրիումական լուսատուներն են, իսկ արդիական և էներգախնայող ԼԵԴ լուսատուների տեսակարար կշիռը քիչ է:

2020թ. սկսած «Երքաղլույս» ՓԲԸ-ն իր ֆինանսական միջոցների հաշվին սկսել է Երևան քաղաքի այգիների, բակերի, անցումների հին գործող նատրիումային լուսատուները փոխարինել նոր արդիական և էներգախնայող ԼԵԴ լուսատուներով, ինչի արդյունքում Ընկերությունը կունենա էլեկտրաէներգիայի զգալի խմայողություն և արտաքին լուսավորությունը կլինի ավելի արդյունավետ:

Վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում հնարավոր կլինի առանց հետագա ֆինանսավորման ավելացման, ներկա ֆինանսավորման պարագայում, արտաքին լուսավորությունը պահել մինչև լուսաբաց և ստանալ ավելի լավ լուսավորվածության մակարդակ:

Արդիականացման արդյունքում ակնկալվում է նաև ջերմոցային գազերի արտանետումների զգալի կրճատում:

Հիմնախնդիրներ՝

1. Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների և խաղահրապարակների լուսավորում,
2. Գործող հին նատրիումային լուսատուների փոխարինում ժամանակակից և էներգաարդյունավետ խնայողական LED լուսատուներով,
3. Մալուխային ցանցի փոխարինում,
4. Կոռոզիայի ենթարկված հենասյուների փոխարինում,
5. Դիսպետչերական ծառայության ավտոմատացում, ինտելեկտուալ համակարգի և կառավարման համակարգի ներդրում,
6. Միջին օրական ռեժիմի ավելացում մինչև լուսաբաց,
7. Նոր տրանսպորտա–տեխնիկական միջոցների, սարքավորումների, գործիքների և այլ տեխնիկական միջոցների ներդրում:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում ուսուցումների կազմակերպում և խորհրդատվության տրամադրում	Հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ և այլ կազմակերպություններ	1.Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների բարելավում, 2.Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում, 3.Պարտադիր նորմերի պահանջների պահպանման, կատարման նկատմամբ մեխանիզմների իրականացում, որոնց արդյունքում կբարձրանա պարտադիր նորմերի կատարման ուղղված աշխատանքների արդյունավետությունը, հաշվետվողականությունը և թափանցիկություն	Բազմաբնակարան շենքերի բնակիչներ	2022թ. ընթացքում	Այլ միջոցներ
2	Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի վերելակների փոխարինում	ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերում շահագործման ժամկետը սպառած վերելակների փոխարինում նորերով՝ հարմարեցված նաև լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող բնակիչներին: Նախատեսվում է փոխարինել 100 հատ վերելակ	Բազմաբնակարան շենքերի բնակիչներ	2022թ. ընթացքում	Երևան համայնքի բյուջե
3	Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում	Բազմաբնակարան շենքերի	Նախատեսվում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ և թեք տանիքների հիմնանորոգում ցինկապատ			Երևան համայնքի բյուջե,

		կառավարման մարմիններ	պրոֆիլավորված հարթ թիթեղներով և այլ անհրաժեշտ նյութերի օգտագործմամբ:			բազմաբնակարան շենքերի կառավարման բյուջեներ
4	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում		Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում, պատուհանների և դռների փոխարինում			
5	Սանիտարական մաքրում և աղբահանություն		Շարունակաբար բարելավվելու են սանիտարական մաքրման և աղբահանության իրականացման աշխատանքները: Հսկողություն է իրականացվելու փողոցների, մայթերի, հրապարակների, բակային և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանիտարական մաքրման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերից և մասնավոր տնատիրություններից իրականացվող աղբահանության աշխատանքների կատարման որակի նկատմամբ:	Բնակիչներ	2022թ. ընթացքում	Երևան համայնքի բյուջե
6	Նոր կոյուղագծերի, հեղեղատարների կառուցում և գործող ցանցերի վերակառուցում	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	Թաղամասերում /փողոցում/ գոյություն չունեցող կոյուղագծերի և հեղեղատար համակարգերի հատվածային կառուցում և գործող ցանցերի վերակառուցում:	Բնակիչներ	2022թ. ընթացքում	Երևան համայնքի բյուջե
«Երքաղլույս» ՓԲԸ						
7	Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործում,պահպանում և արդիականացում	ՀՀ կառավարություն, ՄԱԿ-ի զարգացման Հայաստանյան գրասենյակ, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման, պահպանման և ընթացիկ նորոգման ծառայությունները՝ -Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների, խաղահրապարակների լուսավորում, -Մալուխային ցանցի փոխարինում,	Բնակչություն, զբոսաշրջիկներ	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե, Երևան համանյքի բյուջե, Երքաղլույս ՓԲԸ-ի սեփական

		բանկ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդ:	-Դիսպետչերական ծառայությունում GSM կառավարման համակարգի ներդրում, -Նոր տրանսպորտա-տեխնիկական միջոցների, սարքավորումների, ներդրում, -Լուսային ժամանակակից և էներգաարդյունավետ խնայողական ԼԵԴ լուսատուների տեղադրում՝ «Երևանի քաղաքային լուսավորություն» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, Երևան քաղաքի թվով 28 փողոցների (ընդհանուր երկարությունը 39 կմ) արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացում:			միջոցներ, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի կողմից հատկացված վարկային և դրամաշնորհային միջոցներ:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ**	
	Չափի միավոր	**2021**
Դպրոց	**հատ**	**153**
Հիմնական դպրոց	հատ	141
Միջնակարգ դպրոց	հատ	11
Կրթահամալիր	հատ	1
Աշակերտների թիվ	մարդ	104420
Նախադպրոցական ուսումնական հաստատություն	հատ	161
Երեխաների թիվ	երեխա	24577

Դպրոցական կրթության ոլորտ՝

Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման, հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան կրթական ծրագրերի իրականացման նկատմամբ Երևանի քաղաքապետին վերապահված վերահսկողության լիազորության շրջանակում աշխատակազմի հանրակրթության վարչության դպրոցական բաժնի մասնագետների կողմից իրականացվում են դպրոցի փաստաթղթաշրջանառության պարբերական ուսումնասիրություններ, մոնիտորինգային այցեր: Ուսումնասիրությունների շրջանակում հաճախ պարզ է դառնում, որ լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի տեղայնացումը երբեմն բավարար չէ վերջիններիս դրույթները տեղերում պատշաճ կերպով գործարկելու համար: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար կազմակերպել խորհրդատվական հանդիպումներ, կառավարման հմտությունների զարգացման դասընթացներ դպրոցների տնօրենության ներգրավմամբ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2016թ. փետրվարի 18-ի հ.6 արձանագրային որոշման պահանջների՝ 2019թ.-ից Երևանի բոլոր դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն: Այս համատեքստում կարևորվում է դպրոցների ֆիզիկական պայմանների բարելավումը՝ հիմնանորոգման, վերանորոգման ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև մասնակի նորոգումների միջոցով հաշմանդամություն ունեցող սովորողների կարիքների հարմարեցմանը միտված աշխատանքները՝ թեքահարթակների կառուցում, սանհանգույցների, դասասենյակների հարմարեցում և այլն (ներկայումս թեքահարթակներով ապահովված են 100-ից ավել դպրոցներ): Շարունակում են արդիական մնալ դպրոցների կարողությունների զարգացմանը միտված նախաձեռնությունները ներառական կրթություն իրականացման շրջանակում: Այս առումով վարչության նախաձեռնությամբ իրականացվել են մի շարք համագործակցային ծրագրեր, որոնք ունենալու են շարունակական բնույթ:

Նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակը շարունակում է մարտահրավեր մնալ նաև կրթության կազմակերպման տեսանկյունից: Առանձին դպրոցներում իրավիճակով պայմանավորված կազմակերպվող հեռավար կրթության շրջանակում լայնորեն կիրառվում են էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, հաղորդակցության առցանց հարթակներ: Հաշվի առնելով, որ ուսուցման հեռավար եղանակը նաև ընթացիկ հրամայական է, ինչպես նաև էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառումը մեծապես նպաստում է որակյալ կրթությանը, անհրաժեշտ է շարունակել աշխատանքները՝ կրթական էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու՝ ուսուցիչների և աշակերտների

կարողությունների զարգացման ուղղությամբ: Այս առումով կարևորվում է նաև դպրոցների համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիայի այլ միջոցներով հագեցվածությունը՝ նաև վարչության հնարավոր աջակցությամբ:

Հիմք ընդունելով հանրակրթության՝ սովորողներին ազգային և համամարդկային արժեքներին հաղորդ դարձնելու առաջնայնության սկզբունքը՝ սովորողի գեղագիտական և բարոյական դաստիարակությանը, ազգային մտածողության զարգացմանը աջակցելու նպատակով առանցքային նշանակություն ունի մեծանուն մտավորականների հոբելյաններին, մայրենիի, գրքի տոներին, մերօրյա հերոսներին նվիրված և այլ միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև վերջիններիս խրախուսումը վարչության կողմից: Այս առումով կարևորվում են նաև արտակարգ օժտվածությամբ դպրոցականներին և նրանց ուսուցիչներին հայտնաբերելուն ու խրախուսելուն միտված աշխատանքները, որոնց շրջանակում կարելի է դիտարկել դպրոցականների առարկայական օլիմպիադայի անցկացումը և մրցանակակիրների խրախուսումը:

Հանրակրթության ոլորտում պետական քաղաքականության՝ սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման առաջնայնության սկզբունքի տեսանկյունից մեծ նշանակություն ունեն աշակերտների ներուժի, մասնավորապես, աշակերտական խորհուրդների գործունեության խթանմանը միտված նախաձեռնությունները, ինչպիսիք իրականացվում են ինչպես վարչության նախաձեռնությամբ, այնպես էլ հասարակական ոլորտում գործունեություն ծավալով կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Կարևորվում են նաև մարդու կյանքի ու առողջության, պատասխանատվության, ինչպես նաև բնապահպանական աշխարհայացքի ձևավորմանը միտված ծրագրերի իրականացումը սովորողների շրջանում:

Նկատի ունենալով հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերով դպրոցների կառավարման կոլեգիալ մարմիններին՝ խորհուրդներին վերապահված լիազորությունները և վերջիններիս անդամների իրազեկվածության կարևորությունը՝ առանցքային նշանակություն ունի խորհուրդների գործունեության արդյունավետության խթանումը՝ անդամների կարողությունների զարգացման նախաձեռնությունների միջոցով:

Վարչության գործունեության արդյունավետության խթանման գործում մեծապես կարևորվում է արդեն իսկ ձևավորված համագործակցությունների ամրապնդումը, ինչպես նաև համագործակցությունների շրջանակի ընդլայնումը ոլորտում գործունեություն ծավալող պետական միջազգային և տեղական կազմակերպությունների հետ:

Դպրոցական ոլորտի հիմնախնդիրներ՝

1. Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման համար հանրակրթական ուսումնական հաստատությունների դպրոցական գույքի նորացում, շենքային պայմանների բարելավում, համապատասխանեցում միջազգային չափանիշներին:
2. Անհրաժեշտ քանակությամբ համակարգիչների, էլեկտրոնային գրատախտակների, տեխնոլոգիական այլ միջոցների առկայության ապահովում՝ դասավանդման ժամանակ նյութն առավել հետաքրքիր և մատչելի դարձնելու նպատակով:
3. Առողջ ապրելակերպի ոչ միայն որպես ուսումնական դասընթացի արդյունավետ կազմակերպման, այլ աշակերտի կենսաձև դարձնելու համար դպրոցների մարզադահլիճների և մարզահրապարակների արդիականացում:
4. Առաջին դասարանից մինչև տասներկուերորդ դասարան շաբաթական միջինը 5-8 ժամ հայոց լեզու և գրականություն ուսումնասիրող դպրոցականի բանավոր և գրավոր խոսքի անմխիթար վիճակի, ազգային մշակույթի, ժողովրդի անցած ճանապարհի մասին անբավարար իմացության հաղթահարում:

5. Ուսուցիչների նորարարական կարողությունների զարգացման, կրթական նորացող մեթոդաբանության յուրացման, նրանց մասնագիտական կատարելագործման նպատակով՝ վերապատրաստումների իրականացում:
6. Ուսուցչի վարկի և հեղինակության բարձրացման նպատակով՝ լավագույն փորձի հանրահռչակում, խրախուսման տարբեր միջոցներով նրա գործունեության գնահատում՝ ռաջարկելով տված արդյունքի հիմքով աշխատավարձի վերանայում:
7. Ուսուցիչների և աշակերտների ինքնակրթությունը խթանելու նպատակով՝ դպրոցների գրադարանային ֆոնդի համալրում գեղարվեստական, մեթոդական և մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև էլեկտրոնային գրադարանների ստեղծում:
8. Դպրոցների համալրում լաբորատորիաներով, անհրաժեշտ նյութերով և համապատասխան սարքավորումներով, ինչպես նաև էլեկտրոնային լաբորատորիաների ներդրում:
9. Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկերի կանխարգելում, նման երեխաներին հայտնաբերում՝ ուսուցման համակարգ վերադարձնելու նպատակով:
10. Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների համապատասխանեցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների պահանջներին:
11. Աշակերտական ակումբների ստեղծում՝ ըստ վարչական շրջանների (մասնագիտական կողմնորոշում, գրական, բնապահպանական):

Նախադպրոցական կրթության ոլորտ՝

Նախադպրոցական կրթության բնագավառն ապահովում է նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման, ուսուցման, խնամքի և դաստիարակության գործընթացը, որը նպատակաուղղված է երեխայի՝ տարիքին համապատասխան զարգացմանը, ինքնասպասարկմանը, սոցիալիզացիային, կյանքի հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, տարրական կրթություն սահուն անցման ապահովմանը:

Նախադպրոցական կրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի մտավոր, ֆիզիկական կարողությունների համակողմանի զարգացմանը, դաստիարակությանը, խնամքին, առողջության պահպանմանը, սոցիալական ներառմանը, տարիքին համապատասխան զարգացմանը, ինքնասպասարկմանը, իրավունքների պաշտպանությանը, նրա արժանապատվության նկատմամբ հարգանքի, նրա անհատականության ձևավորման և տարրական կրթության արդյունավետ նախապատրաստմանն ու սահուն անցմանը:

Երևանի քաղաքապետը իր ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունում՝

1) իրականացնում է նախադպրոցական կրթության բնագավառում սույն օրենքով և օրենսդրությամբ լիազոր մարմնի ղեկավարին վերապահված լիազորությունները.
2) ապահովում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, կրթական ծրագրերի իրականացումը՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներին համապատասխան.
3) ապահովում է լիազոր մարմնի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի շահագործումը և պահպանումը, դրանց անվտանգությունը և մատչելիությունը.

4) ապահովում և հսկողություն է իրականացնում նախադպրոցական տարիքի երեխաների գործընթացի, ուսումնական հաստատություններում նրանց ընդգրկման նկատմամբ.
5) առաջարկում և համապատասխան իրավասու մարմնի հաստատմանն է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատությունների մատուցած ծառայությունների դիմաց վարձավճարների չափերը և արտոնությունների ցանկը.
6) նշանակում կամ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ընտրված լինելու դեպքում հաստատում է լիազոր մարմնի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենին, ինչպես նաև պաշտոնից ազատում նրան
7) վարում է նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը.
8) մասնակցում է նախադպրոցական կրթության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին.
9) ապահովում է պայմաններ՝ նախադպրոցական կրթություն ստանալու համար.
10) կազմակերպում է նախադպրոցական ուսումնական հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացումը.
11) ապահովում է նախադպրոցական տարիքի երեխաների առողջության պահպանման միջոցառումների իրականացումը.
12) իրականացնում է նախադպրոցական կրթության բնագավառը կարգավորող օրենքներով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ:

Նախադպրոցական կրթության բովանդակությունը սահմանվում է նախադպրոցական կրթության պետական չափորոշիչով, որն իր մեջ ներառում է ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, ուղղությունները և բովանդակության բաղադրիչները, և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները:

Նախադպրոցական կրթության պետական չափորոշչի ապահովումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է: Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները նկարագրում են, թե ինչ պետք է իմանա և ինչ պետք է կարողանա անել երեխան որոշակի տարիքում: Դրանք զարգացման տարբեր ոլորտներում մինչև 6 տարեկան երեխաների վերաբերյալ մեր ունեցած ակնկալիքներն են՝ պայմանավորված տարիքային բնականոն զարգացման օրինաչափություններով և ազգային, մշակութային առանձնահատկություններով:

Չափորոշչային պահանջներն իրականացվում են նախադպրոցական կրթական ծրագրով՝ նախադպրոցական կրթության նպատակների իրականացմանն ուղղված ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության, կրթության կազմակերպման ձևերի, կիրառվող մեթոդաբանության, տեխնոլոգիաների և ըստ տարիքային խմբերի՝ երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

Երևանի քաղաքապետարանը իրականացնում է նաև նախադպրոցական կրթության բնագավառում պետության կողմից երաշխավորված մի շարք սկզբունքների ապահովումը՝ առաջնահերթությունը տալով ազգային և համամարդկային արժեքներին, երեխայի կյանքի և առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացմանը, ինչպես նաև ներառական և երեխայակենտրոն միջավայրի խթանման, երեխայի մտավոր, հոգեկան և ֆիզիկական ունակությունների զարգացման առաջնայնությանը, կրթությունը շարունակելու պատրաստվածությանը:

Երևանի ենթակայությամբ գործում է թվով 979 նախադպրոցական ուսումնական հաստատություն, թվով 16 մանկապարտեզում իրականացվում են շինարարական աշխատանքներ, որի հետևանքով դրանց գործունեությունը դադարեցված է, արդյունքում՝ գործում է 870 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Մայիս ամսին մանկապարտեզներում ձևավորվել է 2 նոր խումբ: Հունվարից մինչև մարտ ամսվա սկիզբ հաստատություններ են հաճախել շուրջ 31000 երեխա: Նոր

ուսումնական տարում /սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին/ մանկապարտեզներում ընդունելություն է կազմակերպվել 8470 երեխայի համար: Նախադպրոցական կրթության ոլորտ ընդգրկված է 24577 երեխա: Մանկապարտեզներում կրթադաստիարակչական աշխատանքներ կազմակերպում են թվով 4565 աշխատակից, որից մանկավարժական անձնակազմում ընդգրկված է 1532 մասնագետ:

Երևանի քաղաքապետարանի շինարարական ծրագրով հիմնանորոգվում են հ.հ. 5, 58, 82, 86, 107, 127, 144, 146 մանկապարտեզները, իսկ Երևանի էներգաարդյունավետության ծրագրով հիմնանորոգվում են հհ. 22, 23, 36, 47, 48, 49, 71, 74 մանկապարտեզները, այնուհետև կհիմնանորոգվեն հ.հ.81, 135, 138, 109, 110, 161 մանկապարտեզները: Առկա են հ.հ.1, 15, 63, 77, 95, 137, 143, 147, 33, 56, 75, 78, 82, 93, 100, 101, 102, 103, 108, 118, 129, 157 մանկապարտեզների նախագծանախահաշվային փաստաթղթերը: Նախագծման փուլում են հ.հ. 44, 50, 61 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքները: «Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար ձեռք բերվող անհրաժեշտ գույք» ծրագրի շրջանակում 2021թ. մանկապարտեզներին տրամադրվել է կոշտ գույք և երեխաների սննդի կազմակերպման համար՝ մանկական սպասք: Նոր կորոնավիրուսային հիվանդության վարակի կանխարգելման նպատակով մանկապարտեզներին տրամադրվել է եռաշերտ բժշկական դիմակ և կոշկաթաղանթ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից առաջիկայում կհաստատվեն հետևյալ իրավական ակտերը, որոնց կիրառման ուղղությամբ կտարվեն համապատասխան աշխատանքներ.

1.Նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը,

2.Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) կարգը,

3.Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստման կարգը,

4.Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների ղեկավարման իրավունքի (հավաստագրման) համար վերապատրաստման և հավաստագրման կարգը,

5.Նախադպրոցական ուսումնական հաստատության ներքին գնահատման իրականացման հարցաշարը:

Նախադպրոցական ոլորտի հիմնախնդիրներ՝

1) Նախադպրոցական ուսումնական հաստատություններում շինությունների և տարածքների քարտեզագրում,
2) Քարտեզագրման արդյունքում ստացված տվյալների հիման վրա՝ Երևան քաղաքի նախադպրոցական հաստատություններում հերթագրված, սակայն մանկապարտեզ չընդգրկված երեխաների ընդունելության խնդրի կարգավորում,
3) Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերից վարձակալությամբ կամ անհատույց տրված տարածքների պայմանագրերի վերանայում,
4) Մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում,
5) Մանկապարտեզների համալրում՝ համապատասխան գույքով,
6) Նոր խմբերի ձևավորում՝ չօգտագործվող տարածքների /խմբասենյակներ/ շահագործմամբ,
7) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով մանկապարտեզների մանկավարժական համակազմերի համալրում համապատասխան մասնագետներով,
8) Համընդհանուր ներառման ծրագրի շրջանակում՝ մասնագետների վերապատրաստում՝ համագործակցելով շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ,

9) Տնօրենների գիտելիքների և հմտությունների զարգացման նպատակով՝ արտագնա վերապատրաստում,
10) Մանկավարժական անձնակազմերի վերապատրաստաումներ՝ համագործակցելով համապատասխան ոլորտային գերատեսչությունների հետ,
11) Մանկապարտեզ չհաճախող երեխաների համար այլընտրանքային մոդելներով նախադպրոցական կրթության կազմակերպում:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
Դպրոցական կրթության ոլորտ						
1	Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, փորձագետներ և այլն:	1. Դպրոցների տնօրենների համար պարբերական սեմինարների կազմակերպում՝ աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների, կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, կրթության կազմակերպման արդյունավետությունը խթանող ծրագրերի, կրթության ոլորտում նորարար մոտեցումների, շահառուների կողմից վերհանված հարցերի վերաբերյալ: 2. Լավագույն փորձի փոխանակման, ինչպես նաև նոր գիտելիքների փոխանցման նպատակով դասընթացների, վարպետաց դասերի, քննարկումների կազմակերպում՝ տնօրենների տեղակալների, մեթոդմիավորումների նախագահների և առանձին խմբերի համար, խրախուսման միջոցառումների կազմակերպում Պետական հանրակրթական դպրոցների և մասնավոր դպրոցների միջև գործընկերային հարաբերությունների խթանում, փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում	Դպրոցների տնօրեններ, տնօրենի տեղակալներ, մեթոդ-միավորման նախագահներ, ուսուցիչներ	2022 թվականի ընթացքում	Երևանի համայնքի բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2	Դպրոցների շենքերի հիմնանորոգում, վերանորոգում, մասնակի նորոգում (նաև՝ հարմարեցում)	Ասիական զարգացման բանկ, աջակից կառույցներ, անհատ բարերարներ:	1. Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում պետական հանրակրթական դպրոցների հիմնանորոգում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017թ. հ.805-Ն որոշման: Սույն ծրագրի շրջանակում շարունակելու և/կամ մեկնարկելու են հետևյալ դրոցների հիմնանորոգման աշխատանքները՝ հհ. 6, 18, 22, 68, 95, 111, 116, 122 դպրոցները և «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրը: 2. Մասնագիտական խորհրդատվական հանդիպումների կազմակերպում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հարմարեցումների մասնագիտական ուղղորդում ստանալու նպատակով: Երևանի ենթակայության առնվազն 130 դպրոցներում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցման աշխատանքների իրականացում՝ մասնավորաբար թեքահարթակների կառուցում, սանհանգույցների և գույքի հարմարեցումներ:	Երևանի հ. 6, 18, 22, 68, 95, 111, 116, 122 դպրոցների աշակերտներ, անձնակազմ, հաշմանդամություն ունեցող սովորողներ:		Ասիական զարգացման բանկ, դպրոցների բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3	Ներառական կրթության արդյունավետության խթանում	Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, տարածքային մանկավարժահոգեբանական	1.Ուսուցիչների՝ ներառող դասավանդման վերապատրաստման կարողությունների զարգացման ծրագրերի իրականացում՝ համագործակից կառույցների ներգրավմամբ: 2. Փորձի փոխանակման հանդիպումներ, սեմինարներ ներառական կրթության	Դպրոցների սովորողներ՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, տնօրենություն, ուսուցիչներ		Օրենքով չարգելված աղբյուրներ

		աջակցության կենտրոններ, միջազգային և տեղական կազմակերպություններ	ոլորտում հաջողություններ ունեցող դպրոցների, փորձագետների ներգրավմամբ			
4	Մրցունակ կրթության ապահովմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և աջակցություն	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն, միջազգային և տեղական կազմակերպություններ, փորձագետներ	1.Դպրոցների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանն առնչվող գիտելիքների զարգացման նպատակով խորհրդատվական հանդիպումների կազմակերպում: 2.Դասապրոցեսում կրթական էլեկտրոնային ռեսուրսների կիրառման խրախուսում՝ վերապաստրաստման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տեղայնացման, ուսուցիչների մասնակցության խրախուսման միջոցով: 3.Մեդիագրագիտության գիտելիքների փոխանցման նպատակով սեմինարների իրականացում:	Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների տնօրենություն, մանկավարժներ, սովորողներ:		
5	Արտակարգ ընդունակություններով դպրոցականների հայտնաբերում և խրախուսում	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Սովորողների ինտելեկտուալ կարողությունների զարգացմանը նպաստելու նպատակով դպրոցական առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային փուլերի կազմակերպում և անցկացում. լավագույնների խրախուսում:	Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների աշակերտներ, մանկավարժներ:	2022թ. 1-2-րդ եռամսյակ	Երևան համայնքի բյուջե
6	Աջակցություն սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացին	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի գրողների միություն,	1. Հայ ժողովրդի նշանավոր զավակներին և տոներին նվիրված ցերեկույթների, տարվա հոբելյարներին նվիրված միջոցառումների կազմակերպման խրախուսում 2. Բնապահպանական (էկո) ակումբների ձևավորման խրախուսում. դպրոցականների	Սովորողներ, մանկավարժական համակազմեր, համայնք	2022թ. ընթացքում	Երևան համայնքի բյուջե Օրենքով չարգելված այլ

		մշակութային համապատասխան օջախներ՝ համաձայնությանբ, հրատարակչություններ, միջազգային և տեղական կազմակերպություններ, փորձագետներ	շրջանում բնապահպանական դաստիարակությանը միտված նախաձեռնողական ծրագրերի իրականացում 3. Կիրառական ռազմագիտության գիտելիքներին և հմտությունների զարգացմանը միտված ծրագրերի իրականացում 4. Արտակարգ իրավիճակներում քաղաքացիական պաշտպանության գիտելիքի կիրառական հմտությունների զարգացում՝ դպրոցների համագործակցային վարժանքների, մասնագետների ներգրավմամբ թեմատիկ սեմինարների միջոցով: 5. Նյութատեխնիկական բազայով դպրոցներին աջակցելու ծրագրերի իրականացում: 6. «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ցանցի ընդլայնում, բնագիտական առարկաների լաբորատորիաների ձևավորման խրախուսում:			աղբյուրներ
7	Դպրոցների կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության խրախուսում	Տեղական և միջազգային կազմակերպություններ, փորձագետներ	1. Դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անդամների ներգրավմամբ սեմինարների կազմակերպում 2. Աշակերտական կոնֆերանսի կազմակերպում՝ արդի թեմաներով՝ ռիսկային վարքագիծ, բուլինգ, հայրենասիրության արդի ընկալումները և այլն:	Դպրոցների կառավարման, աշակերտական խորհուրդների անդամներ	2022թ. 2-րդ և 4-րդ եռամսյակ	Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			3. Հանրակրթության վարչությանը կից աշակերտական խորհրդի ձևավորում 4. Մտքերի գեներացիայի խթանման և համակարգման հմտությունների, ծրագրային առաջարկների մշակման նախնական գիտելիքների փոխանցման դասընթացի անցկացում:			
8	Կրթական հաստատությունների ընթացիկ գործունեության մշտադիտարկում	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն, կրթության տեսչական մարմին, դպրոցների տնօրեններ	1.Էլեկտրոնային եղանակով դպրոցների հետ վարչության մասնագետների համար կիրառելի վերահսկողության գործիքի ներդրման հնարավորություն: 2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Կրթության տեսչական մարմնի արձանագրած հիմնական խախտումների վաղ հայտաբերման նպատակով պարբերական ուսումնասիրությունների իրականացում:	Վարչության աշխատակիցներ, տնօրեններ, դպրոցների անձնակազմեր	2022թ. ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում
9	Երևանի քաղաքապետին կից կրթության հարցերով հասարակական խորհրդի ձևավորում	ՀՀ ԿԳՄՄՆ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն, կրթության տեսչական մարմին, ԿՁՆԱԿ, հասարակական կազմակերպություններ, փորձագետներ	Երևանի քաղաքապետի որոշման նախագծի մշակում և ներկայացում՝ առաջարկելով խորհրդի կազմի անդամներ հանրակրթության կազմակերպման համար պատասխանատու կառույցներից, կրթության ոլորտի փորձագետներից, ոլորտում գործունություն ծավալող հասարակական կազմակերպություններից՝ ապահովելու խորհրդի ձևավորման համար անդամների անհրաժեշտ նվազագույն թիվը, այդպիսով նաև պահպանելով հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց՝ խորհրդի կազմում ընդգրկվելու՝ Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ.46-Ն որոշմամբ	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչություն, դպրոցներ	2022թ. 1-ին կիսամյակ	

			հաստատված Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարիների ձևավորման կարգի 7-րդ կետով սահմանված հնարավորությունը:			
10	«Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի մեկնարկ	ԿԶՆԱԿ, «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի աշխատակազմ	Երևանի քաղաքապետարանի ենթակայության մի քանի դպրոցներում «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի ներդրման համար պայմանների ապահովում, ծրագրի իրականացում, արդյունքների վերլուծություն, մասսայականացման հնարավորությունների դիտարկում	Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներ	2022թ. ընթացքում	Օրենքով չարգելված աղբյուրներ
Նախադպրոցական ոլորտ						
1	Նյութատեխնիկական բազայի համալրում նախադպրոցական ուսումնական հաստատություններում	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական Կազմակերպություններ, հիմնադրամներ:	Նյութատեխնիկական բազան վերազինելու նպատակով անհրաժեշտ է գնահատել նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերը, շինությունները,հողամասերը, հաղորդակցության միջոցները, ուսումնամեթոդական և ծրագրային նյութերը, զարգացնող խաղային միջոցները, դիդակտիկ պարագաները, սարքավորումները /և այլն/	Երևանի քաղաքապետարանի նախադպրոցական կրթության ոլորտի աշխատակիցներ և Երևանում նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունն եր:	2022-2023թթ.	
2	Իրականացվող գործընթացների կառավարում	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպությ	Մանկապարտեզների սննդի գնման, բաշխման, ինչպես նաև վերանորոգման և հարակից այլ գործողությունների համար մշակել կամ ներդնել ավտոմատացված համակարգեր, որոնք հնարավորություն կտան ցանկացած տեսակի և բնույթի տեղեկատվություն կարճ ժամանակում	Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների նախադպրոցական կրթության ոլորտի աշխատակիցներ և		

		ուններ, ինչպես նաև մասնավոր մանկապարտեզներ, զարգացման կենտրոններ:	վերարտադրել ու դրա հիման վրա կատարել վերլուծություններ՝ օպտիմալացնելով աշխատանքային գործընթացները:	Երևանի ենթակայության նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններ:		
3	Մարդկային ռեսուրսների կառավարում	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ:	Նախադպրոցական կրթության ոլորտում ընդգրկված անձնակազմերի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների, հմտությունների կատարելագործում վերապատրաստման և փորձի փոխանակման դասընթացների միջոցով, ինչպես նաև ծնողավարության դասընթացներ և ծնողների իրազեկման միջոցառումներ, և վարչական օղակների աշխատակիցների արդյունավետ կառավարման համակարգերի ներդնում:	Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների նախադպրոցական կրթության ոլորտի աշխատակիցներ և Երևանի ենթակայության նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններ, ինչպես նաև ծնողական համայնքի ներկայացուցիչներ:	2022թ. ընթացքում	
4	Մանկապարտեզների գույքի ձեռքբերում	Վարչական շրջաններ	1.կոշտ գույք (երեխաների և աշխատակազմի համար) /երկհարկանի մահճակալ, եռահարկ մահճակալ, գրապահարան, աշխատանքային աթոռ, մանկական սեղան, մանկական աթոռ և այլն/ 2.խոհանոցային գույք, սպասք /սալօջախ, սննդի մշակման սեղաններ՝ տարբերակված,	Մանկապարտեզների սաներ, աշխատակիցներ, երեխաների ծնողներ:	2022թ. ընթացքում	

			հացի պահպանման համար նախատեսված պահարան, ափսեներ, բաժակներ և այլն/			
5	Մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում	Միջազգային կազմակերպություններ:	Թվով 22 մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում, 1.Երևանի միջոցներով հիմնանորոգման ծրագրում ընդգրկված են թվով՝ 8 մանկապարտեզներ 2.Երևանի էներգաարդյունավետության հիմնանորոգման ծրագրում ընդգրկված են թվով՝ 14 մանկապարտեզներ:	Մանկապարտեզների սաներ, ծնողներ և հաստատության աշխատակիցներ:		
6	Նախադպրոցական կրթության մատչելիություն	ՀԿ-ներ, ՀՀ ԿԳՄՍՆ, ԿՏԱԿ, ԿՁՆԱԿ:	Նախադպրոցական անվճար կրթություն, շենքերի հիմնանորոգում, գույքի նորացում, հերթագրված երեխաների ընդունելության հիմնախնդրի կարգավորում, մանկապարտեզներում համընդհանուր ներառման գործընթացի իրականացում:	Մանկապարտեզների սաներ, ծնողներ և հաստատության աշխատակիցներ:		Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված աղբյուրներ
7	Ներառական կրթության արդյունավետության խթանում	ՀՀ ԿԳՄՍՆ, ԿՁՆԱԿ, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ, ՀԿ-ներ:	1.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով մանկապարտեզների մանկավարժական համակազմերի համալրում համապատասխան մասնագետներով: 2.Համընդհանուր ներառման ծրագրի շրջանակում՝ մասնագետների վերապատրաստում՝ համագործակցելով շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ: 3.Փորձի փոխանակում, սեմինարներ՝ փորձագետների ներգրավմամբ:	Մանկապարտեզների սաներ, ծնողներ և հաստատության աշխատակիցներ:	2022-2023թթ. ընթացքում	Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված աղբյուրներ:
8	Նախադպրոցական ուսումնական	Երևան քաղաքի կառավարման	Հսկողություն՝	Վարության մասնագետներ,	2022 թ. ընթացքում	Ֆինանսավորում չի

	հաստատությունների ընթացիկ գործունեության մշտադիտարկում	տեխնոլոգիաների կենտրոն, Կրթության տեսչական մարմին, մանկապարտեզների տնօրեններ	-Երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների նկատմամբ, - Աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ, -«Մանկապարտեզ» կառավարման համակարգի կիրառման նկատմամբ,	վարչական շրջանների համապատասխան բաժինների մասնագետներ, մանկապարտեզների տնօրեններ, մանկապարտեզների անձնակազմ:		պահանջում

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում է միջազգային 8 կազմակերպությունների, որոնց հետ ունի լայն պայմանագրային դաշտ և համատեղ իրականացված, իրականացվող և քննարկվող տարբեր ծրագրեր: Վերջին շրջանում ծավալվող համագործակցությունը ամրագրվում է 2014-2021թթ. կտրվածքով:

Քույր և գործընկեր քաղաքներ	**Կազմակերպություններ**	**Հուշագրեր, համաձայնագրեր, պայմանագրեր 2014-2021թթ**
1. Աթենք (Հունաստան) 2. Ամման /Հորդանան/ 3. Անտանանարիվու (Մադագասկար) 4. Անտոնի (Ֆրանսիա) 5. Աշգաբադ (Թուրքմենստան) 6. Առնուվիլ (Ֆրանսիա) 7. Բեյրութ (Լիբանան) 8. Բուենոս Այրես (Արգենտինա) 9. Բուխարեստ (Ռումինիա) 10. Բրատիսլավա (Սլովակիա) 11. Գլենդել (ԱՄՆ) 12. Դամասկոս (Սիրիա) 13. Դելի (Հնդկաստան) 14. Դոնի Ռոստով (Ռուսաստանի Դաշնություն) 15. Դրագինյան (Ֆրանսիա) 16. Թբիլիսի (Վրաստան) 17. Իլ դը Ֆրանս շրջանային խորհուրդ (Ֆրանսիա) 18. Լիոն (Ֆրանսիա) 19. Լոս Անջելես (ԱՄՆ) 20. Խանթի-Մանսիյսկ (ՌԴ) 21. Կալինինգրադ (ՌԴ) 22. Կարարա (Իտալիա) 23. Կիև (Ուկրաինա) 24. Կրասնոդար (ՌԴ) 25. Ղազվին (Իրան) 26. Մարսել (Ֆրանսիա) 27. Մինսկ (Բելառուս) 28. Մոնրեալ (Կանադա) 29. Մոսկվա (ՌԴ) 30. Նիս (Ֆրանսիա) 31. Նովոսիբիրսկ (Ռուսաստանի Դաշնություն)	1. «Քաղաքապետները հանուն խաղաղության» կազմակերպություն 2. ԱՊՀ երկրների, մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային համաժողով / IAC / 3. «ICLEI Տեղական իշխանությունները հանուն կայունության» ասոցիացիա 4. Ֆրանսախոս քաղաքապետների միջազգային ասոցիացիա 5. Միջազգային քաղաքային համայնքների «Լուսավորում» /LUCI / ասոցիացիա 6. Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքների կազմակերպություն 7. «ԵՎՐՈՍԻԹԻՍ» ասոցիացիա 8. Քաղաքապետերի դաշնագիր	Երևան քաղաքը հիմնել է նոր համագործակցություններ Խանտի Մանսիսկ /ՌԴ/ /2014թ./ , Աշխաբադ /Ղազախստան/ /2014թ./, Ամման /Հորդանան/ 2014թ./, Նովոսիբիրսկ /ՌԴ/ 2014թ./, Կրասնոդար /ՌԴ/ 2014թ./, Անտոնի /Ֆրանսիա /2014 թ. / Վուլլբի /Ավստրալիա/ 2017թ. /,Լիոն /2018թ./ ,Իլ դը Ֆրանս շրջան /2018թ/,Ռոստով / ՌԴ/ 2021., Լայպցիգ /ԳԴՀ/ 2021թ. քաղաքների հետ Մուգենշտուրմ – Դավթաշեն վարչական շրջան, 2021թ.

32. Պեզարո (Իտալիա) 33. Պեկին (Չինաստան) 34. Պլեսի Ռոբինսոն (Ֆրանսիա) 35. Պոդգորիցա (Չեռնոգորիա) 36. Ռիգա (Լատվիա) 37. Ռիո դե Ժանեյրո (Բրազիլիա) 38. Սան Պաուլու (Բրազիլիա) 39. Սանկտ Պետերբուրգ (ՌԴ) 40. Սոֆիա (Բուլղարիա) 41. Սպահան (Իրան) 42. Ստավրոպոլ (ՌԴ) 43. Ստեփանակերտ (Արցախի Հանրապետություն) 44. Վարշավա (Լեհաստան) 45. Վենետիկ (Իտալիա) 46. Վիեն (Ֆրանսիա) 47. Վիլըբի (Ավստրալիա) 48. Վոլգոգրադ (ՌԴ) 49. Տոսկանայի մարզ (Իտալիա) 50. Փարիզ (Ֆրանսիա) 51. Քեմբրիջ (ԱՄՆ) 52. Քիշնև (Մոլդովա) 53. Օդեսա (Ուկրաինա)		

Հիմնախնդիրներ՝

1. Երկկողմ և բազմակողմ համագործակցությունն ուղղել Երևանում հստակ և արդիական ծրագրերի կյանքի կոչմանը,
2. Ակտիվացնել միջազգային համագործակցության շրջանակներում հնարավոր ռեսուրսների ներգրավումը Երևանի քաղաքային տնտեսության տարբեր բնագավառներում,
3. Հատկապես կարևորվում է արտերկրի մայրաքաղաքների և խոշոր քաղաքների հետ համաձայնագրերի ստորագրումը՝ համագործակցության կոնկրետ ուղղություններով ու հստակ պայմանավորվածությունների ձեռքբերմամբ և բազմակողմ համագործակցության աշխարհագրության ընդլայնմամբ,
4. Երևանն, իր մայրաքաղաքային գործառույթներից ելնելով, պետք է ավելի ակտիվ լինի թե՛ երկկողմ այցերի, թե՛ միջազգային և տարածաշրջանային կառույցներում ներկայության առումով:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում	Քույր և գործընկեր քաղաքներ	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ 1.Ստորագրել համագործակցության համաձայնագրեր Քաթարի մայրաքաղաք Դոհայի, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի, Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ԻԻՀ Շիրազ, Ղրղզստանի մայրաքաղաք Բիշկեքի, Ղազախստանի մայրաքաղաք Նուր-Սուլթանի հետ: 2.Ակտիվացնել համագործակցության կապերը արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում /Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Սոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ (ԱՄՆ), Լայպցիգ և այլն/, 3.Թարմացնել համագործակցության համաձայնագրերը ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ, 4.Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև կնքված համագործակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում,	Երևանի բնակիչներ, Երևանի քաղաքապետարան, քույր և գործընկեր քաղաքներ	2022-2023թթ.	Երևան համայնքի բյուջե, Օրենքով չարգելված միջոցներ

			5.Աջակցել ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպմանը, 6.Ակտիվացնել Երևանի՝ տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները, 7.Ակտիվացնել կապերը Երևանի քաղաքապետարանի և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև, 8.Իրականացնել եղբայրության պուրակներ և զբոսայգիներ հիմնելու ծրագրեր, 9.Խրախուսել և ընդլայնել վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունը, տրամադրել տեղեկատվություն Երևանի գործընկեր քաղաքներին Երևանում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ:			
2	Միջազգային համագործակցությունների շրջանակներում համատեղ ծրագրերի մշակում և միջոցառումների իրականացում	Միջազգային կազմակերպություններ, նախաձեռնություններ և համագործակցության այլ հարթակներ	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ 1.Ակտիվացնել աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ կոնկրետ ծրագրերի ներկայացման առումով, համագործակցել միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում, 2.Ցուցաբերել ակտիվ մասնակցություն AIMF-ի ամենամյա գագաթաժողովներին,	Երևանի բնակիչներ, Երևանի քաղաքապետարան, քույր և գործընկեր քաղաքներ	2022-2023թթ.	Երևան համայնքի բյուջե, Օրենքով չարգելված միջոցներ

			կազմակերպել փոխայցելություններ ֆրանսիական քույր և գործընկեր քաղաքների հետ և մշակել համատեղ ծրագրեր, 3.Ցուցաբերել ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև ապահովել հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին, 4.ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ բանակցությունների վարում՝ տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ, 5.Իրականացնել ԱՄՆ Լոս Անջելես քաղաքի հետ համատեղ ծրագրեր 6.Իրականացնել Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի քաղաքի հետ համատեղ ծրագրեր, 7.Իրականացնել Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ համատեղ ծրագրեր, 8.Իրականացնել ԳԴՀ Լայպցիգ քաղաքի հետ համատեղ ծրագրեր, 9.Իրականացնել ՀՀ մարզերի և ԱՀ շրջանների հետ համատեղ ծրագրեր 10.Իրականացնել ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում 2021-2025թթ. համագործակցության զարգացման միջոցառումների ծրագրով սահմանված կետերը՝ աշխատակազմի համանատասխան			

			ստորաբաժանումների հետ համագործակցությամբ(կոմունալ տնտեսություն, արտաքին ձևավորման և գովազդ, «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ, զարգացման և ներդրումային ծրագրեր, երեխաների և սոցիալական պաշտպանություն, առողջապաություն, տրանսպորտ, հանրակրթություն, մշակույթ և տուրիզմ):			
3	Համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում	Միջազգային կազմակերպություններ, քույր և գործընկեր քաղաքներ, ինչպես նաև ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչություններ	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների կազմակերպում և փորձագիտական աջակցություն, անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուների դասընթացների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն նաև փորձի փոխանակման ծրագրեր քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցությունների շրջանակում, որը կներառի -Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների փոխայցելություններ, -Երևանի քաղաքապետարանի և Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցություն, -Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում	Երևանի բնակիչներ, Երևանի քաղաքապետարան, քույր և գործընկեր քաղաքներ	2022-2023թթ.	Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված միջոցներ

			մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագրի շարունակական իրականացում՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ:			

ՄՇԱԿՈՒՅԹ

Երևան համայնքի ենթակայությամբ գործող կազմակերպությունները, ՀՀ պետական մշակութային քաղաքականությանը համապատասխան, իրականացնում են Երևան համայնքի մշակութային միջավայրի, մշակութային և ստեղծարար ենթակառուցվածքների ձևավորման, պահպանման և զարգացման, հայ և համաշխարհային մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, ժամանակակից արվեստի ստեղծագործությունների ստեղծման և տարածման համար նպաստավոր պայմանների ապահովման, ինչպես նաև մշակութային բազմաժանր միջոցառումների իրականացման և այլ գործառույթներ:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական կազմակերպություններ	
Մշակութային կազմակերպություններ	**72**
Թանգարան	5
Թատրոն	3
Գրադարան	19
Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ	26
Գեղագիտական զարգացման և մշակույթի տներ	14
Մանկական ֆիլհարմոնիաներ	2
«Երևան» փողային նվագախումբ	
«Հայ Արտ» մշակույթի կենտրոն	
Երևանի կենդանաբանական այգի	

Երևան համայնքի բնակչության լայն զանգվածներին պետական, ազգային և այլ միջոցառումներին ընդգրկելու, վարչական շրջաններում մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիություն ապահովելու, ինչպես նաև ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու նպատակով կազմակերպվում են պետական, եկեղեցական, ազգային և այլ տոներին նվիրված միջոցառումներ, տոնակատարություններ:

Մշակույթի ոլորտի առաջնահերթություններից է համագործակցությունը քույր ու գործընկեր քաղաքների, միջազգային մշակութային կառույցների հետ, ինչպես նաև այդ կառույցների մշակութային կյանքին ինտեգրման ապահովումը:

Հիմնախնդիրներ՝

1. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների շարունակական զարգացում և արդիականացում,
2. Մշակութային ծրագրերի, փառատոնների, ցուցահանդեսների, համերգային ծրագրերի, այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանն ուղղված աշխատանքների ակտիվացում,
3. Մշակութային ծրագրերի առավել ակտիվ հանրահռչակման, մշակութային կյանքին բնակչության ինտեգրման անհրաժեշտություն,
4. Երիտասարդ ստեղծագործողների ինքնադրսևորման համար նոր հարթակների ստեղծում,
5. Ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական, նորագույն տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման և կիրառման, ինչպես նաև մշակութային արժեքների թվայնացման գործընթացի խթանման անհրաժեշտություն,

6. Գրադարանային համակարգի գործունեության օպտիմալացում, գրադարանային ֆոնդի համալրում, ոլորտի հասանելիության ապահովման, ինչպես նաև միասնական տեղեկատվական շտեմարանի գործունեությանն ուղղված աշխատանքների իրականացման անհրաժեշտություն,
7. Գրադարանային գույքի և շենքային պայմանների բարելավում,
8. Գրադարաններում, թանգարաններում, թատրոններում տեխնիկական-տեղեկատվական բազայի վերազինման և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման անհրաժեշտություն,
9. Թանգարանային նմուշների ամրակայման, վերականգնման աշխատանքների շարունակական իրականացում, ֆոնդապահոցներում և ցուցադրություններում առկա թանգարանային առարկաների անվտանգության ապահովման անհրաժեշտություն,
10. Թանգարաններում ֆոնդապահոցների ջերմախոնավային համակարգի ստեղծում, առկա համակարգերի բարելավման և վերազինման անհրաժեշտություն,
11. Վերականգնման արվեստանոցների՝ նյութերով և տեխնիկայով վերազինման անհրաժեշտություն,
12. Թանգարանային գիտաշխատողների՝ արտերկրի հեղինակավոր թանգարաններում վերապատրաստում,
13. Թանգարանային հավաքածուների և արխիվի գիտական հետազոտության և ուսումնասիրման, դրանց արդյունքների ներկայացման անհրաժեշտություն,
14. Թատրոնների խաղացանկերի շարունակական համալրում,
15. Թատրոնների շենքային պայմանների բարելավման, նյութատեխնիկական բազայի արդիականացման անհրաժեշտություն,
16. Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանություն,
17. Մշակութային կրթության ոլորտի հաստատությունների գործունեության բարելավման, արվեստի և երաժշտական դպրոցներում ուսուցման մատչելիության և հասանելիության ապահովման անհրաժեշտություն,
18. Երաժշտական և արվեստի դպրոցներն անհրաժեշտ գույքով և երաժշտական գործիքներով համալրելու անհրաժեշտություն,
19. Կենդանաբանական այգու արդիականացման ծրագրի շարունակության ապահովում:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Մշակութային միջոցառումների իրականացում	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	Երևան քաղաքում պետական, ազգային տոների, հիշատակի օրերի, մասնագիտական տոների և այլ մասսայական միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ նվիրված Ամանորին և Սուրբ Ծննդյանը, Կանանց տոնին, Թատրոնի միջազգային օրվան, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Ջազի միջազգային օրվան, Պարի միջազգային օրվան, Թանգարանների միջազգային օրվան, Եվրոպական ժառանգության օրվան, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, Գրադարանավարի օրվան, Երևանի հիմնադրման 2804-ամյակին, արվեստի տարբեր բնագավառների զարգացման և հանրահռչակման նվիրված միջոցառումներ, փոխադարձ միջոցառումներ քույր և գործընկեր քաղաքներում,Երևանի օրերը քույր և գործընկեր քաղաքներում մշակութային միջոցառումների իրականացում, Երևանում Արցախի օրերի կազմակերպում, «Ուտեստ ֆեստ» գաստրոփառատոն, էթնո երաժշտության շարք, Երևանի ենթակայության մշակութային կազմակերպությունների բրենդավորում և հանրահռչակում, երեխաների և պատանիների գեղարվեստական զարգացման, երիտասարդության և տարբեր տարիքային խմբերի մշակութային ժամանցի կազմակերպման ծրագրեր, մասնավորապես՝ Արամ Խաչատրյանի անվան պատանի	Բնակչություն զբոսաշրջիկներ	Տարվա ընթացքում	Երևան քաղաքի բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոն, Երևանի ենթակայության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում միասնական ավարտական քննությունների կազմակերպում, «Երևանի քաղաքապետի մրցանակ» շնորհալի պատանիների աջակցության ֆոնդ, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոն, մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբար			
2	Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում արտադպրոցական դաստիարակություն	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	Մշակութային նախնական մասնագիտական կրթության իրականացում, արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում հետագա ուսման նախապատրաստում, մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցման իրականացում, բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի կազմակերպում, երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում, օժտված և տաղանդավոր երեխաների և պատանիների բացահայտում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում	Երեխաներ	Տարվա ընթացքում	Երևան քաղաքի բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

3	Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում և մշակույթի տներում արտադպրոցական դաստիարակություն		Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, սովորողների ազատ ժամանցի կազմակերպում, հետաքրքրությունների և նախասիրությունների զարգացման համար պայմանների ստեղծում, մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, հայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:			
4	Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում		Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, երեխաների և մեծահասակների մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, հայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:	Երեխաներ, պատանիներ և մեծահասակներ		
5	Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների համար գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում	Ոլորտային կազմակերպություններ	Նախատեսվում է ձեռք բերել և Երևանի ենթակայության արվեստի և երաժշտական դպրոցներին տրամադրել շուրջ 20 անուն երաժշտական գործիքներ՝ ավելի քան 100 հատ:	Երաժշտական և արվեստի դպրոցների սաներ	Տարվա ընթացքում	Երևան համայնքիբյուջե
6	Գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում և	ԱՀ ԿԳՄՍ նախարարություն, ոլորտային կազմակերպություններ	Նախատեսվում է ձեռք բերել և Արցախի արվեստի և երաժշտական դպրոցներին տրամադրել շուրջ 10 անուն երաժշտական գործիքներ:	ԱՀ երաժշտական և արվեստի		

	նվիրատվություն Արցախի Հանրապետության մշակութային կազմակերպություններին			դպրոցների սաներ		
7	Գրադարանային ծառայություններ	ՀՀ ԿԳՄՍ, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	Բնակչությանը գրադարանային տեղեկատվության տրամադրում և սպասարկում, գիտության և մշակույթի լուսաբանում ու մասսայականացում, գիտատեխնիկական գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն, կրթական համակարգի օժանդակում, համաշխարհային և հայ գրականության, պատմության, մշակույթի և այլ արժեքների տարածում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում:	Բնակիչներ		Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
8	Համայնքային գրադարանների ֆոնդերի համալրում	ՀՀ ԿԳՄՍ, հասարակական կազմակերպություններ	Համայնքային գրադարանների գրքային ֆոնդերի համալրումն իրականացվում է նվիրատվությունների, ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրված գրականության միջոցով, ինչը տեղեկատվական-գրադարանային ծառայությունների առկա պահանջարկի, ինչպես նաև գրադարանների զարգացման առումով գնահատվում է ոչ բավարար: Ծրագրի շրջանակում Երևանի ենթակայության 19 համայքնային գրադարանները կհամալրվեն նոր և պահանջարկ ունեցող գրականությամբ, նախատեսվում է նաև իրականացնել մաշված, արդիականությունը կորցրած գրականության դուրսգրման աշխատանքներ:	Համայնքային գրադարաններ, ընթերցասերներ		Երևան համայնքի բյուջե

9	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	Երևանի պատմամշակութային ժառանգությունը, հայկական կենցաղն ու մշակույթը, անցյալի և ներկայի արվեստի ստեղծագործությունները, ականավոր գործիչների կյանքն ու գործունեությունը ներկայացնող ցուցադրությունների կազմակերպում, բնագավառին առնչվող գիտական, կրթական գործունեության իրականացում, թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրություն, թանգարանային ֆոնդերի համալրում, թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրությունների իրականացում, նոր ցուցադրությունների կազմակերպում՝ ընդգրկելով պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված այլ միջոցառումներ և ցուցադրություններ: Նախատեսվում է իրականացնել «Երևան քաղաքի պատմության թանգարան» և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ների տեխնիկական վերազինման, մշտական ցուցադրությունների արդիականացման աշխատանքներ	Բնակիչներ, զբոսաշրջիկներ	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե, Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
10	Թատերական ներկայացումներ		Ազգային և համաշխարհային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, թատրոնների խաղացանկերի համալրում՝ յուրաքանչյուր թատերաշրջանի ընթացքում նոր և վերականգնված ներկայացումների ցուցադրությամբ, ստեղծագործական կազմերի համալրում, ներկայացումների որակի			

			բարձրացում, մասնակցություն հանրապետական և միջազգային փառատոններին: Նախատեսվում է իրականացնել «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» և «Մ. Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ների հիմնանորոգման, բեմերի, լուսային և ձայնային տեխնիկայի վերազինման աշխատանքներ,			
11	«Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» և Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ների շենքերի հիմնանորոգում	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Ծրագրի իրականացմամբ կապահովվի «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» և «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ների բնականոն գործունեությունը, կիրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ ՀՈԱԿ-ների շենքերում: Նշված աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը ձեռք են բերվել 2021 թվականի ընթացքում:	Բնակիչներ, զբոսաշրջիկներ	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե
12	Կենդանաբանական այգու ցուցադրություններ	ՀՀ ՇՄ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	Նախատեսվում է Երևանի կենդանաբանական այգում իրականացնել վայրի կենդանիների պահպանման, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացման և ցուցադրության աշխատանքները: Այգում կիրականացվեն համապատասխան աշխատանքներ՝ կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և փոխանակման միջոցով նոր տեսականիով ապահովելու նպատակով: Այգին նաև զբոսանքի և ժամանցի յուրատեսակ վայր է, որը հնարավորություն է ընձեռում այցելուներին ծանոթանալու վայրի բնաշխարհին, իրականացնում է մշակութային-լուսավորչական գործառույթ՝ այցելուներին տալիս է ինչպես բնապահպանական			ՀՀ պետական բյուջե, Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			դաստիարակություն, այնպես էլ ձևավորում է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և մարդասիրական վերաբերմունք: 2022 թվականին նախատեսվում է իրականացնել այգու տարածքի շառավղային ցանկապատի, արևային վահանակների, հոսքաջրերի մաքրման փոքր կայանների, տեսահսկման համակարգի, ջրի ֆիլտրացիոն համակարգերի տեղադրման, այգու կերախոհանոցի կառուցման և ԼԵԴ լամպերով էներգաարդյունավետ լուսավորության անցկացման, փղի/գետաձիու ազատավանդակի ընդլայնման նախագծային աշխատանքները:			
13	Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	Երաժշտական և պարային համերգային ծրագրերի կազմակերպում և իրականացում, օժտված երեխաների ստեղծագործական, կատարողական ձեռքբերումների, դեբյուտային ստեղծագործական աշխատանքների ներկայացում, միջոցառումների և մրցույթների, այդ թվում՝ համաքաղաքային, հանրապետական, միջազգային մրցույթների, փառատոների կազմակերպում և միջազգային մրցույթներին, փառատոներին մասնակցության ապահովում:			Երևան համայնքի բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
14	«ՀԱՅ-ԱՐՏ» մշակութային կենտրոն ՓԲԸ վերազինում և արդիականացում	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, հասարակական կազմակերպություններ	Ծրագրի իրականացմամբ կապահովվի «ՀԱՅ-ԱՐՏ» մշակութային կենտրոնի ջեռուցման համակարգի գործարկումը, ձեռք կբերվեն ներքին և արտաքին լուսավորության համակարգեր, կտեղադրվի անվտանգության համակարգ, կիրականացվի աշխատանքային նպաստավոր պայմանների համար	Բնակիչներ, զբոսաշրջիկներ		Երևան համայնքի բյուջե

			նախատեսված գույքի ձեռքբերում, կտեղադրվի արտաքին գովազդային ցուցանակ:			
15	Երևան քաղաքի հուշարձանների պահպանությանն ու օգտագործմանն ուղղված ծրագրերի իրականացում	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	Երևան քաղաքի հաշվեկշռում գտնվող պատմական և մշակութային անշարժ հուշարձանների (այդ թվում՝ արձաններ, կիսանդրիներ, հուշակոթողներ, հուշաղբյուրներ, հուշատախտակներ և այլն) մշտադիտարկում և գույքագրում, հասարակական իրազեկում, միջազգային փորձի ուսումնասիրում, համագործակցություն և փորձի փոխանակում ոլորտին առնչվող լսարանի հետ: Նոր տեղադրվող փոքր ճարտարապետական ձևերի (խաչքարեր, արձաններ, կիսանդրիներ և այլն) կանոնակարգում:			Ֆինանսավորում չի պահանջվում

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	Ք. Երևան	
	Չափի միավոր	2021
Փողոցների քանակ	միավոր	1100
Փողոցների երկարություն	կմ	955
Փողոցների և հրապարակների ընդհանուր մակերես	քմ	15.343
Վերգետնյա անցումներ	հատ	30
Ստորգետնյա անցումներ	հատ	41
Հուշարձաններ	հատ	401

Մայրաքաղաքը առավել բարեկեցիկ և հարմարավետ դարձնելու նպատակով վերանորոգման աշխատանքներ են կատարվում բակային տարածքներում:

Իրականացվում են մայթերի ընթացիկ նորոգման (սալիկապատման) և հիմնանորոգման աշխատանքներ:

Հաշվի առնելով, որ տարեկան մայրաքաղաք են ներմուծվում մեծ քանակությամբ ավտոմեքենաներ և փողոցներում երթևեկում են ծանր տրանսպորտային միջոցներ, որից մաշվում և քայքայվում է փողոցների ասֆալտբետոնե ծածկը, յուրաքանչյուր տարի անհրաժեշտություն է առաջանում իրականացնել փողոցների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կառուցել նոր փողոցներ, անցուղիներ և տրանսպորտային հանգույցներ:

Որպես մայրաքաղաքի այցեքարտ՝ կարևորվում են կամուրջների և կամրջային կառույցների արտաքին տեսքն ու հուսալիությունը, շենքերի ճակատային հատվածների պատճաշ վիճակը, որի ապահովման համար կատարվում են կամուրջների պահպանման, ընթացիկ նորոգման, շենքերի ճակատային պատերի նորոգման, լվացման և վթարային շքապատշգամբների վերանորոգման աշխատանքներ:

Գերակա խնդիր է հանդիսանում նաև մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ հարմարավետ պայմաններ ստեղծելը, որի նպատակով անհրաժեշտ է մեծացնել նոր հանգստի գոտիների, այգիների և պուրակների ստեղծման, բակային տարածքների և խաղահրապարակների կահավորման աշխատանքների ծավալները:

Ոլորտի գերակայություններից է կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և առողջապահական հաստատություններում վերանորոգման կամ հիմնանորոգման էներգախնայողության ապահովման աշխատանքների իրականացումը:

Մայրաքաղաքում բնակիչների և հյուրերի անվտանգ և հարմարավետ տեղաշարժը ապահովելու նպատակով ըստ անհրաժեշտության կառուցվում են հետիոտնային անցումներ, վերանորոգվում և շահագործման բարենպաստ պայմաններ են ստեղծվում առկա անցումներում:

Նոր անցումների ստեղծման վայրերն ընտրվում են ուսումնասիրության և մասնագիտական քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով նաև քաղաքացիների առաջարկները:

Վերգետնյա և ստորգետնյա անցումներից մեծ մասը բավարար վիճակում են, մի շարք գետնանցումներում, որտեղ անհրաժեշտ են վերանորոգման աշխատանքներ, քաղաքապետարանի ծրագրերով կատարվում են երեսապատման, աստիճանների նորոգման, հարդարման, ջրամեկուսացման, ջրահեռացման և լուսավորության աշխատանքներ: Վերանորոգման աշխատանքներ են իրականացվում նաև անցումներում գործող վարձակալող սուբյեկտների կողմից:

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է ՀՀ կառավարության 20.04.2002թ. հ.438 որոշման համաձայն Երևանի սեփականություն հանդիսացող 401 հուշարձանների պահպանումը, սպասարկումն ու պատվանդանների նորոգման աշխատանքները:

Երևանի քաղաքապետարանի տարեկան ծրագրերի շրջանակներում պարբերաբար կատարվում են հուշարձանների լվացման, պատվանդանների վերանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ՝

1. Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովում
2. Երևան քաղաքի փողոցների բարեկարգում, հիմնանորոգում,
3. Հուսալի և ժամանակակից ճանապարհների կառուցում
4. Հողային ծածկույթով (գրունտային) ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում,
5. Մայթերի բարեկարգում,
6. Հետիոտնի առավել մեծ կուտակումներ առաջացնող խաչմերուկներում ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում,
7. Կամրջային կառույցների հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, շահագործման բարելավում,
8. Առկա հանգստի գոտիների բարեկարգում և նորերի ստեղծում
9. Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և առողջապահական հաստատությունների շենքերում վերանորոգում:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Փողոցների բարեկարգում		Մայրաքաղաքի փողոցների, մայրուղիների, հրապարակների, բակային տարածքների և այլ ասֆալտապատման կարիք ունեցող տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքների իրականացում քաղաքի կայուն և համաչափ զարգացման գերակա սկզբունքի համատեքստում՝ բոլոր վարչական շրջաններում, շեշտը դնելով ծայրամասային վարչական շրջանների վրա: Կիրականացվեն նաև ճաքալցման աշխատանքներ պոլիմերային և բիտումոպոլիմերային մածուցիկ նյութերով, որը էապես երկարացնում է ասֆալտբետոնե ծածկի ծառայության ժամկետը և հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման, ասֆալտապատման աշխատանքներ: Նախատեսվում է շարունակել մայթերի վերանորոգում և սալիկապատում:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	Տարվա ընթացքում	ՀՀ պետ. բյուջե և Երևան համայնքի բյուջե
2	Հանգստի գոտիների և բակային տարածքների բարեկարգում		Նախատեսվում է հանգստի գոտիների պահպանում, բարեկարգում, նորերի կառուցում, բակային տարածքների կահավորում մանկական խաղերով և մարզասարքերով: Բոլոր վարչական շրջանների բակային տարածքներում կառուցել խաղահրապարակներ և մինի-ֆուտբոլի դաշտեր, ապահովել դրանց շահագործման անվտանգությունը և		2022թ. 2րդ.-3րդ. եռամսյակներ	Երևան համայնքի բյուջե

			պահպանումը			
3	Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և մշակութային հաստատությունների շենքերում և բակային տարածքներում վերանորոգման աշխատանքներ	ՄԱԶԾ և Ե5Ր Արևելյան Եվրոպայի էներգաարդյունա-վետության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի հետ	Ըստ անհրաժեշտության կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական հաստատությունների շենքերում ընթացիկ նորոգման, հարդարման, դռների և լուսամուտների փոխարինման, տանիքների, սանհանգույցների վերանորոգման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման, լուսավորության համակարգերի վերակառուցման աշխատանքների իրականացում: Նախատեսել վերականգնող էներգիայի աղբյուրների ինտեգրման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովումը, արևային ֆոտովոլտային կայանների և արևային ջրատաքացուցիչների կիրառումը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Եվրոպական ներդրումային բակի, ՄԱԶԾ և Ե5Ր Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի աջակցությամբ:	Բնակիչություն, զբոսաշրջիկներ		
4	Առողջապահական հիմնարկների վերանորոգում		Նախատեսվում է իրականացնել ընթացիկ նորոգման, հարդարման, դռների և լուսամուտների փոխարինման, տանիքների վերանորոգման աշխատանքներ:		2022թ. 2րդ.-3րդ. եռամսյակներ	
5	Կամուրջների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայություններ		Նախատեսվում է իրականացնել կամուրջների և կամրջային կառույցների դեֆորմացիոն կարերի, ջրահեռացման խողովակների մաքրում, հենարանների և թռիչքային կառուցվածքների զննում, վնասվածքների դեպքում՝ վերանորոգում,		Տարվա ընթացքում	

			բազրիքների, եզրաքարերի, լուսավորության սյուների և այլ էլեմենտների նորոգում, ներկում, երթևեկելի մասերի և մայթերի մաքրում, նորոգում:			
6	Ստոգետնյա հետիոտնային անցումներ	Մասնավոր ներդրողների և վարձակալների հետ	Ավտոտրանսպորտի ծանրաբեռնված երթևեկության պայմաններում քաղաքացիների անցուդարձը անվտանգ դարձնելու նպատակով անհրաժեշտ են հետիոտնային վերգետնյա և ստորգետնյա անցումներ, որի նպատակով իրականացվում են անցումների վերանորոգմանն, ինչպես նաև նոր անցումների կառուցման աշխատանքներ:	Բնակիչներ		Երևան համայնքի բյուջե
7	Կոյուղագծերի կառուցում		Ոռոգման և կոյուղատար համակարգերի վերանորոգում, նորերի կառուցում:		2022թ. 2րդ.-3րդ. եռամսյակներ	
8	Ադմինիստրատիվ շենքերի հիմնանորոգում և նորերի կառուցում		Ադմինիստրատիվ շենքերի հիմնանորոգման, նորերի կառուման աշխատանոքներ		2022թ. 2րդ.-4րդ. եռամսյակներ	

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երևան քաղաքի հանրային տրանսպորտի համակարգը ներառում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲ ընկերությունները և թվով 41 մասնավոր կազմակերպություններ, որոնք պայմանագրային հիմունքներով կանոնավոր ուղևորափոխադրումներ են իրականացնում Երևանի ներհամայնքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներում, ինչպես նաև «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ն, որն իրականացնում է Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի կահավորման, սպասարկման և հսկողության իրականացման աշխատանքներ:

Կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված ընդհանուր առմամբ խաթարվել է մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների ողջ գործընթացը, մտցված սահմանափակումների և ուղևորահոսքի անկման հետևանքով նվազել է հասարակական տրանսպորտով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալները:

Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրված է տարբեր մակնիշների, տարբեր երկրների թողարկման 610 ավտոբուսներով, որոնցից 249-ը՝ «ՀԻԳԵՐ» մակնիշի, 80-ը՝ «Բոգդան» մակնիշի, 153-ը՝ «Հունդաի» մակնիշի, 13-ը՝ «ՊԱԶ» մակնիշի, 15-ը՝ «Ջիջիանգ» և 100-ը՝ «ԳԱԶԵԼ Սիթի» մակնիշի: Ավտոբուսների միջին տարիքը կազմում է մոտ 8.8 տարի:

Թվով 610 ավտոբուսներից 373-ը գտնվում են Երևանի ենթակայության «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվեկշռում: 2021թ. ընթացքում ընկերությանը պատկանող թվով 16 ավտոբուսներ (8 հատ «Բոգդան» մակնիշի և 8 հատ «ՊԱԶ» մակնիշի) Երևանի քաղաքապետի համապատասխան որոշման հիման վրա խոտանվել են և դուրս գրվել:

2021թ. մայրաքաղաք ներկրված նոր «ԳԱԶԵԼ Սիթի» մակնիշի ավտոբուսները փոքր դասի են: Սահմանված կարգով անցկացված մրցույթների արդյունքում նշված ավտոբուսներով ներկայումս սպասարկվում են Երևանի ներհամայնքային միկրոավտոբուսային թվով 9 երթուղիներ (հ.հ.26, 38, 99, 74, 47, 24, 22, 46, 97):

Մայրաքաղաքում փաստացի գործում են 37 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է մոտ 345-355 միավոր շարժակազմ:

Ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում կազմում է մոտ 44,0%:

«ՀԻԳԵՐ» մակնիշի ավտոբուսներից 25-ի վրա տեղադրված, անսարք վիճակում գտնվող, հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար նախատեսված հատուկ վերելակային հարմարանքները Երևանի քաղաքապետի համապատասխան որոշման հիման վրա խոտանվել են և դուրս գրվել:

Մայրաքաղաքում փաստացի գործում է 56 միկրոավտոբուսային երթուղի (օրական միջին հաշվով երթուղիներ է դուրս բերվում 570-580 միավոր շարժակազմ), որոնք համալրված են մոտ 740 միավոր շարժակազմով: Բացառությամբ երկու «ՖԻԱՏ» և մեկ <<Սիտրոեն>> մակնիշների միկրոավտոբուսների, մնացած բոլորը «ԳԱԶԵԼ» մակնիշի միկրոավտոբուսներ են, միջին տարիքը կազմում է մոտ 12.0 տարի: Միկրոավտոբուսների զգալի մասը իրենց փաստացի վիճակով չեն բավարարում կանոնավոր ուղևորափոխադրումների և ուղևորների սպասարկման որակին ներկայացվող պահանջներին:

Սահմանված կարգի համաձայն, 15 տարին լրացած միկրոավտոբուսները ենթակա են պարտադիր փոխարինման և այդ տեսանկյունից մինչև 2020թ. ավարտը դադարեցվել է 2005թ. թողարկման թվով 349 միկրոավտոբուսների շահագործումը:

Չնայած վերջին տարիներին միկրոավտոբուսների քանակի զգալի կրճատմանը (2012թ. համեմատ՝ ավելի քան 1800 միավորով), դրանցով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը դեռևս մեծ է և ընդհանուր ծավալում կազմում է մոտ 42.0%:

Միկրոավտոբուսների ընդհանուր վիճակը գնալով վատթարանում է: Միայն 2021 թվականին, կազմակերպությունների սնանկացման և երթուղիների սպասարկումից հրաժարվելու պատճառով, դադարեցվել է թվով 8 միկրոավտոբուսային երթուղիների (հ.հ.2,18,36,39,45,50,52,59) աշխատանքը: Ստեղծված իրավիճակում միկրոավտոբուսների փոխարինումը ավտոբուսներով այլընտրանք չունի, ինչը և նախատեսվում է իրականացնել Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի ընդհանուր համատեքստում:

Որպես առաջին քայլ, ձեռք է բերվել և մայրաքաղաք ներկրվել է «ԳԱԶԵԼ Սիթի» մակնիշի թվով 100 նոր, փոքր դասի ավտոբուսներ, որոնք ներկայումս շահագործվում են Երևանի ներհամայնքային միկրոավտոբուսային թվով 9 երթուղիներում: Ավտոբուսային հավաքակազմի համալրման գործընթացը կրում է շարունակական բնույթ: Մասնավորապես՝ Երևան համայնքի միջոցներով ձեռք է բերվել և մինչև 2021թ. վերջը մայրաքաղաք կներկրվի նոր, միջին դասի (8.5մ երկարությամբ) «ԺՈՆԳԹՈՆԳ» մակնիշի 211 հատ ավտոբուս, իսկ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ նախատեսվում է ձեռք բերել 12մ երկարությամբ ևս 100 ավտոբուս:

Երևանի ներհամայնքային ավտոբուսային երթուղիներում ուղեվարձի գանձման և հաշվառման գործընթացը կանոնակարգելու, վճարման պրոցեսի թափանցիկությունն ապահովելու նպատակով «ԳԱԶԵԼ Սիթի» մակնիշի բոլոր 100 ավտոբուսներում տեղադրվել են մետաղադրամ ընդունող սարքեր: Նախատեսվում է նմանատիպ սարքերով կահավորել նոր ներկրվելիք «ԺՈՆԳԹՈՆԳ» մակնիշի 211 հատ ավտոբուսները:

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա են տարբեր մակնիշների թվով 51 տրոլեյբուս, այդ թվում՝ «Շկոդա» մակնիշի՝ 12 հատ «ՌԵՆՈ» մակնիշի՝ 5 հատ, «ԼԻԱԶ» մակնիշի՝ 34 հատ: Տրոլեյբուսային հավաքակազմը ընդհանուր առմամբ հնացած է, տրոլեյբուսների միջին տարիքը կազմում է մոտ 21.0 տարի, իսկ միայն «Ռենո» մակնիշի տրոլեյբուսներինը՝ 43 տարի:

Փաստացի սպասարկվում է 5 տրոլեյբուսային երթուղի, օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 35-38 միավոր շարժակազմ, ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը կազմում է մոտ 3.0%:

«ԼԻԱԶ» մակնիշի տրոլեյբուսներից 2-ը կահավորված է թեքահարթակով՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար:

Ավարտվել է Շիրակի փողոցում տրոլեյբուսային նոր հպակային ցանցի կառուցման հիմնական աշխատանքները՝ տրոլեյբուսային հ.2 երթուղու ուղեգիծը երկարացնելու նպատակով (Արտաշիսյան փողոցից մինչև «Կլայկ» խանութին հարակից տարածք)՝ մոտ 3000մ երկարությամբ, ինչը հնարավորություն կտա մեծացնելու երթուղու շահագործման արդյունավետությունը և կապահովի ավելի մեծ քանակի ուղևորների սպասարկումը: Շիրակի փողոցին հարակից հատվածում Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցման աշխատանքների ավարտից հետո հնարավոր կլինի ավարտել հպակային ցանցի կառուցումը և կազմակերպել տրոլեյբուսային հ.2 երթուղու շահագործումը:

Երևանի մետրոպոլիտենում շահագործվում է 10 կայարան (վերանորոգված է միայն մեկը), առկա է 45 վագոն, որոնց միջին տարիքը կազմում է մոտ 33.0 տարի: Վագոններից հիմնանորոգված է 26-ը, 2021թ. սկսած՝ թվով 3 վագոնների հիմնանորոգման աշխատանքները կավարտվեն ընթացիկ տարվա վերջին: 2022թ. նախատեսվում է հիմնանորոգել և արդիականացնել ևս 3 վագոն: Թվով 24 շարժասանդուղքներից հիմնանորոգված է 10-ը, 2022թ. նախատեսվում է ձեռք բերել և մոնտաժել թվով 9 շարժասանդուղք:

Մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» և «Զորավար Անդրանիկ» կայարանների միջև ընկած հատվածում նախատեսված մոտ 930մ երկարությամբ դրենաժային թունելի 250մ երկարությամբ հատվածը դեռևս ենթակա է կառուցման:

Վերջին հինգ տարիներին (բացառությամբ 2020թ.) մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումներում արձանագրվել է կայուն աճի միտում: Արդյունքում, ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում ևս աճել է և կազմում է մոտ 11.0%:

Մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալների զգալի աճ կարող է տեղի ունենալ միայն գործող գծի ընդլայնման, նոր կայարանների կառուցման և շահագործման արդյունքում:

Այդ ուղղությամբ ներկայումս տարվում են համապատասխան աշխատանքներ: Կազմակերպվել է Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման նպատակով համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնումների գործընթացը: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական կազմակերպությունը լավագույն միջազգային փորձի, հստակ հաշվարկների և չափորոշիչների հիման վրա մշակել է Երևանի հանրային տրանսպորտի նոր արդյունավետ երթուղային ցանց, ինչը ենթադրում է միասնական էլեկտրոնային տոմսային համակարգերի ներդրման հնարավորություն, զեղչային համակարգի կիրառում, նոր ժամանակակից շարժակազմերի (ավտոբուս, տրոլեյբուս) ձեռքբերում՝ բացառելով միկրոավտոբուսները, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցություն, ուղևորների սպասարկման որակի զգալի բարձրացում և այլն:

Այս համատեքստում սկսվել են Թևոսյան 5 հասցեում գործող հավաքակայանի վերակառուցման և արդիականացման աշխատանքները՝ ժամանակակից չափորոշիչներին համապատասխանեցնելու համար:

Նույն գործընթացի շրջանակներում բարեկարգվել է «Երևանտրանս» ՓԲԸ-ի Լենինգրադյան 16 հասցեում գտնվող տարածքը՝ ավտոբուսների կայանման աշխատանքները կազմակերպելու համար:

Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի արդիականացման աշխատանքների և բարեփոխումների շրջանակներում պլանավորվում է նոր, արդիական սարքավորումածրագրային համակարգերի ներդրում, ինչը հնարավորություն կտա ավտոկայանատեղերում իրականացնել տեսանկարահանող սարքերի ավտոմատացման գործառույթ, մասնավորապես՝ վճարովի ավտոկայանատեղերում կայանած տրանսպորտային միջոցների համարանիշերի ճանաչում և թվայնացում:

Մասնավորապես՝ Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղում վճարի գանձման գործընթացը կանոնակարգելու նպատակով փոխվել և տեղակայվել է նոր, էլեկտրոնային արդիական համակարգ:

Արդիական նոր համակարգերի ներդրումը հնարավորություն կտա բարելավելու ճանապարհային երթևեկության կազմակերպման աշխատանքների իրականացումը և բարձրացնելու դրանց արդյունավետությունը: Այդ ենթատեքստում, Երևան քաղաքի տարածքում ճանապարհային երթևեկության կազմակերպման աշխատանքները բարելավելու նպատակով ձեռք է բերվել տրանսպորտային հոսքերի մոդելավորման նոր ծրագիր, և իրականացվում է ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների գույքագրման և թվայնացման աշխատանքներ:

Մայրաքաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման գործընթացի շրջանակներում թույլատրվել է թվով 48 կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղեր, ինչպես նաև կազմակերպվել է 156 հատ թեթև մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանատեղ:

Մայրաքաղաքում սահմանված են հասարակական տրանսպորտի 856 կանգառներ, որոնցից միայն 352-ն են կահավորված կանգառասրահներով, մնացածը՝ միայն կանգառանշաններով:

«Աութդոր Էֆեկտ» ՍՊԸ-ի կողմից, «Երևանտրանս» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում, նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա վերջ թվով 5 կանգառներ կահավորել նորաոճ, թուջե ձուլվածքից նոր կանգառասրահներով: 2022թ. նմանատիպ կանգառասրահներով նախատեսվում է կահավորել ևս 10 կանգառներ:

Մայրաքաղաքի թվով 4 խաչմերուկներ (Աճառյան փողոցում՝ 3 խաչմերուկ և Էջմիածնի խճուղի-Երևանյան փողոց խաչմերուկ) կահավորված են «Խելացի» լուսացուցային օբյեկտներով:

Հետիոտների անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով մայրաքաղաքի թվով 42 չկարգավորվող հետիոտնային անցումներում տեղադրվել են հետիոտնային կանչի լուսացույցներ, մինչև տարեվերջ նախատեսվում է տեղադրել ևս 49-ը: Թվով 21 անցումներ նախատեսվում է կահավորել 2022թ. ընթացքում: Նախատեսվում է նաև իրականացնել «Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացույցների սպասարկման, պահպանման շահագործման և վթարավերականգնողական աշխատանքները:

Հիմնախնդիրներ՝

1. Հասարակական տրանսպորտի ոչ արդյունավետ գործող երթուղային ցանցը, որը չի բավարարում մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացին ներկայացվող առկա պահանջներին,
2. Միասնական սակագնային և տոմսային համակարգի բացակայություն,
3. Ավտոբուսային և տրոլեյբուսային հավաքակազմերը համալրված չեն,
4. Հասարակական տրանսպորտի շարժակազմի տեսականու և դրանց տեխնիկական չափանիշների ոչ բավարար վիճակ,
5. Հասարակական տրանսպորտի հավաքակայանները արդիական չեն, սահմանափակ է դրանց հնարավորությունները,
6. Հասարակական տրանսպորտի կառավարման արդյունավետ մոդելի բացակայություն,
7. Կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացում սպասարկման համար գանձվող վճարի շրջանառության թափանցիկության բացակայություն,
8. Միկրոավտոբուսների տեսակարար մեծ կշիռ,
9. Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի ոչ բավարար մակարդակ,
10. Վերգետնյա էլեկտրատրանսպորտի տնտեսության ոչ բավարար վիճակ,
11. Երևանի մետրոպոլիտենի սահմանափակ հնարավորություններ, առկա է գծի ընդլայնման, շարժակազմի, տնտեսության և ենթակառուցվածքների վիճակի բարելավման անհրաժեշտություն,
12. Կանգառների արդյունավետ տեղաբաշխման, դրանց բարեկարգման և կահավորման անհրաժեշտություն,
13. Հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության և որակի սպասարկման ոչ բավարար մակարդակ,
14. Ոչ ժամանակակից տրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրներ,
15. Ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակի բարելավման անհրաժեշտություն:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում նոր քաղաքային ավտոբուսների (հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված) ձեռբերման աշխատանքների իրականացում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ ճանապարհային ոստիկանություն	Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում, կարևորելով երթուղային ցանցի արդյունավետության ու ուղևորների սպասարկման որակի բարձրացումը, մշակվել և ստեղծվել է նոր երթուղային ցանց, որով նախատեսվում է բացառել միկրոավտոբուսների շահագործումը՝ դրանք փոխարինելով փոքր, միջին և մեծ տեղատարողության քաղաքային ավտոբուսներով: Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և ներկրել թվով 100 նոր, մեծ դասի (12 մետր երկարությամբ) ավտոբուսներ, որոնք հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022 թ. ընթացքում	ՎԶԵԲ-ի աջակցությամբ
2	Մետրոպոլիտենի վագոնների արդիականացում	Երևանի քաղաքապետարան	Երևանի մետրոպոլիտենի վերականգնման ծրագրի I և II փուլերով արդեն իսկ հիմնանորոգվել և արդիականացվել են թվով 26 վագոններ: 2022 թվականին նախատեսվում է արդիականացնել մետրոպոլիտենի 3 վագոն՝ 2 գլխամասային, 1 միջանկյալ, ձեռք			«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի

			բերել գնացքի 12 անվազույգեր, 12 անվասայլակի շրջանակ, 6 օդաճնշակ, իրականացնել 6 անվասայլակների և պնևմատիկ սարքավորումների վերանորոգում			միջոցներ, այլ աղբյուրներ
3	Մետրոպոլիտենի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում		Նախատեսվում է՝ 1. 6 Կվ մալուխների փոխարինում, 825 Վ մալուխների փոխարինում, մետրոպոլիտենի բաց հատվածի լուսավորության հիմնանորոգում,գծային և փոքր մեխանիզացիայի արկղերի, հեռակառավարման բաժանիչների վահանակների փոխարինում և արդիականացում, ռելեական պաշտպանության համակարգի արդիականացում: 2. Նախատեսվում է գերավազքով աշխատող թվով 9 շարժասանդուղքների ձեռքբերում և մոնտաժում: 3.Նախատեսվում է օդափոխման համակարգի արդիականացում՝ օդափոխիչների փոխարինում և դրանց միացում թվային վերահսկման համակարգին: 4.Թունելային հակահրդեհային և ջրամատակարարման խողովակաշարերի նորոգում:			
4	Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման որակի և անվտանգության	Երևանի քաղաքապետարան ՀՀ ճանապարհային ոստիկանություն	Վերգետնյա էլեկտրատրանսպորտի անխափան աշխատանքը և ուղևորափոխադրումների անվտանգությունը ապահովելու			«Երևանի էլեկտրատրանսպորտ»

	բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում		համար անհրաժեշտ է վերակառուցել ֆիզիկապես և բարոյապես մաշված հպակային ցանցը: Հաշվի առնելով պղնձալարերի մաշվածությունը և դրանից առաջացող բարդությունները՝ նախատեսվում է իրականացնել հպակային ցանցի նորոգման կամ վերակառոցման աշխատանքներ: Կազմվել է այն փողոցների ցանկը, որտեղ խիստ անհրաժեշտություն կա հին և մաշված հպակային ցանցի լարերը փոխարինել նորերով: Գործընթացը ծախսատար է, կրում է շարունակական բնույթ և կատարվում մաս-մաս՝ ըստ առաջնահերթության: Քարշի ենթակայանները սնուցող բարձր և արտածման ցածր լարման մալուխները նույնպես հնամաշ են և հաճախ են շարքից դուրս գալիս, որի հետևանքով հպակային ցանցը կարող է հոսանքազրկվել: Նման անսարքությունների հետևանքով էականորեն տուժում է աշխատանքի կազմակերպման որակը. խաթարվում է տրոլեյբուսների բնականոն աշխատանքը, ավելանում է միջակայքերի տևողությունը, ձախողվում է ազգաբնակչության անխափան և որակյալ սպասարկումը վերգետնյա էլեկտրատրանսպորտով՝առաջացնելով ուղևորների բողոքն ու դժգոհությունը: էլեկտրատրանսպորտի բնականոն			ՓԲԸ-ի միջոցներ, այլ աղբյուրներ

			շահագործման համար կենսականորեն անհրաժեշտ է իրականացնել քարշի ենթակայանները սնուցող մալուխային ցանցի հնամաշ մալուխների փուլային փոխարինում նորով: Նախատեսվում է նաև. 1.Ուղևորափոխադրումների կանոնավոր և անխափան գործընթացն ապահովելու նպատակով հպակային ցանցի 15000 մետր երկարությամբ մաշված բանվորական լարերի փոխարինում նորերով, 1.Գործող ցանցի արդիականացման և բարելավման նպատակով մալուխային ցանցի մասնակի վերակառուցում և նոր լարերի անցկացում. 1.1.3000մ երկարությամբ բարձր լարման մալուխային գծի վերակառուցում Բաշինջաղյանի փողոցից մինչև Մարգարյանի փողոց, 1.2.600 վ լարման 1800 մ երկարությամբ մալուխային գծի վերակառուցում Խորենացու, Իտալիայի և Գր. Լուսավորիչի փողոցներով:			
5	Հետիոտնային կանչի լուսացույցների ձեռքբերում և տեղադրում	ՀՀ ճանապարհային ոստիկանություն	Մայրաքաղաքի մի շարք փողոցների կահավորում հետիոտնային կանչի լուսացույցներով՝ 21 հատ:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022 թ. ընթացքում	Երևան համայնքի բյուջե
6	«Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգերի սպասարկման, պահպանման, շահագործման և		Իրականացնել Երևան քաղաքում տեղադրված հետիոտնային կանչի ռեժիմով լուսացուցային համակարգերի սպասարկման, շահագործման և			

	վթարավերականգնողական աշխատանքներ		վթարավերականգնողական աշխատանքներ			
7	Հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում	Մասնավոր ներդրողներ, ՀՀ ճանապարհային ոստիկանություն	Ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով, Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում, նախատեսվում է սահմանել նոր կանգառներ և շարունակել կանգառների կահավորման աշխատանքները: Նախատեսվում է կահավորել ևս 10 կանգառ:			Երևան համայնքի բյուջե

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի քաղաքաշինական զարգացմանն ուղղված ծրագրերն իրականացվել են Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծում ամրագրված հիմնական դրույթների համաձայն:

ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի N2330-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագիծը:

ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 7-ի N1402-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի 2006-2020թթ. իրականացման հիմնական միջոցառումների ծրագիրը: Նշված ծրագրով ընթացել են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմման աշխատանքները՝ հիմանակում վարչական շրջանների տարածքների գոտիավորման նախագծերը, այլ ծրագրեր, միջոցառումներ ու նախագծանախահաշվային փաստաթղթեր:

Երևան քաղաքի որոշակի վարչական շրջանների համար ամբողջական, կամ քաղաքի առանձին հատվածների տարածքների համար գոտիավորման նախագծեր են մշակվել և հաստատվել հիմնականում 2007-2009 թվականներին, հետագայում 2017թ-ին Ավան վարչական շրջանի մնացած առանձին հատվածի նախագիծը: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտևորման նախագիծը հաստատվել է 2020թ, Նոր-Նորք վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակման աշխատանքները ավարտվել են և նախագծի վերաբերյալ ՀՀ օրենքով նախատեսված իրականացվել են հասարակական երկու լսումներ և դեռևս երկու լսումներ պետք է անցկացվեն:

Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի որոշմամբ:

Մալաթիա-Սեբաստիա, Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ տարածքի բնակելի և հասարակական կառուցապատման, ճանապարհային և ինժեներական ենթակառուցվածքների նախագծանախահաշվային փաստթղթեր են կազմվել «Երևան ևախագիծ» ՓԲԸ-ի և մասնավոր կազմակերպության միջև կնքված պայմանագրով: Նախագիծը ներկայումս գտնվում է պետական համալիր փորձաքննության փուլում: Տվյալ թաղամասի ճանապարհային ցանցի և ինժեներական ենթակառուցվածքների իրականացման նպատակով վարվել են աշխատանքներ տարածքում առկա խոշոր կառուցապատողների հետ՝ նրանց բաժնեմասային մասնակցությամբ ներգրավելով այդ ենթակառուցվածքների ստեղծմանն աջակցելու գործում, նպաստելով ամբողջական թաղամասի կայացման գործընթացին:

Երևան քաղաքի անվտանգ և հարմարավետ Ճանապարհափողոցային ցանցի զարգացմանն ուղղված ընթացող աշխատանքների շարունակականությունն ապահովվում է: Խցանումների նվազման նպատակով մշտապես իրականացվում են բեռնաթափելուն ուղղված միջոցառումներ:

Ավագանին հաստատել է Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները:

Երևանի քաղաքապետարանը բարեկարգման ծավալուն ծրագրեր է իրականացնում մայրաքաղաքի հանգստի գոտիներում, ինչպես նաև մեծ աշխատանք է կատարվում քաղաքի պատմամշակութային ժառանգության պահպանման գործում: 2008 թվականից ի վեր, Էրեբունի ամրոցում իրականացվում է հնագիտական պեղումների լուրջ ծրագիր:

Հիմնախնդիրներ՝

Հիմնական նպատակ ընդունելով քաղաքացիների կյանքի որակի կայուն բարելավումը (բարեկեցության ու հնարավորությունների բարելավում, արդյունավետ կառավարման համակարգ) ունենալ Երևանի ժամանակակից քաղաքաշինական քաղաքականության հարցույցի /парадигма/ փոփոխությունը, առկա տարածական համակարգերի ձևափոխումներ (դրանց համար անհրաժեշտ ծրագրային, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման հիմքերի ստեղծում) նոր գաղափարախոսության ընդունում, որն իր մեջ ներառում է հետևյալ կետերը՝ տարածքների զարգացման պլանավորման և կառավարման համար նորարարական տեխնոլոգիաներով տեղեկատվական-վերլուծական կառավարման համակարգերի ներդրում, առավել շահավետ ու հավաք լուծումների՝ տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, նյութական մշակույթի հուշարձանների պահպանության ու բնապահպանական միջոցառումների իրականացման ապահովմամբ, անցում առավել նպատակահարմար և կառավարման էֆեկտիվ նոր թվային մակարդակի:

1. Վերանայել քաղաքաշինական կադաստրային համակարգի նպատակը և տեխնիկական հնարավորությունները,

1.1 քաղաքաշինական կադաստրային համակարգը որպես տարածքի զարգացման տեղեկատվական-վերլուծական համակարգ (ЦИМ УРТ)*,

1.2 քաղաքաշինական կադաստրային համակարգը, որպես քաղաքի եռաչափ կրկնորինակ,

1.3 քաղաքի զարգացման ծրագրի ձևավորող և կատարող մարմինների իրական ժամանակում կապ՝ աշխատանքների ընթացք, տվյալներ,

1.4 քաղաքի Գլխավոր հատակագծի համապատասխանեցում քաղաքի զարգացման ծրագրին և ինտեգրում քաղաքաշինական կադաստրային համակարգ,

1.5 Գլխավոր հատակագծի, գոտիավորման (զոնավորման), նպատակային նշանակությունների և այլ շերտերի ստորակարգության և փոխկապակվածության ապահովում,

1.6 քաղաքաշինական կադաստրային համակարգի անխոչընդոտ աշխատանքի ապահովմանն ուղղված իրավական դաշտի ապահովում,

1.7 քաղաքաշինական օբյեկտների ծրագրերի արտացոլում քաղաքաշինական կադաստրային համակարգում,

1.8 ներդրումային մթնոլորտի առողջացում քաղաքաշինական կադաստրային համակարգի միջոցով արդի սահմանափակումների և այլ տեղեկատվության տրամադրման միջոցով,

1.9 քաղաքաշինական կադաստրային համակարգը, որպես հանրային քննարկումների ժամանակակից հարթակ,

1.10 քաղաքաշինական կադաստրային համակարգը, որպես մրցույթների տվյալների տրամադրման միջոց,

2. Քաղաքի եռաչափ սկանավորում

3. Ինժեներական ենթակառուցվածքների ներկայիս փաստական տվյալների հավաքագրում (վերգետնյա և ստորգետնյա),

4. Երևան համայնքն իր տարածական պլանավորման փաստաթղթի մշակման աշխատանքների մեկնարկն ինտենսիվ կերպով կազմակերպելու նկատառումերով, վերոհիշյալ ճշգրիտ ելակետային տվյալների առաջինային անհրաժեշտությամբ պայմանավորված, , որպես նախաձեռնող կողմ հանդես գա այդ աշխատանքները քաղաքի սահմաններում իրականացնող, արդյունքները փոխանցելով

գեոպորտալին, որի դաշտում էլ հետագա թարմացումները կիրականացվեն և այդուհետ նույն հարթակից կօգտվեն բոլոր շահագրգիռ կողմերը,

5. Զբոսաշրջության, հանգստի և առողջարանային համալիրի զարգացման գործընթաց, որը պետք է նպատակամղվի ռեկրեացիոն պաշարների կայուն օգտագործմանը, մշակութային, բնական և կլիմայական առանձնահատկությունների և հնարավորությունների վերհանմանը և միջազգային ստանդարտներին համապատասխանեցմանը,

6. Մշակութային և բնական ժառանգության բոլոր օբյեկտների պահպանում ու պաշտպանություն,

7.Տարածքների կառուցապատման իրականացում վերականգնվող էներգառեսուրսների օգտագործմամբ, ներդաշնակ հարմարավետ միջավայր ստեղծող, սեյսմակայուն, երկարակյաց, էներգախնայողության ու էներգետիկ տեսանկյունից արդյունավետ տեխնոլոգիաների, շինանյութերի ու կոնստրուկցիաների օգտագործմամբ կառույցներով,

8. Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող կառուցապատումների զարգացման նվազեցում, Մարդկանց առողջությանը աջակցող՝ պահպանվող տարածքների առողջ էկոհամակարգերի պատշաճ կառավարում,

9. Վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղերի ավելացում,

10.Ստորգետնյա անցումների պատշաճ տեսքի և անվտանգության մակարդակի ապահովում,

11. Երևան քաղաքի առանձին հատվածների կառուցապատման հատակագծերի և վերակառուցման քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի մշակում:

*(ЦИМ УРТ) - ЦИФРОВАЯ ИНФОРМАЦИОННАЯ МОДЕЛЬ УПРАВЛЕНИЯ РАЗВИТИЕМ ТЕРРИТОРИИ

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակում՝ մինչև 2030 թվականը ՝ զարգացման հեռանկարով (1-ին փուլ- Երևանի մինչև 2030 թվականը քաղաքաշինական զարգացման հմնական ուղղությունների հսկատեցում, գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակում)		Ծրագրի նպատակն է Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծի մեջ քաղաքի զարգացման նոր ուղղությունների ընդգրկումը, գործողության ժամկետի մինչև 2030թ. երկարացումը, քանի որ գլխավոր հատակագծի իրագործման ժամկետն ավարտվում է 2020թ.:	Երևան համայնքը, քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտները	2022թ. սկած շարունակական	Երևանի համայնքի բյուջե
2	Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակում		Վարչական շրջանի տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջների սահմանում	Երևան համայնքը, քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտները		
3	Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման և հուշարձանների պահպանական գոտիների նախագծի լրամշակում (1-ին փուլ)		Հուշարձանների պահպանական գոտիները, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը ելակետային հիմք են տարածաշրջանների, քաղաքների և մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի համար: Նախատեսվում է մշակված նախագծի ամբողջական վերանայումը՝ հուշարձանների ցանկի, այդ թվում նորահայտ, փաստացի կատարված	Երևան համայնքը, ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, քաղաքաշինական գործունեության		

			փոփոխությունների արդյունքում: Նախագծի առաջադրանքը կներկայացվի ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների կողմից:	բոլոր սուբյեկտները		
4	Երևանի Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծերի մշակում	էջիս Ինթերնեյշնլ ընկերություն,	Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի նախագծի և համապատասխան մրցութային փաստաթղթերի պատրաստման համար Երևանի քաղաքապետարանի և էջիս Ինթերնեյշնլ ընկերության միջև կնքվել է համապատասխան պայմանագրի փոփոխություն, որի շրջանակներում էջիս Ինթերնեյշնլ ընկերությունը ներկայումս մշակում է վերջնական նախագիծ և մրցութային փաստաթղթեր: Առկա է ՀՀ կառավարության 04.02.2021թ. հ.142-Լ «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին» որոշումը	Երևան համայնքը, քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտները	2022թ.	
5	Արամ Խաչատրյան և Մամիկոնյանց փողոցները իրար միացնող ճանապարահատվածի և ինժիներական ենթակառուցվածքների կառուցում	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի» ՀՈԱԿ, ՀՀ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինու	1.Նախատեսվող ավտոճանապարհը կթեթևացնի Կոմիտասի պողոտայի ծանրաբեռնված երթևեկությունը զուգահեռ տրանսպորտային հաղորդակցուղով 2.Կառուցման գոտում ընդգրկված գույքերի նկատմամբ հանրության գերակա շահ է ճանաչվել ՀՀ կառավարության 24.12.2020թ. հ. 2143-Ն որոշմամբ: Օտարման գործընթացի վերջնաժամկետ է սահմանվել 2022թ. հունվարի 1-ը: Ներկա պահին իրականացվում է իրացման աշխատանքներ թվով 10 միավոր գույքից 5	Երևան համայնքը	2022 թ.	Երևան համայնքի բյուջե

		թյան կոմիտե, Հանրային ծառայություններ մատուցող ընկերություններ և կառավարման այլ մարմիններ	միավոր կնքվել է պայմանագիր, 3 միավորը նոր գնահատումից հետո կկնքվի, 2 միավոր գույքի վերաբերյալ հայցադիմումը ուղարկվել դատարան:			
6	Մալաթիա-Սեբաստիա, Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ հատվածի ճանապարհային ցանցի և ինժիներական ենթակառուցվածքների կառուցում	Նախագծային աշխատանքների համար կնքվել է պայամանագիր «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի «Լույսեր» ՓԲԸ-ի միջև դեռևս 2019 թվականին:«Լույսեր» ՓԲԸ-ն 2021թականի սեպտեմբերամսին գրություններով դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտե նշված թաղամասի կառուցապատման	Տարածքի բնակելի և հասարակական կառուցապատման, ճանապարհային և ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, կապ, տնտեսական-կենցաղային կոյուղի, հեղեղատար կոյուղի, ոռոգման ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, արտաքին լուսավորություն) նախագծանախահաշվային փաստթղթերի կազմման, փորձաքննության եզրակացության տրամադրան աշխատանքներ և շինարարության իրականացում:	Երևան համայնքը, քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտները՝ տարածքի կառուցապատողներ,	Նախագծային փաստաթղթերի համաձայնեցումից և շինարարության թույլտվություն տրամադրելուց հետո	Իրականացման նպատակով նախատեսվում է վարել աշխատանքներ տարածքում առկա խոշոր կառուցապատողների հետ ՝նրանց բաժնեմասային մասնակցությամբ ներգրավելով այդ ենթակառուցվածքների ստեղծմանն աջակցելու գործում,

		կարգավորման և հաղորդակցուղիների իրականացման նախագիծը պետական համալիր փորձաքննության ենթարկելու համար:				նպաստելով ամբողջական թաղամասի կայացման գործընթացին:
7	Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	Երևանի մետրոպոլիտեն, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե, ՀՀ Կադաստրի կոմիտե, Հանրային ծառայություններ մատուցող ընկերություններև ՀՀ պետական կառավարման այլ մարմիններ	1.Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի զարգացմամբ քաղաքի շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման ապահովում, կենտրոնի տրանսպորտային հոսքերի անագել կազմակերպման համար բեռնաթափում, նաև քաղաքի վարչական շրջանների համաչափ զարգացման համար կարևոր խթան, դրանց գրավչության բարձրացմանն ուղղված քայլ, հնարավորինս ժամանակի կորստի կրճատմամբ շրջանները միմյանց կապող հնարավորություն: 2.Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի շրջանակներում հանձնաժողովի կողմից անցկացվել են նիստեր: Գնահատող հանձնաժողովի	Երևան համայնքը, քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտները	Դեռ պայմանագիր կնքված չէ	Մետրոպոլիտենի հետ կապված մրցույթի աշխատանքների կազմակերպման և համակարգման նպատակով ընդունվել է Երևանի քաղաքապետի 17.08.2020թ. հ.2492-Ա որոշում «Մասնագիտական խումբ

			որոշմամբ գնային առաջարկների բացման 13.10.2021թվականին նշանակված նիստի ընթացքում որոշվել է ընթացակարգի հաղթող մասնակիցը՝«Մետրոգիպրոտրանս» ռուսական ընկերությունը: Ներկայումս ընթացակարգը գտնվում է անգործության փուլում, որի ավարտից հետո, մասնակցին կներկայացվի պայմանագրի կնքման առաջարկ:			ձևավորելու մասին»
8	Քաղաքաշինական կադաստրային համակարգի նպատակի և տեխնիկական հնարավորությունների վերանայում		տարածքների զարգացման պլանավորման և կառավարման համար նորարարական տեխնոլոգիաներով՝ տեղեկատվական-վերլուծական կառավարման համակարգերի ներդրում՝	Երևան համայնքը, քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտները	2021թ. սկսած և շարունակա կան	
9	Երևան քաղաքում գոյություն ունեցող խարխուլ բնակելի ֆոնդի վերացման և վերակառուցման ուղղությամբ ծրագրային աշխատանքներ	ՀՀ կառավարության 04.02.2021թ. հ.142-Լ «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին» որոշում			Նախորդ տարիներից մեկնարկած ծրագրեր	
10	«Հին Երևան պատմաճարտարապետական միջավայր»	Մասնավոր ներդրողներ	1.կորցված և քանդված պատմության և մշակույթի հուշարձանների տեղափոխման եղանակով տարածքում վերստեղծել	Երևան համայնքը, քաղաքաշինական գործունեության բոլոր	նախորդ տարիներից մենակած, ՀՀ	Մասնավոր ներդրումներ

			քաղաքաշինական գեղագիտական միջավայր՝ ճարտարապետական համալիր 2. ՀՀ փոխվարչապետի 09.09.2020թ. հ. 547-Ա որոշմամբ ստեղծվել է «Հին Երևան» կառուցապատման ծրագիրը համակարգող աշխատանքային խումբ: 3. Տարածքում առկա է օտարման ենթակա 47 միավոր գույք:	սուբյեկտները՝ տարածքի կառուցապատողներ	կառավարության 24 դեկտեմբերի 2020 թվականի N 2149-Ն որոշմամբ օտարման գործընթացի վերջնաժամկետը երկարաձգվել է 1 տարով՝ մինչև 28.12.2021թ-ը:	
11	«Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում»	ՀՀ կառավարության 22.03.2018թ. N332-Ն որոշման հ.1 հավելվածով տարածքները ձեռք բերողներ	1.Երևան քաղաքի 33-րդ թաղամասի կառուցապատման ծրագրի շրջանակներում իրականացվող բազմաֆունկցիոնալ թաղամասի կառուցում: Ընթանում են առկա գույքերի իրացման, որոշ հատվածներում հողային և շինարարական աշխատանքներ: 2. ՀՀ փոխվարչապետի 19.05.2020թ. N.249-Ա «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի/Ֆիրդուսի/ կառուցապատման ծրագրի իրականացման աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» որոշում	Երևան համայնքը, քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտները՝ տարածքի կառուցապատողներ	նախորդ տարիներից մակնարկած, 2022թ. ին և սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը 2023 թվականի	Մասնավոր ներդրումներ

			3. Ըստ կառուցապատողների կողմից ներկայացված բանավոր տեղեկատվության 01.10.2021թ. դրությամբ առկա է չօտարված մոտ 119 գույք+38 գույք Տիգրան Մեծ փողոցի շենքերից: 4.Երևանի քաղաքապետարան 2021թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տարբեր երկու հայտերով դիմել են կառուցապատողներ նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և շինարարության թույլտվության տրամադրման նպատակով՝բազմաֆունցիոնալ բնակելի կառույցի իրականացման համար Հանրապետության փող. (Ֆիրդուսի թաղամաս) թիվ 2,4,5 լոտերի համար, բազմաֆունցիոնալ համալիրի կառուցման համար 33-րդ թաղամաս. (Ֆիրդուսի թաղամաս) թիվ 9 լոտի համար		հունվարի 1-ն է	
12	«Կոնդ թաղամասի վերակառուցման ծրագիր»		1. ՀՀ փոխվարչապետի 2020թ. սեպտեմբերի 1-ի N516-Ա «Երևան քաղաքի Կոնդ թաղամասի պատմաքաղաքաշինական միջավայրի և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» որոշում 2. «Կոնդ» թաղամասի վերակենդանացման հայեցակարգային-քաղաքաշինական-ճարտարապետական երկփուլ մրցույթ էր հայտարարվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից: 2021	Երևան համայնքը		

			թվականի սեպտեմբերի 25-ին կայացել է մրցույթի ժյուրիի ամփոփիչ նիստը, որի ժամանակ ներկայացվել են ժյուրիի անդամների կողմից 1-ին փուլի համար ներկայացված աշխատանքների գնահատականներն ու կարծիքները՝ համաձայն սահմանված ձևաչափի: 2021 թվականի հոկտեմբերի 6-ին էլեկտրոնային եղանակով ամփոփվել է 1-ին փուլի արդյունքները, որի համաձայն 2-րդ փուլ են անցել ամենաբարձր միավոր հավաքած թվով 7 աշխատանք:			
13	Երևան քաղաքի Կասկադ համալիրի տարածքում թանգարանի և հարակից հատվածի կառուցապատման ներդրումային ծրագիր	Գաֆէսճեան արվեստի կենտրոն, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ	Կասկադ ճարտարապետական-կոթողային համալիրը հասցնել ավարտուն տեսքի: Կասկադ-համալիրով քաղաքի հյուսիսային և կենտրոնական հատվածները միմյանց կապել՝համալիրն ամբողջական տեսքի բերելու անհրաժեշտություն	Երևան համայնք, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ, Երևան համայնքի բնակիչներ, Երևան այցելող հյուրեր և զբոսաշրջիկներ, Գաֆէսճեան արվեստի կենտրոն		
14	Երևան քաղաքի Նոր-Նորքի զանգվածը կենտրոն վարչական շրջանի հետ կապող տրանսպորտային միջոցի նոր (բազմամոդուլ)	ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ	Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի արդիականացման՝ էլեկտրականությամբ աշխատող միջոցների կիրառմամբ այլընտրանքային տրանսպորտի ձևերի ներմուծման ռազմավարությանն ուղղված, տրանսպորտային հոսքերի	Երևան համայնք, մասնավոր ներդրողներ, Երևան համայնքի բնակիչներ		

	ճոպանողու՝ ստեղծման ներդրումային ծրագիր		բեռնաթափման, գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացման նպատակով նոր (բազմամոդուլ) ճոպանողու ներդրման միջոցով քաղաքի համայնքների միջև լրացուցիչ օդային կապի ստեղծում, քայլ դեպի կանաչ քաղաք, միաժամանակ զբոսաշրջային գրավչության բարձրացում:			
15	Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի էսքիզային առաջարկ «Սասուցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ Սուրմալու տոնավաճառի հարևանությամբ	Երևանի մետրոպոլիտեն, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ	Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի պոլիտենի գոյություն ունեցող ցանցի զարգացման ալտերնատիվ հնարավորություն, Էսքիզային նախագիծը ենթադրում է «ՍասունցիԴավիթ» և «ԶորավարԱնդրանիկ» կանգառների միջև հեռավորության նվազեցում, տրանսպորտային խնդիրների թեթևացում, ավտոմեքենաների կրճատում, մարդկային հոսքերի կառավարում, հասանելիության հեշտացում, մետրոյի զարգացում, շրջակա միջավայրի տնտեսական էֆեկտ և շահութաբերություն:	Երևան համայնքը և բնակիչները, մասնավոր ներդրողները		
16	Երևանի Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան փողոցները միացնող ճանապարհա-հատվածի կառուցման գոտում ընդգրկված գույքերի նկատմամբ հանրության գերակա շահ է ճանաչվել ՀՀ կառավարության	Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացմա	Արամ Խաչատրյան և Մամիկոնյանց փողոցները իրար միացնող ճանապարահատվածի և ինժիներականենթակառուցվածքների կառուցում:		Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե

		ն գրասենյակի» ՀՈԱԿ				
17	Քաղաքային կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր		Նուբարաշենի խճուղուն հարող և Աջափնյակի աղբավայրերի փակում և նոր քաղաքային աղբավայրի կառուցում: Նախատեսվում է մեկնարկել Նուբարաշենի խճուղուն հարող առկա աղբավայրին հարակից տարածքում նոր աղբավայրի կառուցման ծրագիրը:	Բնակիչներ, զբոսաշրջիկներ	Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2024թ-ի ավարտին:	ՎԶԵԲ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միավայրի գործընկերություն (E5P), ԵՄ, ԵՆԲ
18	Քաղաքային արտաքին լուսավորություն	Լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացման համար պայմանագիր է կնքվել ֆիննական Օննինեն ընկերության հետ:	28 փողոցներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները. · առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, · փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները, · փոխել լուսավորության հենասյուների բարձակները, · տեղադրել ստորգետնյա հաղորդուղիներ՝պլաստիկ խողովակաշարերով, · տեղադրել լուսավորության համակարգի նոր մալուխներ՝ ստորգետնյա հաղորդուղիներում · ներդնել լուսավորության ցանց կառավարման համակարգ:	Բնակիչներ, զբոսաշրջիկներ	Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2022 թ.-ի ավարտի ն:	ՎԶԵԲ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերություն(E5P)
19	Երևանի էներգաարդյունավետության ծրագիր		48 մանկապարտեզներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.	Բնակիչներ, զբոսաշրջիկներ	Նախատեսվում է ավարտել 2022թ-ին:	ԵՆԲ, Արևելյան Եվրոպայի էներգախնա

			•առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, •տեղադրել օդափոխման համակարգ •փոխել ջուր/կոյուղու համակարգը •վերակառուցել ջեռուցման համակարգը կամ տեղադրել նոր համակարգ •փոխել էլեկտրահաղորդման գծերը •տեղադրել արևային պանելներ •իրականացնել սեյսմիկ ամրացում • ներքին հարդարում			յողության և շրջակա միջավայրի գործընկերություն (E5P), Կանաչ կլիմայի հիմնադրամ, Երևանի քաղաքապետարան
20	Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի կառուցում (Բաբաջանյան-Աշտարակ և Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածներ)		Նախատեսվում է կառուցել Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհահատվածները՝ Բաբաջանյան-Աշտարակ և Արգավանդ-Շիրակ: Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատված – 9.4 կմ Արգավանդ-Շիրակ ճանապարհահատված – 2.7 կմ	Բնակիչներ, զբոսաշրջիկներ	Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2023 թվականի դեկտեմբերին:	Ասիական զարգացման բանկ
21	Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի կառուցում (Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատված, Արշակունյաց պողոտա, Նոր Շիրակ,Արտաշատի խճուղի)		Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատված-5.4կմ, Արշակունյաց պողոտա-1.4կմ, Շիրակ փողոցի երկարացում-1.2կմ, Արտաշատի խճուղի-2,3կմ	Բնակիչներ, զբոսաշրջիկներ		Ասիական զարգացման բանկ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության	
Մարզական կազմակերպություններ	**41**
Աշխատողների քանակ	950
Երեխաների քանակ	9 657

Երևան համայնքի կողմից յուրաքանչյուր տարի իրականացվում են 60-65 առողջարարական, զանգվածային, մարզական և երիտասարդական միջոցառումներ, որոնք միտված են բնակչության առողջ ապրելակերպի խթանմանը, մայրաքաղաքի ուժեղագույն մարզիկների բացահայտմանն ու հավաքական թիմերի ձևավորմանը:

Երևան քաղաքում գործում են մարզական միություններ, մարզական ակումբներ, լողավազաններ, մարզադաշտեր, թենիսի կորտեր, հրաձգարաններ, ստադիոններ, մարզադահլիճներ, նետաձգարան, աթլետիկական մանեժ, հեծանվահրապարակ, թիավարության ու վինդսերֆինգի ջրամբարներ, մարզամշակութային կենտրոններ, ձիարշավարան, բազմագործառութային փոքր դաշտեր:

Յուրաքանչյուր տարի անցկացվում են 35 մարզաձևերի Երևան քաղաքի առաջնություններ, հուշամրցաշարեր, առողջարարական, զանգվածային միջոցառումներ, Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար 9 մարզաձևերից կազմված բակային փառատոն և ըմբշամարտի միջազգային մրցաշար:

2016 թվականից սկսած Երևանի քաղաքապետարանն իրականացնում է արտադպրոցական /մարզական/ կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման ծրագրեր:

41 մարզական կազմակերպություններից միայն ութն ունեն թեքահարթակներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար:

Երիտասարդները Երևան համայնքի առավել դինամիկ հատվածն են, ուստի անհրաժեշտ է երիտասարդներին ներգրավել համայնքի կառավարման գործընթացում և նրանց մասնակից դարձնել քաղաքի ամենատարբեր խնդիրների լուծմանը՝ օգտագործելով երիտասարդների ստեղծարար և նորարարական գաղափարները՝ հանուն համայնքի զարգացման:

Հիմնախնդիրներ՝

1. Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի զարգացման, մասսայականացման, բնակության և հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմանների ստեղծման, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման անհրաժեշտություն,
2. Բնակչության լայն զանգվածների համար մարզական ակումբներից, մարզաբազաներից՝ մասնավորապես աթլետիկական վազքուղիներից, լողավազաններից ու մարզադահլիճներից օգտվելու մատչելիության ապահովում,
3. Պետական, համայնքային, հասարակական ու մասնավոր մարզական կազմակերպությունների փոխգործակցության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն,
4. Տարածաշրջանային և միջազգային մարզական շարժումների հետ համագործակցության հաստատման և ընդլայման անհրաժեշտություն,

5. Հաշմանդամություն ունեցող մանուկների և պատանիների համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծման անհրաժեշտություն,
6. Մայրաքաղաքի երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն,
7. Երիտասարդների աշխատանքային իրավունքների պաշտպանության ուղղությամբ արհմիությունների հետ համագործակցության հաստատման անհրաժեշտություն,
8. Համայնքային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի աջակցման ու խրախուսման, ինչպես նաև երիտասարդական կազմակերպություններին և երիտասարդական նախաձեռնություններին համայնքի կառավարման գործընթացին մասնակցության մակարդակը բարձրացնելու անհրաժեշտություն,
9. Մայրաքաղաքում երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի խրախուսման և համայնքում կամավորական մշակույթի խթանման անհրաժեշտություն,
10. Երևան համայնքի երիտասարդական քաղաքականության մշակման անհրաժեշտություն,
11. Տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, երիտասարդության ոլորտում Երևան համայնքի իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացման և վերջիններիս իրականացման համար հավելյալ ֆինանսական միջոցներ ներգրավելու անհրաժեշտություն,
12. Երևան համայնքի և հասարակական ու պետական կառույցների համագործակցության արդյունքում Երևանի երիտասարդական և մշակութային համայնքային կենտրոնների ստեղծման կամ առկա մշակութային կենտրոնների վերափոխման անհրաժեշտություն,
13. Երևան համայնքի երիտասարդների շրջանում իրենց կյանքի տարբեր ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման անհրաժեշտություն:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Արտադպրոցական դաստիարակություն	ՀՀ այլ մարզերի համապատասխան ստորաբաժանումների, հասարակական կազմակերպությունների /ֆեդերացիաներ/, լիազոր մարմնի /ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն/, Երևանի քույր քաղաքների հետ:	Արտադպրոցական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի սերմանում, Երևանի ու Հայաստանի հավաքական թիմերի համալրում բարձրակարգ մարզիկներով:	Երևան համայնքի պատանի մարզիկներ /երեխաներ/	2022թ. հունվար-դեկտեմբեր	Երևան համայնքի բյուջե
2	Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի մշակում և ծրագրի մեկնարկ	Միջազգային և հասարակական կազմակերպություններ, ֆեդերացիաներ, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, մարզադպրոցներ:	Երևանի ենթակայության մարզադպրոցների գործունեության շենքային պայմանների, գործող մարզաձևերի, ծառայությունների մատուցման պայմանների, անձնակազմի կարողությունների, կառավարման սկզբունքների գնահատում և վերանայում՝ համալիր ուսումնասիրության արդյունքում:	Երևան համայնքի երեխաներ և մարզադպրոցներում ընդգրկված մարզիկներ		

3	Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզադպրոցների տնօրենների, փոխտնօրենների, մեթոդիստների և մարզչական անձնակազմի համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում	Միջազգային և հասարակական կազմակերպություններ, ֆեդերացիաներ, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ԲՈՒՀ-եր, մարզադպրոցներ:	Երևանի ենթակայության մարզադպրոցների անձնակազմի համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում:	Երևանի ենթակայության մարզադպրոցների անձնակազմ		
4	Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպությունների էլեկտրոնային հարթակի ստեղծում	Միջազգային և հասարակական կազմակերպություններ, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, մարզադպրոցներ:	Բարձրացնել Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մարզադպրոցների գործունեության թափանցիկությունը, հստակեցնել երեխաների հերթագրման, ընդգրկման և ազատման ընթացակարգերը, նվազեցնել փաստաթղթաշրջանառությունը, ստեղծել մարզադպրոցների վերաբերյալ տվյալների բազա: Երևանի ենթակայության մարզադպրոցների տվյալների բազայի ստեղծում, հերթագրման/ընդգրկման համակարգի ներդրում:	Երևանի ենթակայության մարզադպրոցներ, Երևան համայնքի երեխաներ		
5	Սպորտային միջոցառումների կազմակերպում	ՀՀ այլ մարզերի համապատասխան ստորաբաժանումների,	Համաքաղաքային զանգվածային առողջարարական	Տարբեր տարիքային խմբերի	2022թ. հունվար-	

		հասարակական կազմակերպությունների /ֆեդերացիաներ/, լիազոր մարմնի /ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն/, Երևանի քույր քաղաքների հետ:	մարզական ու երիտասարդական 65 միջոցառումների կազմակերպում, 35 մարզաձևերից Երևան քաղաքի առաջնությունների անցկացում, Երևան քաղաքի հավաքական թիմերի ձևավորում ու հանրապետական և միջազգային մրցումներին ու մրցաշարերին հավաքականների մասնակցության ապահովում:	մարզիկներ, հաշմանդամներ	դեկտեմբեր	
6	Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերում	ՀՀ-ում գրանցված շահագրգիռ կազմակերպություններ:	Մարզական կազմակերպությունները ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով և մարզագույքով ապահովում:	Մարզական կազմակերպություններ		
7	«Աշխատանք երիտասարդներին» ախատանքային տոնավաճառ	Միասնական սոցիալական ծառայությունների, հասարակական կազմակերպությունների, ձեռնարկատիրությունների, ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների,	Միջոցառման ընթացքում Երևան համայնքում բնակվող երիտասարդները հնարավորություն կունենան միաժամանակ հանդիպել առնվազն 50 գործատուի, մասնակցել առնվազն 5 կարողությունների զարգացման	Երևան համայնքի երիտասարդներ	2022թ. հունվար-մայիս	

		երիտասարդ կամավորների հետ:	դասընթացների, կապեր հաստատել տարբեր գործատուների հետ և գնել իրենց որակավորմանը համապատասխան աշխատանք:			
8	Երիտասարդների նորարարական ծրագրերի ֆինանսավորում	Հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կազմակերպությունների և կառույցների, երիտասարդ կամավորների հետ:	Երևան համայնքի խնդիրների լուծմանը միտված երիտասարդական կազմակերպությունների նորարարական ծրագրերի ֆինանսավորում, որոնք ուղղված կլինեն Երևան համայնքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախանշած խնդիրների լուծմանը՝ նորարարական լուծումների միջոցով:	Երևան համայնքի երիտասարդներ, Երևան համայնքում գործող երիտասարդական կազմակերպություններ	2022թ. հունվար-դեկտեմբեր	
9	Երևան համայնքի երիտասարդների կարիքների ուսումնասիրություն	Հասարակական կազմակերպությունների, ձեռնարկատիրությունների, ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների, երիտասարդ կամավորների հետ:	Ձևակերպել Երևան համայնքի երիտասարդների հիմնական խնդիրները և դրանց լուծման հնարավոր ճանապարհները և ծրագրերը, որոնք կարող է իրականացնել Երևանի քաղաքապետարանը Երևան համայնքում: Հետազոտության արդյունքների հիման վրա մշակել Երևան համայնքի երիտասարդական քաղաքականությունը, դրա	Երևանի քաղաքապետարան, Երևան համայնքի երիտասարդներ, Երևան համայնքում գործող երիտասարդական կազմակերպություններ		Երևան համայնքի բյուջե

			իրականացման 5–ամյա ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը:			
10	Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում	Հասարակական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների, մարզային երիտասարդական կառույցների, երիտասարդ կամավորների հետ:	Օգոստոսի 12-ին՝ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ տոնական համերգի և ցուցահանդեսի կազմակերպում մայրաքաղաքի որևէ կենտրոնական մարդաշատ զբոսայգում:	Երևան համայնքի երիտասարդներ	2022թ. հունիսից-օգոստոս	
11	Կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառման կազմակերպում	Հասարակական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների, երիտասարդական կառույցների, երիտասարդ կամավորների հետ:	Կամավորների միջազգային օրվա կապակցությամբ Երևան համայնքի լավագույն կամավորների խրախուսում: Լավագույն կամավորների թեկնածուների ներկայացում Երևանում գործող ՀԿ-ների, հիմնադրամների, ԲՈՒՀ-երի և այլ կազմակերպությունների կողմից: Թեկնածությունների ընդունում, հայտերի գնահատում, մրցույթի անցկացում և 20-30 լավագույն կամավորներին պարգևատրում շնորհակալագրերով:		2022թ. սեպտեմբեր-դեկտեմբեր	Երևան համայնքի բյուջե

ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ

Երևանի քաղաքապետարանը, հավատարիմ մնալով զարգացման նախանշված սկզբունքներին և ընդունված տեսլականին, հետևողականորեն իրականացնում է ենթակառուցվածքների կառավարման, ոլորտների գործառույթների և տրամադրվող ծառայությունների թվային փոխակերպումը: Այս գործընթացը շարունակական է և ենթադրում է մշտական և նպատակաուղղված աշխատանք: Տվյալ պահին նպատակի ձևաչափը սահմանվում է 2019 թվականին ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի գրասենյակի աջակցությամբ մշակված քաղաքային տնտեսության ոլորտների թվային փոխակերպման՝ «ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ռազմավարական ծրագրով: Այն հիմնական ուղենիշ է հանդիսանալու ներդրվող և բարելավվող համակարգերի, առաջնահերթությունների և դրանց կառուցվածքային սկզբունքների համար:

Առաջնորդվելով վերոնշյալ ռազմավարությամբ՝ վերջին 3 տարիների ընթացքում մշակվել և ներդրվել են բազմաթիվ գործառույթների ավտոմատացման, կառավարման, վերահսկման, տեղեկատվական և անվտանգության համակարգեր, շարունակական սպասարկում և զարգացում են ունեցել արդեն իսկ ներդրված համակարգերը, գործարկվել են մի շարք էլեկտրոնային ծառայություններ: Դրանցից, մասնավորապես, կարելի է առանձնացնել «Մանկապարտեզ» էլեկտրոնային կառավարման համակարգի նոր մոդուլի մշակումը և ներդրումը, որի միջոցով ծնողների շուրջ 40 տոկոսն արդեն իսկ հերթագրում և հետևում է իր երեխայի հերթին՝ տրամադրված առցանց ծառայության միջոցով:

2019 թվականին, առաջին անգամ տարածաշրջանում, մունիցիպալ ոլորտում կիրառվեց 5-րդ սերնդի բլոկչեյն (block chain) տեխնոլոգիան քաղաքացիների հետ փոխգործակցության activecityzen.am հարթակում, որի միջոցով քաղաքացիների ներկայացված՝ քաղաքային միջավայրի բարելավման առաջարկները հենց իրենց քվեարկության արդյունքների հիման վրա ստացան ֆինանսավորում Երևանի բյուջեից: Նորագույն տեխնոլոգիայի այս կիրառումը ոչ միայն նպաստում է ուղիղ ժողովրդավարության զարգացմանը, այլև լավ նախադեպ է ստեղծում ապագայում այն կիրառելու նաև ընտրությունների կամ հանրաքվեների կազմակերպման գործընթացում՝ որպես պաշտպանված էլեկտրոնային քվեարկության համակարգ:

Քաղաքացիներին տրամադրվող էլեկտրոնային ծառայություններից հարկ է մատնանշել 2021 թվականին գործարկված շրջիկ առևտրի վերահսկման և տեղի ամրագրման, արտաքին գովազդի կառավարման և առցանց թույլտվությունների տրամադրման, դիմումների առցանց ներկայացման և պատասխանների ստացման համակարգերը:

Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիում գործարկվեց “Smart parking” համակարգը, ինչը հագեցած է նորարար լուծումներով, մասնավորապես՝ պետհամարանիշի ինքնաշխատ նույնականացմամբ անհպում մուտքի և կայանատեղիի համար վճարման ինքնասպասարկման տերմինալներով, որոնք թույլ են տալիս վճարել կանխիկ դրամով, բանկային քարտով, NFC համակարգով: Այս համակարգը բացի թափանցիկության և վերահսկողության էական բարելավումից, նաև առաջացրել է օգտվողների գոհունակությունը:

2021 թվականին էականորեն բարելավվել է կիբեր անվտանգության ոլորտը, ներդրվել են պաշտպանական համակարգեր: Աշխատանքներ են սկսվել Առևտրի և սպասարկման ոլորտի թվայնացման և Տուրիզմի զարգազմանն ուղղված ոլորտներում:

2022 թվականին նախատեսված է մեծածավալ աշխատանքներ իրականացնել քաղաքային կառավարման կենտրոնի ստեղծման, հասարակական տրանսպորտի տոմսային տնտեսության փոխակերպման, տրամադրվող Էլեկտրոնային ծառայությունների ընդլայնման, երկրատեղեկատվական համակարգերի ներդրման և երթևեկության կառավարման և այլ ոլորտներում:

Հիմնախնդիրներ՝

1. Թվայնացման արդյունքում առաջացող կիբեր անվտանգության ապահովում,
2. Տեխնոլոգիական համակարգերի մատակարար ընկերություններից առաջացող կախվածություն,
3. Ոլորտի մասնագետների սղություն և դրանց պահանջարկի անընդհատ մեծացող տեմպեր,
4. Անձնական տվյալների պաշտպանություն,
5. Քաղաքային տնտեսության ոլորտների աշխատակիցների տեխնոլոգիական գիտելիքների պակասի հետևանքով անհրաժեշտ SS համակարգի տեխնիկական պահանջների մշակման անկարողություն:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Ժամանակի պահանջներին համահունչ զարգացման, քաղաքացիական պաշտպանության, քաղաքի դիմակայունության և անվտանգության բարձրացման, ռեսուրսների խնայողության, էլեկտրոնային ծառայությունների տրամադրման, էկոհամակարգի բարելավման, տրամադրվող ծառայությունների որակի և քաղաքացիների կենսամակարդակի բարձրացման, ինչպես նաև ներդրումներ ներգրավելու նպատակով անհրաժեշտ է քաղաքային ենթակառուցվածքներում իրականացնել թվային տրանսֆորմացիա՝ համաձայն մշակված ռազմավարության:	ՄԱԶԾ (UNDP), «ՋԻ ԱՅ ԶԵԹ» (GIZ) GmbH), Համաշխարհային Բանկ (World BANK), Գործընկեր քաղաքներ, Ընկերություններ:	Նախատեսվում է բարձրացնել քաղաքապետարանի կառավարման արդյունավետությունը, թափանցիկությունը: Թվայնացնելով առևտրի և սպասարկման ոլորտը՝ համակարգված և առավել վերահսկելի դարձնել այն, տրամադրել թույլտվությունները էլեկտրոնային եղանակով ստանալու հնարավորություն: Հասարակական տրանսպորտի համալիր բաելավման ծրագրով նախատեսված է ներդնել միասնական տոմսային համակարգ, ինչը հնարավորություն կստեղծի ամբողջական վերահսկելի դարձնել տոմսային հասույթի հավաքագրումը և հնարավորություն կընձեռի ուղևորներին տոմսերը ձեռք բերել տարատեսակ անկանխիկ եղանակներով: Քաղաքային կառավարման կենտրոնի գործարկումը կազդի կառավարման որակի բարելավման, տրամադրվող	Երևանի քաղաքապետարան, քաղաքացիներ, Իրավաբանական անձիք, զբոսաշրջիկներ:	2022-2023թթ.	Երևան համայնքի բյուջե, Միջազգային դոնոր կազմակերպություններ

			ծառայությունների վերահսկման, անվտանգության և կենսամակարդակի բարձրացման վրա: Թեմատիկ երկրատեղեկատվական համակարգերի ներդրումով քաղաքային տնտեսության մի շարք ոլորտների կառավարումը և քաղաքային պլանավորումը կբարձրացվեն նոր մակարդակի: VisitYerevan.am հարթակի գործարկումը նախատեսում է աջակցել տուրիզմի զարգացմանը: Էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակը նախատեսում է թեթևացնել քաղաքապետարանի «Մեկ պատուհանների» ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև առավել հարմարավետ դարձնել տրամադրվող ծառայությունները:			

ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	**Չափի միավոր**	**2021**
Բնակչություն	հազ. մարդ	109.8
Վարչական շրջանի տարածք	հա	2582
Փողոցների երկարություն	կմ	116.76
Փողոցների մակերես	հազ.քմ	1700.5
Երթևեկելի մասի երկարություն	կմ	116.76
Կոմունալ տնտեսություն		
Բազմաբնակարան շենքեր	հատ	444
Վերելակներ	հատ	350
Վթարային շենքեր	հատ	124
Անհատական բնակելի տուն	միավոր	6100
Առևտուր և սպասարկում		
Առևտրի և սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	883
Բարեգործական ճաշարան	հատ	1
Շուկաներ	-	-
Հյուրանոցներ	հատ	8
Բարեկարգում		
Հանգստի գոտիներ	հատ	4
Բակային խաղահրապարակներ	հատ	159
Վերգետնյա/ստորգետնյա անցումներ	հատ	4/1
Թեքահարթակներ	հատ	187
Կրթություն		
Նախադպրոցական հաստատություններ	հատ	16
Երեխաների թիվ	երեխա	2564
Աշխատողների թիվ	մարդ	435
Հանրակրթական դպրոց	հատ	21
Երեխաների թիվ	երեխա	11659
Աշխատողների թիվ	մարդ	1186
Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	հատ	2
Երաժշտական դպրոց	հատ	2
Մարզադպրոց	հատ	1
Արվեստի դպրոց	հատ	1
Գրադարան	հատ	1
Բնապահպանություն		
Սպասարկվող կանաչապատ գոտի	հա	59
Առողջապահություն		
Առողջապահական հիմնարկներ	հատ	1
Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	28
Պոլիկլինիկա	-	-

Վարչական շրջանի հիմնախնդիրներ՝

1. Թեքահարթակների կառուցում,
2. Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում,
3. Վերելակային տնտեսության արդիականացում,
4. Ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի և վարչական շրջանի ենթակայության հիմնարկների շենքային պայմանների բարելավում,
5. Նորաստեղծ թաղամասերի (Լուկաշին, Վ-3, Սիլիկյան, Փիրումյան, Գ-1 և Գ-3) ենթակառուցվածքների ստեղծում (ջրագծեր, կոյուղագծեր, եզրաքարեր, ճանապարհներ, արտաքին լուսավորություն և գազաֆիկացում),
6. Նոր ոռոգման համակարգերի ստեղծում (Սիլիկյան, Լուկաշին, Գ-1, Ջանիբեկյան, Բաշինջաղյան, Լևոնյան, Եղիազարյան, Խ.Խաչատրյան, Առաքելյան, Մարտիրոսյան և այլ փողոցներ),
7. Նոր հեղեղատար համակարգի կառուցում (Արզումանյան, Բաշինջաղյան 1-ին և Բեկնազարյան փողոցներ),
8. Բազմաբնակարան շենքերի երեսպատման սալիկների ամրացման աշխատանքների իրականացում (Նորաշեն թաղամասի թվով 31շենքեր և Բաշինջաղյան 188, 192, 196 և 198 շենքեր),
9. Վթարային բազմաբնակարան շենքերի ամրացում կամ քանդում,
10. Վարչական շրջանի տարածքում առկա կիսակառույց շենքի կառուցում (Չաուշի 14/3 մասնավոր շենք),
11. Վարչական շրջանի տարածքում գտնվող գերեզմանատների սահմանազատում (պարսպապատում),
12. Մարզադպրոցի շենքային պայմանների բարելավում:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահպանում	Քաղաքապետարանի աշխատակազմի բարեկարգման վարչություն	Վերանորոգման ենթակա ա/բ ծածկի վերանորոգում-32000քմ կամ 80000քմ /քաղաքի ծրագիրն էլ հետը/: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, խճե հիմքի իրականացում և ասֆալտ-բետոնե ծածկի իրականացում, ինչպես նաևդիտահորերի և անձրևորսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե
2	Ոռոգման ցանցի անցկացում	«Կանաչ տարածքների և միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ	0.5 կմ նոր ոռոգման ցանցի կառուցում			
3	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում	Համատիրություններ	7000 քմ Հարթ տանիքների վերանորոգում:			
4	Բազմաբնակարան շենքերի լանջավոր տանիքների վերանորոգում		10000քմ լանջավոր տանիքների վերանորոգում: Վերանորոգումը կատարվում է հիմնականում վնասված ազբոհերցաքարերը նորերով փոխարինմամբ, իսկ առավել մեծ վնասվածություն ունեցող տանիքները ամբողջությամբ քանդվում և կառուցվում է նորը:			

			Նպատակահարմար է հարմում մասնակի վերանորոգման համար հատկացվող ազբոհերցաքարերի փոխարեն յուրաքանչյուր տարի հատկացվի 7000քմ ալիքավոր թիթեղ:			
5	Բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգում		Վերանորոգել 80 մուտք: Վերանորոգումը ներառում է թեքահարթակների կառուցում, սալապատում, պատերի և առաստաղի, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորերով:			
6	Եզրաքարերի վերանորոգում	Քաղաքապետարանի աշխատակազմի բարեկարգման վարչություն	Վերանորոգել 6000 գծմ եզրաքար: Վերանորոգումը ներառում է ճանապարհների մայթերի բազալտե եզրաքարերի վերանորոգում և փոխարինում, որը ներառում է հին վնասված եզրաքարերի փոխարինում:			
7	Կանաչապատման աշխատանքների իրականացում	«Կանաչ տարածքների և միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ	Խնամքի և պահպանման աշխատանքների իրականացում- 59.0հա:			
8	Բակային տարածքների հիմնանորոգում	Համատիրություններ	Թվով 4 բակային տարածքների հիմնում, որի ընթացքում կիրականացվեն անբարեկարգ կամ նորոգման կարիք ունեցող տարածքների բարեկարգում,			

			մասնավորապես կանաչ տարածքի վերականգնում, անցուղիների պատրաստում, ոռոգման ցանցի մոնտաժում կամ վերագործարկում, եզրաքարերի նորոգում, լուսավորության անցկացում թեքահարթակների և աստիճանների պատրաստում, խաղերի, զրուցատաղավարների, սպորտային մարզագույքի տեղակայում:			
9	Փողոցների և այգիների գեղարվեստական բետոնե սալիկների վերանորոգում		2500 քմ Բետոնե սալիկի վերանորոգում, որը ներառում է ճանապարհների մայթերի և այգիների գեղարվեստական բետոնե սալիկների վերանորոգում և փոխարինում:			
10	Փողոցների և այգիների թեքահարթակների կառուցում և վերանորոգում	Հասարակական կազմակերպություններ	Կառուցել և վերանորոգել 16 թեքահարթակ:	Բնակչություն, զբոսաշրջիկներ		
11	Փողոցների հրապարակների և այգիների կահավորում	Համատիրություններ	Ձեռք բերել և փողոցներում, հրապարակներում և այգիներում տեղադրել 40 նստարան, 20 աղբաման և 8 խաղասարք:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե
12	Փողոցներում և այգիներում արտաքին լուսավորության ցանցի նորոգում և արդիականացում	«Երքաղլույս» ՓԲԸ	Կառուցել և վերանորոգել 1500 գծմ արտաքին լուսավորության ցանց տեղադրելով LED լուսատուներ:			
13	Բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների նորոգում	Համատիրություններ	20 բարձակային պատշգամբների վերանորոգում			

14	Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի նորոգում		Վերանորոգել վարչական շենքը:	Աշխատակազմ		
15	Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում	«Աջափնյակ վերելակ» ՓԲԸ	Թվով 10 վերելակի հիմնանորոգում(պահեստամասերի ձեռք բերում և տեղադրում):	Բնակչություն, զբոսաշրջիկներ		
16	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների իրականացում	Վարչական շրջանի մշակութային ՀՈԱԿ-ներ	Տոն և հիշատակի օրերին նվիրված իրականացվելու է թվով 23 մշակութային միջոցառում			
17	Մարզական միջոցառումների իրականացում	Աջափնյակ վարչական շրջանի ՀՈԱԿ-ների և ՊՈԱԿ-ների աշակերտներ, երեխաներ և բնակիչներ	Իրականացվելու է 13 սպորտային միջոցառում	Աջափնյակ վարչական շրջանի ՀՈԱԿ-ների և ՊՈԱԿ-ների աշակերտներ, երեխաներ և բնակիչներ		
18	Սոցիալապես անապահով բնակիչներին համար սոցիալական ծրագրերի իրականացում	Երևանի քաղաքապետարան, ՀԿ-ներ, անհատ բարերարներ	1.Նախատեսվում է իրականացնել տոն և հիշատակի օրերին նվիրված 4 միջոցառում: 2. Գիտելիքի օրվա առթիվ 100 երեխաների պայուսակների և գրենական պիտույքների տրամադրում 3. 4 էքսկուրսիաների կազմակերպում վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար 4.2 տեղական սոցիալական ծրագրերի իրականացում	Վարչական շրջանի ԿԴԻՀ սոցիալապես անապահով բազմազավակ, բազմանդամ ընտանիքներ, միայնակ անժառանգ, գործազուրկ, նպաստի իրավունք չունեցող բնակիչներ:	2022թ. կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե

			5. 3 տեղական սոցիալական ծրագրերի իրականացում՝ ուղղված վիրավոր զինվորների կենսամակարդակի պայմանների բարելավմանը 6. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքի կարիքի գնահատման շրջանակում տունայցերի համար ճանապարհային ծախսերի փոխհատուցում 7. Բազմազավակ և բազմանդամ 25 ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում 8. ԿԴԻՀ երիտասարդ 8 ընտանիքներին ծառայությունների մատուցում 9. Այլ խմբերին պատկանող 30 անձանց տրամադրվող աջակցություն՝ ըստ կարիքի (միայնակ անժառանգ, գործազուրկ, նպաստի իրավունք չունեցող) 10. Սոցիալապես անապահով անձանց հուղարկավորության կազմակերպում 11. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց համար կարիքի գնահատման հիման վրա ծառայությունների մատուցում			

			12. ԿԴԻՀ 60 ընտանիքների կոմունալ ծախսերի մասնակի փոխհատուցում. 1 ընտանիքին հատկացվելու է 3 ամսով 13. Տարերային կամ տեխնածին աղետներից տուժած 7 ընտանիքներին տրամադրվող աջակցություն /փլուզում, հրդեհ, ջրհեղեղ և այլն/:			

ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Վիճակի նկարագրություն			
	Ցուցանիշներ	**Չափի միավոր**	**2021**
	Բնակչություն	հազ. մարդ	52.9
	Վարչական շրջանի տարածք	հա	812
	Փողոցների երկարություն	կմ	52,9
	Փողոցների մակերես	քմ	723,0
	Երթևեկելի մասի երկարություն	կմ	52,9
	Կոմունալ տնտեսություն		
	Բազմաբնակարան շենքեր	հատ	251
	Վերելակներ	հատ	344
	Վթարային շենքեր	-	-
	Անհատական բնակելի տուն	հատ	1007
	Առևտուր և սպասարկում		
	Առևտրի և սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	537
	Բարեգործական ճաշարան	հատ	1
	Շուկաներ	հատ	1
	Հյուրանոցներ	հատ	9
	Բարեկարգում		
	Հանգստի գոտիներ	հատ	25
	Բակային խաղահրապարակներ	հատ	68
	Վերգետնյա/ստորգետնյա անցումներ	հատ	1
	Թեքահարթակներ	հատ	48
	Կրթություն		
	Նախադպրոցական հաստատություններ	հատ	7
	Երեխաների թիվ	երեխա	1461
	Աշխատողների թիվ	մարդ	202
	Հանրակրթական դպրոց	մարդ	8
	Երեխաների թիվ	երեխա	5335
	Աշխատողների թիվ	մարդ	508
	Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	հատ	1
	Երաժշտական դպրոց	-	-
	Մարզադպրոց	հատ	1
	Արվեստի դպրոց	հատ	1
	Գրադարան	հատ	1
	Բնապահպանություն		
	Սպասարկվող կանաչապատ գոտի	հա	27
	Առողջապահություն		
	Առողջապահական հիմնարկներ	հատ	4
	Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	1
	Պոլիկլինիկա	հատ	1

Վարչական շրջանի հիմնախնդիրներ՝

1.Բակային տարածքների բարեկարգման, ասֆալտապատման, միջբակային հատվածների արտաքին լուսավորության ապահովման, վթարային հենասյուների փոխարինման, խաղահրապարակների ստեղծման և կանաչապատման անհրաժեշտություն,

2.Կանաչապատ տարածքների ընդլայնում, պահպանում, ոռոգման ցանցի արդիականացման անհրաժեշտություն,

3. Սանմաքրման, աղբահանության որակի բարելավման անհրաժեշտություն,

4.Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, շքամուտքերի վերանորոգման և հիմնանորոգման, ներքին կոյուղատար խողովակաշարերի նորոգման, նոր վերելակների ձեռքբերման անհրաժեշտություն,

5.Դպրոցական և նախադպրոցական ուսումնական, մշակութային հաստատությունների հիմնանորոգման և ընթացիկ նորոգման, գույքի թարմացման, բակերի ոռոգման ցանցերի արդիականացման, նորերի կառուցման, կանաչապատման անհրաժեշտություն,

6.Նոր հանգստի գոտիների ստեղծման, այգիների բարեկարգման և կանաչապատման անհրաժեշտություն,

7.Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ ու բավարար պայմանների ապահովման անհրաժեշտություն:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանս ավորման աղբյուր**
1	Փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում,ասֆալտապատում	Քաղաքապետարան	15875քմ բակային տարածքների և փողոցների վերանորոգում: Վերանորոգումը ներառում է փողոցների, մայթերի, բակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտ-բետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն, կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի ծավալների վերաբերյալ տեխնիկական պայմանների կազմում և վերանորոգման աշխատանքների իրականացում՝ ըստ կազմված տեխ.պայմանների: Ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում, խճե հիմքի իրականացում և ասֆալտապատում:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	Ըստ կնքված պայմանգրի ժամկետների՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե
2	Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում	Համատիրություններ	3 նոր բակային տարածքների կառուցում, 30-ի ընթացիկ նորոգում, որը ներառում է բակերում մայթերի եզրաքարերի վերանորոգում, նոր նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների տեղադրում, խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի, նստարանների, աղբամանների վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով կստեղծվեն նոր սիզամարգեր, կիրականացվի ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում:			

3	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում	Համատիրություններ	8000 քմ հարթ տանիքների հիմնանորոգում: Աշխատանքները ներառում են վնասված հարթ տանիքների հիմնանորոգում իզոգամով, պատերի ամրացում: Կիրականացվի հին վնասված շերտի քանդում, ցեմենտահարթեցնող շերտի իրականացում, նոր իզոգամի տեղադրում, օդափոխության խողովակների վրա մետաղական ծածկի տեղադրում:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	Ըստ կնքված պայմանգրի ժամկետների՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե
4	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում		1500քմ թեք տանիքների հիմնանորոգում: Աշխատանքները ներառում են հին ազբոշիֆերի ապամոնտաժում, փայտյա կոնստրուկցիաների մասնակի կամ ամբողջական փոխարինում, նոր ջրհորդանների տեղադրում, նոր ցինկապատ ծածկաթիթեղի տեղադրում:			
5	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում		20 շքամուտքերի ընթացիկ վերանորոգում, այդ թվում ՝ պատերի, առաստաղների, աստիճանավանդակների, բազրիքների, պատուհանների վերանորոգման, բացակա դռների տեղադրում:			
6	Վերելակների հիմնանորոգում		6 վերելակների վերանորոգում, այդ թվում՝ շարքից դուրս եկած դետալների և հանգույցների փոխարինում նորով, խցերի փոխարինում կամ նորոգում, ճոպանների փոխարինում, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով:			
7	Աղբահանություն և սանիտարական մաքրում	«Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» ՀՈԱԿ	720 հազ. քմ փողոցների, այգիների, բակերի, բազմաբնակարան շենքերի և տնատիրությունների սանմաքրում, աղբահանություն	Բնակչություն, զբոսաշրջիկներ	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե
8	Մշակութային միջոցառումների	Երևանի քաղաքապետարան,	15 միջոցառումների իրականացում		Ըստ կնքված պայմանգրի	

9	Սպորտայի միջոցառումներ	Ավան վարչական շրջանի ՀՈԱԿ-ներ և ՊՈԱԿ-ներ	7 միջոցառումների իրականացում		ժամկետների՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:	
10	Կրթական միջոցառումներ	Վարչական շրջանում գտնվող դպրոցներ	Կիրականացվեն «Նախադպրոցական հաստատություններում ավարտական միջոցառումներ», «Վերջին Զանգ» -ին , Գիտելիքի օրվան՝ սեպտեմբերի 1-ին, «Ուսուցչի օրվան» նվիրված միջոցառումներ :	Դպրոցների և մակապարտեզների սաներ, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ		
11	Վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում	ՀԿ-ներ	Համապատասխան մասնագետների կողմից կկազմակերպվի և կիրականացվի տունայց, որի արդյունքում գնահատված սոցիալական կարիքի հիման վրա կկազմվեն տեղական սոցիալական ծրագրեր և կտրամադրվի անհրաժեշտ սոցիալական աջակցություն: Հիշատակի և տոն օրերին իրականացվող միջոցառումների շնորհիվ կարժևորվեն թիրախ խմբերում ընդգրկված անձինք:	Վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներ, վիրավոր զինվորներ	Տարվա ընթացքում	
12	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն		Աջակցություն կտրամադրվի բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին՝ ըստ կարիքի	Բազմազավակ, նորաստեղծ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներ		
13	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և	ԱԻՆ, Ոստիկանություն	Ընտանիքներին կտրամադրվի համապատասխան սոցիալական աջակցություն	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձիք և ընտանիքներ	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե

	ընտանիքներին աջակցություն					
14	ԿԴԻՀ ընտանիքների և /կամ/ անձանց կարիքների գնահատման հիման վրա ծառայությունների մատուցում	ՀԿ-ներ				
15	Հարազատ չունեցող բնակիչների հուղարկավորության ծախսերի կազմակերպում	«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ, «Ռեքվիեմ ինտերնեշնլ» ՍՊԸ		Սոցիալապես անապահով կամ հարազատ չունեցող քաղաքացիներ		

ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Վիճակի նկարագրություն			
	Ցուցանիշներ	**Չափի միավոր**	**2021**
	Բնակչություն	հազ. մարդ	114.5
	Վարչական շրջանի տարածք	հա	1325
	Փողոցների երկարություն	գծմ	85642
	Փողոցների մակերես	քմ	1308164
	Երթևեկելի մասի երկարություն	գծմ	85642
	Կոմունալ տնտեսություն		
	Բազմաբնակարան շենքեր	հատ	780
	Վերելակներ	հատ	683
	Վթարային շենքեր	հատ	13
	Անհատական բնակելի տուն	հատ	6534
	Առևտուր և սպասարկում		
	Առևտրի և սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	1085
	Բարեգործական ճաշարան	հատ	1
	Շուկաներ	հատ	28
	Հյուրանոցներ	հատ	21
	Բարեկարգում		
	Հանգստի գոտիներ	հատ	10
	Բակային խաղահրապարակներ	հատ	123
	Վերգետնյա/ստորգետնյա անցումներ	հատ	3/9
	Թեքահարթակներ	հատ	202
	Կրթություն		
	Նախադպրոցական հաստատություններ	հատ	13
	Երեխաների թիվ	մարդ	2370
	Աշխատողների թիվ	մարդ	371
	Հանրակրթական դպրոց	հատ	20
	Երեխաների թիվ	մարդ	10510
	Աշխատողների թիվ	մարդ	1194
	Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	-	-
	Երաժշտական դպրոց	հատ	2
	Մարզադպրոց	հատ	4
	Արվեստի դպրոց	-	-
	Գրադարան	հատ	2
	Բնապահպանություն		
	Սպասարկվող կանաչապատ գոտի	հա	59.43
	Առողջապահություն		
	Առողջապահական հիմնարկներ	հատ	6
	Մասնավոր առողջապահական հիմնարկներ	-	-
	Պոլիկլինիկա	հատ	3

Վարչական շրջանի հիմնախնդիրներ՝

1. Բակային տարածքների ամբողջական բարեկարգման, եզրաքարերի վերանորոգման, թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն,
2. Կանաչ տարածքների և ոռոգման ցանցի ընդլայնման անհրաժեշտություն,
3. Անվտանգ տեղաշարժն ապահովելու համար ստորգետնյա և վերգետնյա անցումների ընթացիկ նորոգման և կառուցման անհրաժեշտություն,
4. Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային և գույքային պայմանների վատթար վիճակ,
5. Հեղեղատարերի և կոյուղատար խողովակների վերանորոգման և նորերի կառուցման, բ/բ շենքերի կոյուղագծերի և ջրագծերի ներքին ցանցերի նորոգման անհրաժեշտություն
6. Տրանսպորտային նոր հանգույցների ստեղծման անհրաժեշտություն,
7. Վերելակային տնտեսության ուսումնասիրություն և հիմնանորոգման անհրաժեշտություն
8. Կանաչապատ տարածքների ավելացման և նոր պուրակների, ջրավազանների և կանաչապատ բակերի ստեղծման, ոռոգման ցանցի ընդլայնման անհրաժեշտություն,
9. Վարչական շրջանի հին բնակֆոնդի՝ շենքերի կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի, մասնավորապես շենքերի պատշգամբները պահող կոնստրուկցիաների ոչ բավարար վիճակ
10. Ավտոմոբիլային ճանապարհային ցանցի թեթևացում, նոր ճանապարհների և շրջանցող խճուղիների նախատեսում,
11. Գոյություն ունեցող ավտոտնակների կենտրոնացում նոր ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղիների և անթույլատրելի տեղերում գտնվողների ապամոնտաժում,
12. «Երևանի հ. 31 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ոռոգման ցանցի կարգավորման անհրաժեշտություն:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահպանում	Երևանի քաղաքապետարան	36.36 հզ.քմ աշխատանքների իրականացում	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե
2	Եզրաքարերի վերանորոգում		Վերանորոգվելու է 1397գծմ			
3	Հենապատերի վերանորոգում		Վերանորոգվելու է 3 հենապատ			
4	Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում		Հիմնանորոգվելու է 1 աստիճան			
5	Հրազդան կիրճի բարեկարգում		Հրազդան կիրճի վ/շ պատկանող տարածքում ճանապարհաեզրերի մաքրումը քարաթափից, իսկ առուներում՝տիղմից, շարքից դուրս եկած մետաղական արգելապատնեշների վերանորոգում և նորով փոխարինում, հենապատերի վերանորոգում և կառուցում: Մաքրման աշխատանքների իրականացում:			
6	Մայրուղիների և փողոցների ընթացիկ նորոգում և պահպանում		Վերանորոգել 1 մայթ:			
7	Թեքահարթակների կառուցում		Կառուցել 24 թեքահարթակ			

8	Վերելակների հիմնանորոգում		Վերանորոգվելու է 20 վերելակ			
9	Հրատապ լուծում պահանջող ընթացիկ շինարարական աշխատանքներ		Մաքրել բացազատել անօրինական զավթած պետական տարածքները: Ապամոնտաժել և տեղափոխել անօրինական տեղադրված կրպակները, քանդել երկաթ-բետոնյա շինությունները, կտրել մետաղական դետալները			
10	Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում	«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	Վերանորոգվելու է 18 շենքերում			
11	Ախտահանման և միջատազերծման /դեռատիզացիա/ ծառայությունների իրականացում	Երևանի քաղաքապետարան	Վերանորոգվելու է 41400քմ	Բնակչություն, զբոսաշրջիկներ		Երևան համայնքի բյուջե
12	Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում		Կառուցվելու և սպասարկվելու է 1 հասարակական զուգարան:			
13	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում		Վերանորոգվելու է 23 բ/բ շենքի հարթ տանիք			
14	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում		Վերանորոգվելու է 8 շենքի թեք տանիք			
15	Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում		Շահագործման հանձնել 12 բակ			
16	Վթարային պատշգամբների նորոգում		Վերանորոգվելու է 53 պատշգամբ:			
17	Սպորտային միջոցառումների իրականացում		12 միջոցառում			

18	Մշակութային միջոցառումների իրականացում		18 միջոցառում			
19	Մանկապարտեզների վերանորոգում	Երևանի քաղաքապետարան, ՄԱԿ	Հ.24 և հ.33 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կապիտալ վերանորոգում			
20	Երևան համայնքի, վարչական շրջանի քաղաքաշինական ոլորտի համաչափ զարգացում	Երևանի քաղաքապետարան, այլ գերատեսչական կազմակերպություններ	Գոտիավորման նախագծի և գլխավոր հատակագծի փոփոխություն, բնակ. ֆոնդի ուժեղացում և պահպանում, Երևանի կենտրոնի ֆունկցիոնալ, տրանսպորտային գերբեռնվածության թուլացում, պատմական և մշակութային հուշարձանների պահպանում	Սոցիալապես անապահով տարբեր խոցելի խմբեր	2022թ.-ի ընթացքում	Երևան համայնքի բյուջե
21	Արաբկիր վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում	Երևանի քաղաքապետարան	Կարիքին համապատասխան աջակցություն ստացած անապահով ընտանիքների կենսամակարդակի բարելավում:			
22	Սոցիալական ծառայությունների տրամադրում և պատվիրակում		Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցել ֆիանանսապես՝ հոգալու հրատապ լուծում պահանջող խնդիրները			
23	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն		Կարիքի գնահատման արդյունքում բազմազավակ ընտանիքների համար համապատասխան կենցաղային իրերի և	Բազմազավակ, երիտասարդ և նորաստեղծ սոցիալապես		Երևան համայնքի բյուջե

			հիգիենայի պարագաների ձեռքբերում, վերապատրաստումների իրականացում	անապահով ընտանիքներ		
24	Հայրենադարձ և փախստական ընտանիքների համար աջակցության ծրագրեր	Երևանի քաղաքապետարան	Հայրենադարձ ընտանիքներին բնակարանների վարձակալության մասնակի փոխհատուցում, փախստական ընտանիքների կարիքի գնահատում, սոցիալական ծառայությունների տրամադրում, ձմռան ամիսներին առաջացած խնդիրների լուծման նպատակով՝ կոմունալ վարձերի /գազ, էլ. էներգիա/ մասնակի փոխհատուցում	Հայրենադարձ և փախստական ընտանիքներ		Երևան համայնքի բյուջե

ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Վիճակի նկարագրություն			
	Ցուցանիշներ	**Չափի միավոր**	**2021**
	Բնակչություն	Հազ. մարդ	42.5
	Վարչական շրջանի տարածք	հա	652
	Փողոցների երկարություն	կմ	71.5
	Փողոցների մակերես	քմ	531000
	Երթևեկելի մասի երկարություն	կմ	71.5
	Կոմունալ տնտեսություն		
	Բազմաբնակարան շենքեր	հատ	195
	Վերելակներ	հատ	415
	Վթարային շենքեր	-	-
	Անհատական բնակելի տուն	հատ	1650
	Առևտուր և սպասարկում		
	Առևտրի և սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	225
	Բարեգործական ճաշարան	-	-
	Շուկաներ	հատ	1
	Հյուրանոցներ	հատ	9
	Բարեկարգում		
	Հանգստի գոտիներ	հատ	4
	Բակային խաղահրապարակներ	հատ	69
	Վերգետնյա/ստորգետնյա անցումներ	հատ	1
	Թեքահարթակներ	հատ	310
	Կրթություն		
	Նախադպրոցական հաստատություններ	հատ	5
	Երեխաների թիվ	երեխա	1341
	Աշխատողների թիվ	մարդ	214
	Հանրակրթական դպրոց	հատ	6
	Երեխաների թիվ	երեխա	5220
	Աշխատողների թիվ	մարդ	449
	Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	-	-
	Երաժշտական դպրոց	-	-
	Մարզադպրոց	հատ	1
	Արվեստի դպրոց	հատ	1
	Գրադարան	հատ	1
	Բնապահպանություն		
	Սպասարկվող կանաչապատ գոտի	հա	22.2
	Առողջապահություն		
	Առողջապահական հիմնարկներ	-	-
	Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	8
	Պոլիկլինիկա	հատ	1

Վարչական շրջանի հիմնախնդիրներ՝

1. Նոր ճանապարհների կառուցման անհրաժեշտություն՝ մասնավորապես. Սասնա Ծռեր-Աղաբաբյան փողոցները կապող հատված, Տ. Պետրոսյանի վերջնամասից 2-րդ թաղամասի ետնամասով Աղաբաբյան փողոց տանող շրջանցիկ հատված,
2. Փողոցների, այգիների, բակային տարածքների մաքրման, աղբահանության և ձնամաքրման աշխատանքների բարձր մակարդակով կազմակերպման ահրաժեշտություն,
3. Մելքումովի սեփական սեկտորի, 1-ին և 2-րդ թաղամասերի վերին հատվածի, Ձոր 2-րդ թաղամասի նոր ջրահեռացման համակարգի ստեղծման, ինչպես նաև վարչական շրջանի տարածքում մաշված կոյուղագծերի փոխարինում, 1-ին և 2-րդ թաղամասերի գրունտային ճանապարհների ասֆալտապատման անհրաժեշտություն,
4. Ոռոգման ցանցի արդիականացման և ընդլայնման անհրաժեշտություն,
5. Վերելակների հիմնանորոգման և նորերի տեղադրման անհրաժեշտություն,
6. Կանաչ տարածքների ընդլայնման, ծառերի տնկման, հանգստյան գոտիների ստեղծման անհրաժեշտություն,
7. Համատիրությունների գործունեության խիստ վերահսկման անհրաժեշտություն,
8. Դպրոցների ճաշարանների վերահսկման անհրաժեշտություն,
9. Տանիքների վերանորոգման անհրաժեշտություն,
10. Վերգետնյա և ստորգետնյա անցումների ոչ բավարար քանակ,
11. Դավթաշեն վարչական շրջանի սեփական սեկտորում նոր մանկապարտեզի կառուցում,
12. Դավթաշեն վարչական շրջանում աշխատակազմի համար վարչական շենքի կառուցում,
13. Անվտանգությունից ելնելով դպրոցների և մանկապարտեզների հարակից ճանապարհներում նոր մայթուղիների կառուցում:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանս ավորման աղբյուր**
1	Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահանում	Երևանի քաղաքապետարան	Նախատեսված է 10000քմ ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, առաջացած շին. աղբի բարձում, տեղափոխում (թափոնատեղի), խճե հիմքի իրականացում (մինչև 10%) և 4սմ ասֆալտ-բետոնե ծածկի իրականացում: Աշխատանքները ներառում են դիտահորերի և անձրևորսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում:	Բնակիչություն, զբոսաշրջիկներ	2022թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի	Երևան համայնքի բյուջե
2	Եզրաքարերի վերանորոգում		Նախատեսված է 1000 գծմ եզրաքարերի փոխարինում			
3	Վերելակների հիմնանորոգման	Համատիրություններ	Նախատեսված է մոտ 17 վերելակի վերանորոգման աշխատանք: Աշխատանքները ներառում են վերելակների շարքից դուրս եկած դետալների և հանգույցների փոխարինում նորով, խցերի փոխարինում կամ նորոգում, ճոպանների փոխարինում, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով:			
4	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում		Նախատեսված է 8570քմ հարթ տանիքի վերանորոգում: Կիրականացվի հին վնասված շերտի քանդում, ցեմենտահարթեցնող շերտի			

			իրականացում, նոր իզոգամի տեղադրում, օդափոխության խողովակների վրա մետաղական ծածկի տեղադրում:			
5	Հենապատերի վերանորոգում	Երևանի քաղաքապետարան	Նախատեսված է թվով 10 հենապատերի վերանորոգում			
6	Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում	Համատիրություններ	Նախատեսված է 4 բակային տարածքների հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ /1թ. 28շ, 4-րդ թաղամաս 199դպ հարևանությամբ, 33շ և 49շ /, այդ թվում՝ բակերում մայթերի եզրաքարերի վերանորոգում, նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների տեղադրում: Ծրագիրը ներառում է նաև երեխաների համար խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով կստեղծվեն նոր սիզամարգեր, կիրականացվի ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում:			
7	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում	Համատիրություններ	Նախատեսված է մոտ 20 շքամուտքերի վերանորոգում, որը ներառում է թեքահարթակների կառուցում, սալապատում, պատերի և առաստաղի, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում,	Բնակիչներ	2022թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի	Երևան համայնքի բյուջե

			վնասված ապակիների փոխարինում նորով:			
8	Մայրուղիների և փողոցների վերանորոգում և կառուցման	Երևանի քաղաքապետարան	Նախատեսված է մոտ 7000քմ մայթերի գեղարվեստական սալիկապատում			
9	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն		Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության տրամադրում:			
10	Հայրենադարձ և փախստական ընտանիքների համար աջակցություն		Հասարակության մեջ կարիքի գնահատման արդյունքում սոցիալական ծառայությունների տրամադրում ձմռան ամիսներին՝ գազ և էլ. էներգիայի ծախսի, անհրաժեշտության դեպքում բնակարանի վարձավճարի մասնակի կամ լրիվ փոխհատուցում:			
11	Բազմազավակ, նորաստեղծ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն		Կարիքի գնահատման արդյունքում բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքներին անհրաժեշտ սոցիալական աջակցության տրամադրում			
12	Կենսամակարդակի բարելավմանն ուղղված սոցիալական նպատակային ծրագրերի իրականացում		Հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացման նպատակով տոն և հիշատակի օրերին միջոցառումների կազմակերպում			

13	Հուղարկավորության ծախսեր	Երևանի քաղաքապետարան	Աջակցություն հարազատ չունեցող ընտանիքներին՝ հուղարկավորության ծախսերը հոգալու համար	Բնակիչներ	2022թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի	Երևան համայնքի բյուջե
14	Մշակութային միջոցառումների իրականացում	Երևանի քաղաքապետարանի ենթակա կազմակերպություններ (Դավթաշեն վարչական շրջան ՀՈԱԿ-ներ և ՊՈԱԿ-ներ)	Ըստ ժամանակացույցի որպես պարտադիր ծրագիր իրականացվում են մշակութային միջոցառումներ (Հայոց բանակի օր, Տեառնընդառաջ, Կանանց միջազգային օր, Սուրբ Հարության տոն /Զատիկ/, Մայրության և գեղեցկության օր, 1915թ. Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, Վերջին զանգ, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր, Խաղողօրհնության օր, Բակային-ժամանցային միջոցառումներ, Գիտելիքի օր, ՀՀ Անկախության օր, Ուսուցչի օր, «Էրեբունի-Երևան» տոնակատարություն, Ամանորյա միջոցառումներ, մանկապարտեզների սաների քաղցրավենիքի բաշխում): Ինչպես նաև 2022թ ավելացվել է միջոցառումների ցանկը, որոնք հետևյալն են՝ Գրքի տոն, Բուն բարեկենդանի տոն, Ջազի միջազգային օր, Հայրենական մեծ պատերազմի 77-ամյակ, Ընտանիքի միջազգային օր, Հայաստանի Հանրապետության տոն, Սահմանադրության օր, պետական խորհրդանիշների օր, Վարդավառ, , Հայ մեծերի հուշ երեկո /Ալ. Սպենդիարյան 150-ամյակ, Առնո Բաբաջանյան 100-ամյակ, Անրի Վերնո 100-ամյակ/, Հիշատակի օր			

			/Սեպտեմբերի 27/, Երկրապահի օր, Ամանորյա ձևավորում: Լրացուցիչ ծրագրերով, համագործակցությամբ ևս իրականացվելու են միջոցառումներ:			
15	Սպորտային միջոցառումների կազմակերպում	Դավթաշեն վարչական շրջանի ենթակա ՀՈԱԿ-ների և ՊՈԱԿ-ների հետ:	Նախատեսվում է 10 միջոցառումների կազմակերպում՝ ՀՀ անկախության տոնին նվիրված մարզական խաղեր, ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկ. 1-6րդ դասարաններ, Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշամրցաշար, Մարզահամերգային տոնահանդես՝ մանկապարտեզի սաների մասնակցությամբ, «Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք» բակային փառատոն, ՀՀ Նախագահի լավագույն մարզական ընտանիք, «Նախազորակոչային և զորակոչային տարիքի» երիտասարդների հանրապետական խաղեր, Սպորտլանդիա 1-3, 4-7-րդ դասարանների աշակերտների միջև, Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն, Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի գավաթի առաջնություն:			

ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Վիճակի նկարագրություն			
	Ցուցանիշներ	**Չափի միավոր**	**2021**
	Բնակչություն	Հազ. մարդ	129.3
	Վարչական շրջանի տարածք	հա	4,850
	Փողոցների երկարություն	կմ	123,205
	Փողոցների մակերես	քմ	120,731,5
	Երթևեկելի մասի երկարություն	կմ	123,205
	Կոմունալ տնտեսություն		
	Բազմաբնակարան շենքեր	հատ	257
	Վերելակներ	հատ	206
	Վթարային շենքեր	հատ	13
	Անհատական բնակելի տուն	հատ	7,178
	Առևտուր և սպասարկում		
	Առևտրի և սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	850
	Բարեգործական ճաշարան	-	-
	Շուկաներ	հատ	1
	Հյուրանոցներ	հատ	15
	Բարեկարգում		
	Հանգստի գոտիներ	հատ	4
	Բակային խաղահրապարակներ	հատ	45
	Վերգետնյա/ստորգետնյա անցումներ	-	-
	Թեքահարթակներ	հատ	142
	Կրթություն		
	Նախադպրոցական հաստատություններ	հատ	12
	Երեխաների թիվ	երեխա	1 711
	Աշխատողների թիվ	մարդ	343
	Հանրակրթական դպրոց	հատ	21
	Երեխաների թիվ	երեխա	12 069
	Աշխատողների թիվ	մարդ	1 234
	Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	-	-
	Երաժշտական դպրոց	հատ	1
	Մարզադպրոց	հատ	1
	Արվեստի դպրոց	հատ	1
	Գրադարան	հատ	4
	Բնապահպանություն		
	Սպասարկվող կանաչապատ գոտի	հա	20
	Առողջապահություն		
	Առողջապահական հիմնարկներ	հատ	5
	Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	2
	Պոլիկլինիկա	հատ	5

Վարչական շրջանի հիմնախնդիրներ՝

1.Ոռոգման ցանցի հիմնական և մասնակի վերանորոգման, կոյուղագծերի և նստած դիտահորերի նորոգման, ինչպես նաև շենքերի խմելու ջրի և կոյուղագծերի հիմնանորոգման անհրաժեշտություն,
2.Բազմաբնակարան շենքերի տակ ստորերկրյա ջրերի վերացման նպատակով դրենաժային համակարգի կառուցման անհրաժեշտություն,
3.Վթարային շենքերի ամրացման կամ բնակչության տեղափոխման անհրաժեշտություն, գոյություն ունեցող բնակֆոնդի սեյսմիկ անվտանգության բարձրացման անհրաժեշտություն,
4.Հանգստի նոր գոտիների ստեղծման, կանաչ տարածքների ընդլայնման, բակային նոր տարածքների բարեկարգման, միջբակային տարածքների լուսավորման և ասֆալտապատման անհրաժեշտություն,
6. Հենապատերի վերանորոգման /հիմնանորոգում/ անհրաժեշտություն,
7. Կոյուղագծերի կառուցման անհրաժեշտություն,
8. Հհ. 64, 67, 72 և 73 մանկապարտեզների հիմնավերանորոգման անհրաժեշտություն,
9.Երկու նոր մանկապարտեզի կառուցման անհրաժեշտություն,
10.Նոր բազմաֆունկցիոնալ սպորտդպրոցի կառուցման անհրաժեշտություն,
11.Կրպակների և խանութների արտաքին տեսքի արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտություն,
12. Օրենքով սահմանված կարգով նոր գովազդային վահանակների տեղադրում և անպիտան գովազդային վահանակների ապամոնտաժում,
13.Վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներին անվճար պրոֆիլակտիկ ստուգման և բժշկական խորհրդատվության տրամադրման պարբերական ակցիաների կազմակերպում, առողջական և սոցիալական խնդիրների լուծման հարցում, արտոնությունների տրամադրման և աջակցության հատուկ ծրագրերի շարունակականություն,
14.Հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ ուշադրություն՝ սայլակների ձեռք բերման ուղղությամբ,
15.Թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն,
16.Բազմաբնակարան շենքերի կրող կոնստրուկցիանարի հետազոտման և անհրաժեշտության դեպքում վերակառուցման անհրաժեշտություն, 3 կետ,
17.Նոր ճանապարհների կառուցման անհրաժեշտություն,
18. Ներբակային տարածքների բարեկարգման ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում	Երևանի քաղաքապետարան	Կիրականացվի 39.000 քմ Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում: Աշխատանքները ներառում են բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի գույքագրում: Գույքագրման արդյունքում կատարվում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդման, առաջացած շինաղբի բարձման, տեղափոխում (թափոնատեղի), խճե հիմքի իրականացման աշխատանքներ: Ինչպես նաև դիտահորերի և անձրևորսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում:	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝համաձայն սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե
2	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում		Կիրականացվի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում՝ 7 250 քմ			
3	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում		6 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում՝ թիթեղյա կամ կղմինդրե ծածկերով:			
4	Վերելակների հիմնանորոգում		Բազմահարկ շենքերի 4 վերելակների հիմնանորոգում և առանձին հատվածների ընթացիկ նորոգում			
5	Բազմաբնակարան շենքերում բարեկարգման աշխատանքների իրականացում		Բազմաբնակարան շենքերի 46 մուտքերի և աստիճանավանդակների վերանորոգում այդ թվում՝ թեքահարթակների պատրաստում, սալապատում, պատերի և առաստաղների, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների			

			վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորով:			
6	Հուշարձանների վերանորոգում և պահպանում		Թվով 7 հուշարձանների վերանորոգում և պահպանում			
7	Մշակութային միջոցառումների իրականացում		18 միջոցառումների իրականացում			
8	Սպորտային միջոցառումների իրականացում		11 միջոցառումների իրականացում			
9	Սոցիալապես անապահով բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր		Համապատասխան մասնագետների կողմից կկազմակերպվի և կիրականացվի տունայց, որի արդյունքում գնահատված սոցիալական կարիքի հիման վրա կկազմվեն տեղական սոցիալական ծրագրեր և կտրամադրվի անհրաժեշտ սոցիալական աջակցություն:			
10	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն		Աջակցություն կտրամադրվի բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին՝ ըստ կարիքի, որը կնպաստի թիրախային խմբերի կենսամակարդակի բարելավմանը:	Բազմազավակ, նորաստեղծ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներ	2022թ. ընթացքում	
11	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն		Արտակարգ իրավիճակներում կամ նմանատիպ այլ դեպքերում շահառուներին տրամադրվող աջակցության միջոցով հոգածության դրսևորում, ստեղծված իրադրության հաղթահարում:	Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձիք և ընտանիքներ		Երևան համայնքի բյուջե
12	ԿԴԻՀ ընտանիքների և /կամ/ անձանց կարիքների		Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին տրամադրվող	Կյանքի դժվարին		

	գնահատման հիման վրա ծառայությունների մատուցում		աջակցության միջոցով հոգածության դրսևորում, ստեղծված իրադրության հաղթահարում:	իրավիճակում հայտնված անձիք և ընտանիքներ		
13	Հուղարկավորության ծախսեր	«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	Վարչական շրջանի ղեկավարի կողմից միջնորդագրերի տրամադրում սոցիալապես անապահով կամ հարազատ չունեցող մարդկանց հուղարկավորության ծախսերի մի մասը փոխհատուցելու համար:	Սոցիալապես անապահով կամ հարազատ չունեցող քաղաքացիներ		
14	Թեքահարթակների կառուցում	Երևանի քաղաքապետարան	10 թեքահարթակ	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝համաձայն սահմանված ժամանակացույցի:	

ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Առկա իրավիճակ		
Ցուցանիշներ	**Չափի միավոր**	**2021**
Բնակչություն	Հազ. մարդ	125.5
Վարչական շրջանի տարածք	հա	1335
Փողոցների երկարություն	կմ	106
Փողոցների մակերես	քմ	106.000
Երթևեկելի մասի երկարություն	քմ	106.000
Կոմունալ տնտեսություն		
Բազմաբնակարան շենքեր	հատ	701
Վերելակներ	հատ	544
Վթարային շենքեր	հատ	4
Անհատական բնակելի տուն	հատ	7162
Առևտուր և սպասարկում		
Առևտրի և սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	3647
Բարեգործական ճաշարան	հատ	1
Շուկաներ	հատ	3
Հյուրանոցներ	հատ	58
Բարեկարգում		
Հանգստի գոտիներ	հատ	10
Բակային խաղահրապարակներ	հատ	104
Վերգետնյա/ստորգետնյա անցումներ	հատ	17
Թեքահարթակներ	հատ	500
Կրթություն		
Նախադպրոցական հաստատություններ	հատ	21
Երեխաների թիվ	մարդ	2478
Աշխատողների թիվ	մարդ	429
Հանրակրթական դպրոց	մարդ	28
Երեխաների թիվ	մարդ	16988
Աշխատողների թիվ	մարդ	1710
Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	հատ	1
Երաժշտական դպրոց	հատ	2
Մարզադպրոց	հատ	2
Արվեստի դպրոց	հատ	2
Գրադարան	հատ	1
Բնապահպանություն		
Սպասարկվող կանաչապատ գոտի	հա	45
Առողջապահություն		
Առողջապահական հիմնարկներ	հատ	38
Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	28
Պոլիկլինիկա	հատ	8

Վարչական շրջանի հիմնախնդիրներ՝

1. Նոր հանգստի գոտիների, խաղահրապարակների ստեղծման անհրաժեշտություն,
2. Փողոցների (այդ թվում՝ մայթերի) հիմնանորոգում, հողային ծածկույթով ճանապարհների վերակառուցման, ասֆալտապատման անհրաժեշտություն,
3. Հենապատերի հիմնանորոգման, անվտանգության աստիճանի բարձրացման անհրաժեշտություն,
4. Կամուրջների և ուղետարերի հիմնանորոգման անհրաժեշտություն ,
5. Զբոսայգիների բարեկարգման և ընդլայնման անհրաժեշտություն,
6. Վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն,
7. Կոյուղու, ջրամատակարարման և ջրահեռացման նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն,
8. Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների և խաղահրապարակների լուսավորության ցանցի անցկացման անհրաժեշտություն,
9. Կանաչապատ տարածքների ընդլայնման և ստեղծման անհրաժեշտություն,
10. Նոր ոռոգման ցանցերի ստեղծման անհրաժեշտություն,
11. Բնակֆոնդի (բազմաբնակարան շենքերի) բարելավման անհրաժեշտություն (տանիք, մուտքեր, ջրահեռացման և ջրամատակարարման ցանց),
12. Առողջապահական ծառայությունների որակի բարձրացման (բժշկական ընկերությունների գույքի արդիականացում, վերազինում) անհրաժեշտություն,
13. Բնակչությանը մատուցվող սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակի ընդլայնման անհրաժեշտություն,
14. Ալկոհոլային և թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց հարկադիր բուժման վերականգնման անհրաժեշտություն,
15. Ընտանեկան բռնության ենթարկված քաղաքացիներին ժամանակավոր կացարանով ապահովման անհրաժեշտություն:

2022թ. նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանում	**Համագործակցություն**	**Անմիջական նպատակ**	**Հիմնական շահառուներ**	**Սկիզբը և ավարտը**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	Ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում	Համատիրություններ, գործարարոլորտ, բարերարներ	19950 քմ ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում, պահպանում և ընթացիկ նորոգում	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե
2	Եզրաքարերի վերանորոգում		890 գմ եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ՝ մաշված եզրաքարերի ապամոնտաժում և նոր եզրաքարերի տեղադրում: Այն հասցեներում ևս, որոնք ընդգրկված են ասֆալտապատման ծրագրում, ասֆալտապատմանը զուգահեռ կիրականացվեն եզրաքերերի վերանորոգման աշխատանքներ:			
3	Հենապատերի վերանորոգում		291 քմ հենապատերի վերանորոգում			
4	Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում		7 հատ մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում			
5	Թեքահարթակների կառուցում		30 հատ թեքահարթակի կառուցում			
6	Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա)		Պարբերաբար կիրականացվեն սեփական տնատիրություններ ունեցող փողոցներում դեռատիզացիոն և դեզինֆեկցիոն աշխատանքներ:Բոլոր սեփական տնատիրություններում պարբերաբար կկատարվեն կանխարգելիչ և ըստ անհրաժեշտության ախտահանման, միջատազերծման աշխատանքներ:			
7	Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում		Թվով 13960 քմ թեք և 2130 քմ հարթ տանիքների վերանորոգում			

8	Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	Կիրականացվեն 11 հատ բակերի հիմնանորոգում: Ցանկապատ կամ ինքնակամ զավթված տարածքների ցանկապատերից ազատում, ապամոնտաժում, կտեղադրվեն մանկական խաղեր, աղբամաններ ու նստարաններ, կստեղծվեն ասֆալտապատ անցուղիներ: Տարածքներում կիրականացվեն կանաչապատման, ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ: Արդեն բարեկարգված բակային տարածքներում ու խաղահրապարակներում կիրականացվի կանաչապատ տարածքների խնամք, գույքի ընթացիկ վերանորոգում:			
9	Մուտքերի վերանորոգում		Կիրականացվեն 42 հատ շուրջ 47670 քմ մուտքերի վերանորոգում	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե
10	Վթարային պատշգամբների նորոգում		Կիրականացվեն 22 պատշգամբների վերանորոգում: Վթարային պատշգամբների պատերի հարթեցում և ներկում:			
11	Սպորտային միջոցառումների կազմակերպում	Համագործակցության մարզական միջոցառումներ կիրականացվեն ՀՀ մարզերի և Երևան քաղաքի միջև:	Նախատեսվում է իրականացնել մարզական միջոցառումների շարք, մասնավորապես՝ ՀՀ անկախության նվիրված դպրոցականների մարզական խաղեր, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների միջև սպորտլանդիա, ՀՀ Ազգային ժողովի գավաթի մրցաշար, երեխաների օրվան			

		Առանձնակի ուշադրության կենտրոնում կլինի ռազմական հաստատությունների փոխայցելությունները, որտեղ նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիները կծանոթանան ռազմական հմտությունների ն:	նվիրված «Սպորտլանդիա», ՀՀ Նախագահի «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ, «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային, բակային փառատոն և նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմական խաղեր:			
12	Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն	ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն, Երևանի քաղաքապետարան և անհատ բարերարներ:	Նախատեսվում է բարելավել նախադպրոցական և արտադպրոցական կրթություն իրականացնող կազմակերպությունների շենքային պայմանները՝ առաջնային ուշադրություն դարձնելով տանիքի, ջրագծերի և կոյուղագծերի ներքին ցանցի և ջերմամեկուսացման և էներգախնայողության աշխատանքներին: Նախատեսվում է մանկապարտեզների խմբասենյակներն ապահովել գույքով, դիդակտիկ պարագաներով, իսկ բակերը համալրել մանկական խաղերով: Նպաստել երեխայի խոսքի զարգացմանը, ինքնուրույն մտածելակերպի	Բնակչություն, զբոսաշրջիկներ	2022թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:	Երևան համայնքի բյուջե

			ձևավորմանը, օգնել տիրապետել ծավալուն խոսքին, որով կկարողանա արտահայտել իր զգացմունքներն ու պահանջները: Իրականացնել գիտելիքների հաղորդման, արտադպրոցական կրթության տարբեր ուղղությունների գծով ունակությունների և հմտությունների ձևավորման, անձի տվյալներին և պահանջներին համապատասխան մտավոր ու ստեղծագործական ունակությունների, ֆիզիկական որակների զարգացման գործընթաց:			
3.		ՀՀ ԱՆ www.e-draft.am կայքում չկա որևէ նշում նախագծերին կողմ և դեմ քվեարկած անձանց մասին: Կարո՞ղ եք արդյոք ներկայացնել այդ վիճակագրությունը, քանզի դա կարևոր ցուցիչ է նախագծի նկատմամբ հանրային վստահության ու հետաքրքրության մասին: Ավելին, այդ նախագծի «Ամփոփաթերթ» բաժնում առայժմ չկան որևէ առաջարկություններ:	Հանրային քննարկումները կազմակերպվում են ՀՀ Կառավարության 10.10.2018թ. N1146-Ն որոշմանը, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, 84-րդ հոդվածի 2-րդ մասին և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N 45-Ն որոշմանը համապատասխան: Նշված իրավական ակտերում որպես պարտադիր դրույթ ներկայացված չէ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ «Քվեարկություն» գործառույթի ակտիվացումը: Նախագծերի վերաբերյալ արված առաջարկություններն ու դիտողությունները հաստատվում և ներառվում են «Ամփոփաթերթ» հատվածում երկու աշխատանքային օրվա ընթացքում: */Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն/*	Նախագծում փոփոխություն չի կատարվել

4.		Ինչ է նախատեսվում կատարել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացման և գործունեության թափանցիկության ապահովման ուղղությամբ:	Երևանի քաղաքապետարանը չի հանդիսանում նշված ոլորտի լիազոր մարմին: ՀՀ վարչապետի 2019 թվականի օգոստոսի 20-ի N1160-Ա որոշմամբ, բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառում առկա խնդիրների կանոնակարգման նպատակով ստեղծված է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որում ընդգրկված են նաև Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները: 2020 թվականի հունվարի 24-ին ընդունված «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 15.1-ին հոդվածով «Հոդված 15.1. Շինությունների սեփականատերերից գանձվող պարտադիր և այլ վճարների վճարման կարգը 1. Սույն օրենքով սահմանված պարտադիր վճարները և այլ վճարները շինությունների սեփականատերերը կատարում են անկանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձին, բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բանկային հաշվի	Նախագծում փոփոխություն չի կատարվել

			վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»: ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել է ««Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր վճարների և այլ վճարների կատարման նպատակով բացվող բանկային հաշվի վարման կարգը սահմանելու մասին» N 2078-Ն որոշումը: Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի 90%-ից ավելիի համար կառավարման մարմինների կողմից բացված են առանձին բանկային հաշիվներ:» */Կոմունալ տնտեսության վարչություն/*	
5.		Կան արդյոք Երևանն իսկապես «Արևի քաղաք» անվանմանը համապատասխան այլընտրանքային էներգիայի աղբյուրների կիրառման և կանաչ տնտեսության գաղափարն իրացնելու ուղղությամբ ռազմավարական ծրագրեր:	Ակտիվ գործունեություն է ծավալվում քաղաքային կայուն զարգացման, կլիմայի փոփոխությունների ազդեցության մեղմման ու ադապտացման, վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման, էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացման բնագավառում: Կարևորելով համայնքային ռազմավարական ծրագրերի առկայությունը՝ քաղաքապետարանը տարբեր միջազգային կազմակերպությունների հետ համատեղ համագործակցության արդյունքում մշակել է Երևանի կայուն	Նախագծում փոփոխություն չի կատարվել

			զարգացման ռազմավարական գործողությունների երկու ծրագիր, որոնց դրույթներին համահունչ իրականացվում են նպատակաուղղված միջոցառումներ: Ծրագրերը տեղադրված են Երևանի քաղաքապետարանի պաշտոնական էջում ստորև ներկայացված հղումներով (https://www.yerevan.am/am/yerevan-green-city-action-plan/, https://www.yerevan.am/am/erewani-kayown-energetik-zargats-man-gortsoghowt-yownneri-tsragir/): */Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն/*	
6.		Ինչ ծրագրեր են նախատեսված էկոտուրիզմի զարգացման, հատկապես արևային սրճարանների ցանցի կառուցման ուղղությամբ:	Երևան քաղաքում, քաղաքային զբոսաշրջության բոլոր տարատեսակները և ուղղությունները լավագույնս ներկայացված են, ինչ վերաբերում է էկուտուրիզմին, ապա Երևան քաղաքում էկոտուրերի և էկոերթուղիների նկատմամբ պահանջարկը մեծ չէ, սակայն ուշադրության կենտրոնում է կանաչապատ տարածքների ընդլայնման և վերականգնման ծրագրերը: Այնուամենայնիվ, Երևանի քաղաքապետարանը քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում իրականանցում է արտանետումների կրճատմանը, աղբի վերամշակմանը և էներգառեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված ծրագրեր, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի կիրառմանն ուղղված	Նախագծում փոփոխություն չի կատարվել

			համապատասխան միջոցառումներ քաղաքային տրանսպորտի, արտաքին լուսավորության, հանրային, ինչպես նաև բնակելի շենքերում, հանրային ծառայությունների մատուցման և այլ ոլորտներում: Երևան քաղաքում առհասարակ սրճարանների ցանցի կառուցմանն ուղղված ծրագրերը հիմնականում գտնվում են մասնավոր տիրույթում: */Մշակույթի և տուրիզմի վարչություն/*	
7.		Նախագծերում չի նշվում էներգախնայողության նոր տեխնոլոգիաների ներդրման մասին: Առաջարկվում է ֆիննական Ֆարտո ֆիմայի կողմից առաջարկվող լուծումները էներգախնայող ջերմային համակարգերի, հատկապես հիբրիդ համակարգերի վերաբերյալ: Դրանք կարելի է օգտագործել դպրոցների ու մանկապարտեզների էներգախնայող ջերմաապահովման ժամանակ /համակարգն ապահովում է տաք ջրամատակարարում, ջեռուցում և հովացում/:	Էներգախնայողության, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառմանն առնչվող ռազմավարական ծրագրերի մշակումից զատ՝ իրականացվում են նաև հստակ միջոցառումներ մանկապարտեզներում և հանրային շենքերում էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման և կիրառման ուղղությամբ: Այդ միջոցառումների իրականացմանն ուղղված ծրագրերը ներառված են Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում: Ներկայացված առաջարկը կդիտարկվի, կուսումնասիրվի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից և, կընդունվի ի գիտություն: */Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն/*	Նախագծում փոփոխություն չի կատարվել

8.		Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք էջում 2020թ. հունվարի 9-ին հրապարակված հայտարարությանը համապատասխան 2020թ. հունվարի 15-ին դիմել էի Երևանի քաղաքապետ պարոն Մարությանին՝ խնդրելով մեր կազմակերպությունն ընդգրկել Երևանի քաղաքապետին կից «Սոցիալական պաշտպանության խորհրդի» կազմում: Սակայն ցավոք, ոչ միայն մեր կազմակերպությունը չընդգրկվեց այդ խորհրդում՝ չնայած մեր շահառուների սոցիալական հարցերի լուծման ուղղությամբ 2018-2020 թվականների ընթացքում մեր համատեղ կառուցողական համագործակցությանը, այլև որևէ պատասխան չստացա դիմումիս վերաբերյալ:	Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 46-Ն որոշման հավելվածի 7-րդ կետը՝ հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց նշանակումը Խորհրդի կազմում կատարվում է իրենց դիմումի համաձայն՝ հրապարակված հայտարարության հիման վրա, ըստ հայտերի ներկայացման հաջորդականության՝ մինչև սույն կարգով սահմանված անդամների առավելագույն քանակը լրանալը: Հայտարարությունը տեղադրվել է 2020 թվականի հունվարի 9-ին, իսկ Մովսես Արիստակեսյանի դիմումը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին մուտքագրվել է 16.01.2020թ-ին, երբ լրացված է եղել Խորհրդի կազմը: Ինչ վերաբերում է քաղաքացու դիմումին պատասխանելուն, ապա Երևանի քաղաքապետի 16.01.2020թ. 20/3773 հանձնարարականի համաձայն դիմումն ընդունվել է ի գիտություն և դիմումի պատասխան չի պահանջվել, սակայն հեռախոսակապով կապ հաստատվել է դիմած անձանց հետ և գուցե կապի հետ կապված խնդրի պատճառով Մովսես Արիստակեսյանի հետ չի հաջողվել կապ հաստատել: */Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն/*	Նախագծում փոփոխություն չի կատարվել
9.		Առաջարկվում է Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագրի շրջանակներում	Թաղամասի վերակառուցման իրացման աշխատանքներն ընթացքի մեջ են մինչև	Նախագծում փոփոխություն չի

		խնայողական ջեռուցման համակարգերի ներդրում:	2023թ.: Ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ 19.05.2020թ. ՀՀ փոխվարչապետի կողմից ընդունվել է N.249-Ա որոշում «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի (Ֆիրդուսի) կառուցապատման ծրագրի իրականացման աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին»: Թաղամասի վերակառուցման ծրագրին առնչվող առաջարկությունները պետք է ներկայացնել ՀՀ կառավարության կամ աշխատանքային խմբի դիտարկմանը: */ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին/*	կատարվել
10.		Ինչ միջոցներ են նախատեսվում ձեռնարկել Երևան քաղաքի մայթերին կառուցված ապօրինի կառույցների վերացման ուղղությամբ (այդ կապակցությամբ մեր դիմումները նույնպես արժանանում են «ցրողական պատասխանների», օրինակ՝ Երևան քաղաքի Անդրանիկի փողոցի 110 շենքի դիմացի մայթի վրա կառուցված շինության վերաբերյալ):	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը՝ Երևանի քաղաքապետին քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտներում օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում, իրականացրել է և ներկայումս էլ իրականացնում է՝ ինչպես ինքնակամ կառույցների, այդպես էլ հողազավթման դեպքերի հայտնաբերման, դրանց կասեցման, կանխարգելման հետևանքների վերացման ուղղությամբ օրենքով սահմանված գործառույթներ: Նշեմ, որ Երևան քաղաքի վարչական տարածքում միայն 2021 թվականին քանդվել (ապամոնտաժվել են) թվով 266 ինքնակամ կառույցներ, որոնց զգալի	Նախագծում փոփոխություն չի կատարվել

			մասն ապամոնտաժվել է Երևան քաղաքի ավագանու 13.07.2021 թվականի հ.413-Ն որոշման ընդունումից հետո՝ Երևանի քաղաքապետի քանդման որոշումների պահանջների կատարման շրջանակներում և այդ աշխատանքները ներկայումս էլ շարունակվում են և կրում են պարբերական բնույթ: Ինչ վերաբերում է Երևան քաղաքի Անդրանիկի փողոցի հ.110 շենքի դիմաց գտնվող շինությանը, ապա դրա իրավական կարգավիճակի վերաբերյալ որևէ տեղեկատվության աշխատակազմում առկա չէ: */Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն/*	
11.		Երևան քաղաքում խնդրահարույց է մնում հաշմանդամ վարորդների համար ավտոկայանատեղիներում անվճար տարածքներ ամրագրելու հրամայականը: Այդպիսիք պարզապես չկան: Այդ հանգամանքը հակասում է ՀՀ միջազգային պարտավորություններին՝ հաշմանդմաների նկատմամբ իրականացվող քաղաքականության առումով: Ինչպիսի ծրագրեր կան այդ ուղղությամբ:	Երևան քաղաքում կարմիր գծերով հատվածներում կա հաշմանդամների համար նախատեսված թվով 101 կայանատեղ: */Տրանսպորտի վարչություն/*	Նախագծում փոփոխություն չի կատարվել
12.		Նախատեսվում են շարունակել տարեցների սոցիալական սպասարկման, աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործումը՝ ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո՝ տուն-ինտերնատների միջոցով, նաև պետություն-ՀԿ-համայնք համագործակցությամբ կազմակերպված ցերեկային խնամքի կենտրոններում: Այդ ծրագրերի շրջանակներում նախատեսվում են արդյոք պալեատիվ օգնություն հայցող միայնակ,	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության նախաձեռնությամբ մշակվում է «Երևան քաղաքի տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և իրականացման կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:	Նախագծում փոփոխություն չի կատարվել

		անժառանգ հաշմանդամ ծերերին այդ ծառայությունների մեջ ընդգրկելու, նրանց նկատմամբ շուրջօրյա խնամք ապահովելու ուղղությամբ (դիցուք մեր կազմակերպության 2 շահառուներ ունեն այդ կարծիքը, սակայն չենք կարողանում լուծել նրանց շուրջօրյա խնամքի խնդիրը, թեև սկսած 2020թ. Երևան քաղաքում իրականացվում էր պալեատիվ (ամոքիչ) բուժօգնության փորձարարական ծրագիրը):	Պալեատիվ խնամքի հետ կապված ծառայություններ իրականացնելու շրջանակներում համագործակցության ծրագիր այս պահին չի իրականացվում: Նմանատիպ ծառայությունների հետ կապված կարող է նախատեսվել պիլոտային ծրագրի իրականացում՝ պատվիրակման, համաֆինանսավորման, սուբսիդավորման ձևով: Եթե կազմակերպությունն ունի նմանատիպ ծրագիր կարող է ներկայացնել դիտարկենք՝ հետագայում նմանատիպ ծրագրի մրցույթում դիտարկելու համար: Կայացել է հեռախոսազրույց «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրեն՝ պարոն Արիստակեսյանի հետ, ով ներկա պահին գտնվում է ստացիոնար բուժման մեջ, հեռախոսով պայմանավորվածություն է ձեռք բերվել ապաքինվելուց հետո որոշակի խնդիրներ քննարկել շահառուների հետ և աջակցել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության լիազորությունների շրջանակներում: */Առողջապահության, Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն/*	
13.	**Արտավազդ Խաչատրյան** **(02.11.2021թ. առաջարկն ուղարկվել է**	Առաջարկվում է Երևանի 2022 թվականի զարգացման ծրագրում ընդգրկել նոր տրոլեյբուսների ձեռքբերումը՝ առնվազն 15 միավոր:	Երևան քաղաքի հանրային տրանսպորտի բարեփոխումների գործընթացի շրջանակներում իրականացվող աշխատանքների	Նախագծում փոփոխություն չի կատարվել

	zargacum@yerevan.am էլ. հասցեին)		ընդհանուր համատեքստում մշտապես կարևորվել է տրոլեյբուսների դերը՝ որպես մեծ տեղատարողության և էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոց (հետագայում դիտարկելով նաև մայրաքաղաքում շարժման ընթացքում լիցքավորվող տրոլեյբուսների և էլեկտրաավտոբուսների կիրառման հնարավորությունը): Այդ առումով, նոր տրոլեյբուսներ (30 հատ) ձեռք բերելու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտ է ներկայացվել՝ Երևան համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծում ներառելու համար: Բյուջետային քննարկումների արդյունքում, ֆինանսական միջոցների սղության պատճառով, Երևան համայնքի 2022 թվականի բյուջեում հարցը չի ներառվել: Միաժամանակ որոշվել է հարցին անդրադառնալ հաջորդ տարի, ինչպես նաև քննարկել այլ ֆինանսական աղբյուրներից տրոլեյբուսների ձեռքբերման հնարավորությունը: */Տրանսպորտի վարչություն/*	
14.		Առաջարկվում է Երևանի 2022 թվականի զարգացման ծրագրում ընդգրկել №24 տրոլեյբուսային երթուղու վերականգնումը՝ նոր շարժակազմի խմբաքանակի ժամանելուց հետո:	Տրոլեյբուսային երթուղիների վերագործարկման (տվյալ պարագայում հ.24 երթուղու) կամ նոր երթուղիների կազմակերպման հարցերին հնարավոր կլինի անդրադառնալ՝ տրոլեյբուսների նոր խմբաքանակի ձեռքբերման դեպքում: */Տրանսպորտի վարչություն/*	Նախագծում փոփոխություն չի կատարվել

15.	**Դիանա Նազարյան** **(05.11.2021թ. առաջարկն ուղարկվել է zargacum@yerevan.am էլ. հասցեին)**	Փաստաթղթում թվարկված Հիմնախնդիրների հետևյալ կետերում առաջարկվում է առաջնային դարձնել մանկասայլակների և անվասայլակների համար անհրաժեշտ քանակությամբ և պատշաճ որակի թեքահարթակների կառուցումը՝ 2. Երևան քաղաքի փողոցների բարեկարգում, հիմնանորոգում 4.Մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում 8.Նոր հանգստի գոտիների ստեղծում 9.Բակերի և այգիների բարեկարգում 10.Գործող զբոսայգիների բարեկարգում և տարածքի ընդարձակում 11.Շենքերի ճակատային մասերի մաքրում, լվացում, ներկում	Նախագծման և շինարարական աշխատանքների ընթացքում բարձրացված հարցն իրականացվում է և այսուհետ ևս կիրականացվի: */Շինարարության և բարեկարգման վարչություն/*	Նախագծում փոփոխություն չի կատարվել
16.		www.yerevan.am կայքում տեղադրված 2019-2023 հնգամյա ծրագրում գրված է՝ «Թեքահարթակի կառուցման անհրաժեշտությունը որպես պարտադիր պայման նշվում է բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ և հասարակական տիպի շենքերի նախագծային աշխատանքների համար տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում, իսկ օբյեկտների շինարարական աշխատանքների ավարտից հետո, հանձնաժողովի կողմից կազմված հանձնման-ընդունման, հետագայում նաև փաստագրման ակտերը հաստատվում են միայն թեքահարթակների առկայության դեպքում»: Առաջարկվում է հավելյալ ուշադրություն դարձնել ոչ միայն վերջնական կառույցի, այլ նաև շինարարական աշխատանքների ընթացքում թեքահարթակների առկայության պահանջին:	Քաղաքաշինական փաստաթղթեր տրամադրելիս Երևանի քաղաքապետարանի կողմից կառուցապատողներից պահանջվում է ապահովել հաշմանդամների և ԲՍԽ-երի կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծումը (սարքավորման և կահավորման ընտրությունը) կատարելով ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար» շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջների համապատասխան, որն ամրագրվում է նաև տրամադրված նախագծման թույլտվությունների 18-րդ կետում որպես պարտադիր պայման:	Նախագծում փոփոխություն չի կատարվել

			Ինչ վերաբերվում է շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ հաշմանդամների և ԲՍԽ-երի կենսագործունեության ապահովմանը, ապա տեղեկացվում է, որ տրամադրվող քաղաքաշինական փաստաթղթերում /մասնավորապես աշխատանքային նախագծերում/ համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթների պարտադիր է շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծը, որը իրականացվում է ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջների, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանների շրջանակներում։ Շինարարական աշխատանքների կազմակերպման ժամանակ՝ անհրաժեշտության պարագայում, շինարարական հրապարակում իրականացվում է նաև հաշմանդամների և ԲՍԽ-երի կենսագործունեության	

			ապահովմանն ուղղված միջոցառումներ։ */Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն/*	
17.	**Հայկ Բալանյան** **(05.11.2021թ. առաջարկն ուղարկվել է zargacum@yerevan.am էլ. հասցեին)**	Ծրագրում որպես հիմնախնդիր նշված է Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերի Մելքումովի սեփական սեկտորի վերին հատվածի նոր ջրահեռացման համակարգի ստեղծման և 1-ին և 2-րդ թաղամասերի գրունտային ճանապարհների ասֆալտապատման անհրաժեշտությունը: Սակայն այդ խնդիրների լուծման համար որևէ գումար հատկացված չէ: Առաջարկվում է 2022թ. բյուջեով հատկացնել ֆինանսավորում տարածքի ջրահեռացման և ճանապարհային ցանցի համար՝ միասնական և ամբողջական հատակագծով, որտեղ կնշվեն տարածքի կանգառները, կոմունիկացիոն գծերը, ճանապարհները, նաև եռաչափ կտրվածքով օբյեկտների բարձրությունները, դպրոցները, մանկապարտեզները, հանգստի գոտիները: Կից ներկայացվում է Դավթաշեն 1 սեփական սեկտորի բնակիչների ստորագրություններ թվով 37:	2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Երևանի քաղաքապետարանի 2022թ. ծրագրերով Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերի Մելքումովի սեփական սեկտորի վերին հատվածի նոր ջրամատակարարման/ջրահեռացման համակարգերի կառուցման աշխատանքներ նախատեսված չեն: Թաղամասի բնակիչները պետք է դիմեն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ ստանան միասնական տեխնիկական պայման, որի հիման վրա կազմվի նախագծանախահաշվային փաստաթղթեր և սեփականատերերի միջոցների հաշվին կառուցել մեկ ընդհանուր ջրագիծ/կոյուղագիծ՝ բացառելով ճանապարհի բազմակի հատումները: */Կոմունալ տնտեսության վարչություն/*	Նախագծում փոփոխություն չի կատարվել
18.		Ավագանու 2022թ զարգացման նախագծով նախատեսված է տրամադրել նոր թաղամասերի նախագծման թույլտվություններ և իրականացվելու են	Առաջադրանքը (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն	Նախագծում փոփոխություն չի կատարվել

		կառուցապատման աշխատանքներ: Նոր թաղամասերի նախագծման թույլտվություններ տրամադրելիս արդյոք քաղաքապետարանը ջրի, ջրահեռացման, հոսանքի, գազի, դպրոց-մանկապարտեզների առկայությունը ի սկզբանե նախատեսում է, թե ոչ: Եթե դա նախատեսվում է նոր թաղամասերի պարագայում, ապա հին թաղամասերի դեպքում նույն մոտեցումը երբ կգործի:	որոշման N 5 հավելվածի (այսուհետ՝ N 5 հավելված) N 1-2 ձև) ներառում է տվյալ կառուցապատմանն առնչվող՝ անհրաժեշտ ելակետային տվյալներն ու օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմանները, որոնք են՝ ինժեներական ենթակառուցվածքի համակարգերին միանալու նախագծման պայմաններ, որոնք տրվում են մատակարար կազմակերպությունների կողմից իրավասու մարմնին՝ վերջինիս հարցման հիման վրա: Ինչ վերաբերում է արդեն կառուցված շենքերին՝ այդ դեպքում հարցը չի կարող քննարկվել, քանի որ դրանք արդեն ունեն իրենց սնուցման համակարգը: */ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին/*	

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	**Առաջարկության, առարկության հեղինակ**	**Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն**	**Պարզաբանում/ եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1	**2**	**3**	**4**	**5**
1.		Երևան քաղաքի աղբի տեսակավարում ծրագրում ներառել հանրային իրազեկման լայնածավալ միջոցառումներ:	Առաջարկն ընդունվել է: (Աշխատակազմի բնապահպանության վարչություն, 14.12.2021թ. հ.17/158353 գրություն)	**Երևանի քաղաքի զարգացման 2022թ. նախատեսվող ծրագրերի 10-րդ կետի «Անմիջական նպատակ» հատվածը վերաձևակերպվել է հետևյալ կերպ՝** «Վերամշակման ենթակա աղբը տարանջատել ընդհանուր աղբից, վերամշակման միջոցով նվազեցնելով աղբի ծավալը և նպաստելով շրջակա միջավայրի պահպանությանը աղտոտումից: Իրականացնել աղբի տեսակավորման վերաբերյալ իրազեկման միջոցառումներ»**:**
2.	Գայանե Վարդանյան («Իմ քայլը» խմբակցության անդամ 10.12.2021թ. հ. 21/158353 գրություն)	Ծրագրում ներառել Նոր Նորքի 5-րդ և 7-րդ զանգվածների միջանկյալ հատվածում գտնվող անտառ-պուրակի վերականգնման աշխատանքները, նախատեսել առնվազն վերականգնման նախագծի կազմումը 2022թ-ին:	Առաջարկը չի ընդունվել: (Աշխատակազմի բնապահպանության վարչություն, 14.12.2021թ. հ.17/158353 գրություն) Երևանի քաղաքապետարանի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ը Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 5-րդ և 7-րդ զանգվածների միջանկյալ հատվածում այս տարի տնկվել է շուրջ 100 ծառ, կազմվել է կանաչապատման նախագիծ և	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

			2022 թվականին նախատեսվում է տարածքում ներ ոռոգման ցանցի անցկացում:	
3.		Նախատեսել Մալաթիա-Սեբաստիա համայնքի Սիրո և հավատի զբոսայգու մնացյալ՝ 1/4 հատվածի բարեկարգման աշխատանքներ:	Առաջարկը չի ընդունվել: (Աշխատակազմի բնապահպանության վարչություն, 14.12.2021թ. հ.17/158353 գրություն) Սիրո և հավատի զբոսայգու ¼ հատվածը հանդիսանում է մասնավոր սեփականություն, ուստի Երևանի քաղաքապետարանն այդ հատվածում բարեկարգման աշխատանքներ չի կարող իրականացնել:	
4.	Գայանե Վարդանյան («Իմ քայլը» խմբակցության անդամ 10.12.2021թ. հ. 21/158353 գրություն)	Կոմունալ տնտեսություն կամ մեկ այլ համապատասխան բաժնում ներառել Շրջակա միջավայրը մաքուր պահելու վերաբերյալ կրթադաստիարակչական միջոցառումների ծրագրի իրականացում:	Առաջարկն ընդունվել է: Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 16.12.2021թ. հ. 12/158353 Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի Հանրակրթության բաժնի «2022թ. նախատեսվող ծրագրեր»-ի 6-րդ կետում նմանօրինակ ծրագիր	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

			ներառված է:	
5.		Կոմունալ բաժնում նախատեսել փոքր ծավալի աղբամանների գնում և տեղադրում հատկապես մարդաշատ հատվածներում, կանգառների մոտակայքում:	Առաջարկն ընդունվել է: Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, 15.12.2021թ. հ.52/158353 Նախատեսվում է հայտարարել աղբամանների ձեռքբերման և տեղադրման բաց մրցույթ:	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:
6.		Հանրակրթության բաժնում նախատեսել միջոցառումներ, որոնք բխում են Հանրակրթության վարչության և Երևանի վարչական շրջանների համապատասխան բաժինների ֆունկցիոնալ գնահատման արդյունքներից:	Առաջարկներն ընդունվել են: Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 16.12.2021թ. հ. 12/158353	**Երևանի քաղաքի զարգացման 2022թ. ծրագում Հանրակրթության բաժնի, նախադպրոցական ոլորտի «Անմիջական նպատակ» հատվածի 3-րդ կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ՝** «Նախադպրոցական կրթության ոլորտում ընդգրկված անձնակազմերի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների, հմտությունների կատարելագործում վերապատրաստման և փորձի փոխանակման դասընթացների միջոցով, ինչպես նաև ծնողավարության դասընթացներ և ծնողների իրազեկման միջոցառումներ, և վարչական օղակների աշխատակիցների արդյունավետ կառավարման համակարգերի ներդնում»:
7.	Գայանե Վարդանյան («Իմ քայլը» խմբակցության անդամ 10.12.2021թ. հ. 21/158353 գրություն)	Հանրակրթության բաժնում նախատեսել մանկապարտեզների անձնակազմի հետ աշխատանք՝ ծնողավարման դասընթացներ, ծնողների իրազեկման միջոցառումներ իրականացնելու նպատակով:		
8.		Հանրակրթության Նախադպրոցական կրթության բաժնում նախատեսել անձնակազմերի փորձի փոխանակման պարբերական		

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

		միջոցառումներ տարբեր թեմաներով:		
9.		Բնապահպանության վարչության հետ համատեղ մշակել մանկապարտեզների հարակից կանաչ գոտիների վերականգնման, փոքր այգիների հիմնման ծրագրեր:	Առաջարկը չի ընդունվել: (Աշխատակազմի բնապահպանության վարչություն, 14.12.2021թ. հ.17/158353 գրություն) Երևանի քաղաքապետարանի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի կողմից մանկապարտեզների հարակից կանաչ գոտիներում պարբերաբար իրականացվում են խնամքի աշխատանքներ՝ չոր ծառերի հեռացում, ծառերի էտում, ոռոգման ցանցի վերականգնում և նորոգում: Մանկապարտեզներում փոքր այգիներ չեն նախատեսվու, քանի որ մանկապատեզներն ունեն հարակից կանաչ տարածքներ՝ որն ունի իր ֆունկցիոնալ նշանակությունը և խնամքի հետ կապված աշխատանքներն իրականացվում են բնապահպանության վարչության և «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի կողմից:	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

10.	Գայանե Վարդանյան («Իմ քայլը» խմբակցության անդամ 10.12.2021թ. հ. 21/158353 գրություն)	Նախատեսել ծրագիր Երևանի էլեկտրոնային կառավարման ԷԼՓԱՍ համակարգից համայնքների էլեկտրոնային կառավարման միասնական հարթակին անցում իրականացնելու՝ ապահովելու արագ փաստաթղթաշրջանառություն և պատշաճ ծառայություններ շահագրգիռ տարբեր կողմերին:	Առաջարկը չի ընդունվել: «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն», 14.12.2021թ. հ. 14/158353 ԷԼՓԱՍ համակարգից համայնքներում գործող միասնական հարթակին անցում կատարելը համարում ենք ոչ նպատակահարմար, քանի որ Երևանի քաղաքապետարանում 2006 թվականից մշակված և շարունակաբար զարգացող ԷԼՓԱՍ համակարգը գործում է Երևանի կարիքներին և պահանջներին համապատասխան:Այն ինտեգրված է ՀՀ կառավարությունում գործող ՄԱԼԲՐԻ համակարգի հետ: Անհրաժեշտության դեպքում այն կարող է ինտեգրվել փոքր համայնքներում գործող էլեկտրոնային կառավարման միասնական հարթակին:	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:
11.		Նախատեսել և իրականացնել փողոցների հասցեների միասնական ցուցանակների տեղադրման ծրագիր:	Առաջարկն ընդունվել է: Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն,	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

			15.12.2021թ. հ.52/158353 Միասնական ցուցանակների օրինակելի ձևի որոշման հարցը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:	
12.	Գայանե Վարդանյան («Իմ քայլը» խմբակցության անդամ 10.12.2021թ. հ. 21/158353 գրություն)	Երևանի մետրոպոլիտենի հետ համատեղ մշակել ուղևորների կրթության, մետրոյից և առհասարակ տրանսպորտային միջոցներից օգտվելու կանոնների իրազեկման միջոցառումներ:	Առաջարկը չի ընդունվել: Աշխատակազմի տրանսպորտի վարչություն 14.12.2021թ. հ. 14/158353 գրություն Հարցը քննարկվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ում: Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն մետրոպոլիտենի տարածում մասնավորապես, կայարանների հայտարարությունների տախտակների վրա և գնացքների վագոններում փակցված են մետրոպոլիտենից օգտվելու կանոնները: Միևնույն ժամանակ, գնացքների ժամանման հետ շարժասանդուղքի հերթապահներն իրազեկում են	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

			ուղևորներին՝ շարժասանդուղքից օգտվելու կանոնների մասին: Հարկ եմ համարում նշել նաև, որ նմանատիպ իրազեկման միջոցառումներ են իրականացվում մայրաքաղաքին նվիրված նոր ավտոբուսների ներդրման աշխատանքների շրջանակներում:	
13.	Գայանե Վարդանյան («Իմ քայլը» խմբակցության անդամ 10.12.2021թ. հ. 21/158353 գրություն)	Ծրագրի որոշ հատվածներում, օրինակ Արաբկիր վարչական շրջանին վերաբերող մասում, Հիմնախնդիրները ներկայացված են որպես կատարվելիք գործողություններ: Անհրաժեշտ է ողջ ծրագրի հիմնախնդիրներ բաժինների շարադրման մոտեցումը նույնականացնել:	Առաջարկն ընդունվել է:	Արաբկիր վարչական շրջանի հիմնախնդիրները ձևակերպվել են հետևյալ կերպ՝ ***Վարչական շրջանի հիմնախնդիրներ՝*** 1. Բակային տարածքների ամբողջական բարեկարգման, եզրաքարերի վերանորոգման, թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն, 2. Կանաչ տարածքների և ոռոգման ցանցի ընդլայնման անհրաժեշտություն, 3. Անվտանգ տեղաշարժն ապահովելու համար ստորգետնյա և վերգետնյա անցումների ընթացիկ նորոգման և կառուցման անհրաժեշտություն, 4. Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային և գույքային պայմանների վատթար վիճակ, 5. Հեղեղատարերի և կոյուղատար խողովակների վերանորոգման և նորերի կառուցման, բ/բ շենքերի կոյուղագծերի և ջրագծերի ներքին ցանցերի նորոգման

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

				անհրաժեշտություն, 6. Տրանսպորտային նոր հանգույցների ստեղծման անհրաժեշտություն, 7. Վերելակային տնտեսության ուսումնասիրություն և հիմնանորոգման անհրաժեշտություն, 8. Կանաչապատ տարածքների ավելացման և նոր պուրակների, ջրավազանների և կանաչապատ բակերի ստեղծման, ոռոգման ցանցի ընդլայնման անհրաժեշտություն, 9. Վարչական շրջանի հին բնակֆոնդի՝ շենքերի կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի, մասնավորապես շենքերի պատշգամբները պահող կոնստրուկցիաների ոչ բավարար վիճակ, 10. Ավտոմոբիլային ճանապարհային ցանցի թեթևացում, նոր ճանապարհների և շրջանցող խճուղիների նախատեսում, 11. Գոյություն ունեցող ավտոտնակների կենտրոնացում նոր ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղիների և անթույլատրելի տեղերում գտնվողների ապամոնտաժում, 12. «Երևանի հ. 31 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ոռոգման ցանցի կարգավորման անհրաժեշտություն:
14.	Գրիգոր Երիցյան («Իմ քայլը» խմբակցության անդամ 10.12.2021թ. հ. 21/158346 գրություն)	«Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրում» առանձին շարադրել Երիտասարդության հարցեր բաժինը:	Առաջարկը չի ընդունվել: Աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին,	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

			14.12.2021թ. 46/158346 գրություն «Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրում» «Երիտասարդության հարցերի» բաժինը՝ որպես առանձին բաժին շարադրելը հնարավոր կլինի Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի հաստատվելուց հետո:	
15.	Միքայել Մանրիկյան («Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար. 08.12.2021թ. հ. 21/157343 գրություն)	Շահումյան հրապարակում կառուցել ստորգետնյա փարքինգ, որի կառուցման ֆինանսավորման, ինչպես նաև հետագայում տարածքի տրամադրման աշխատանքներում ներգրավել հարակից տարածքներում գործող մասնավոր սեկտորների:	Առաջարկը չի ընդունվել: «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» (ՀՈԱԿ) 10.12.2021թ. հ. 02/38-157343 գրություն 2022 թվականի ծրագրով նախատեսված չէ Շահումյան հրապարակում ստորգետնյա փարքինգի կառուցում:	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:
16.	Աշխատակազմի արտաքին կապերի	ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սանկտ Պետերբուրգի	Առաջարկն ընդունվել է:	Ավելացվել է Երևանի 2022 թվականի զարգացման ծրագրի «Միջազգային

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	վարչություն 07.12.2021թ. հ. 21/156614 գրություն	կառավարության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում 2021-2025թթ. համագործակցության զարգացման միջոցառումների ծրագրով (Ճանապարհային քարտեզ) նախատեսված կետերը ներառել Երևան քաղաքի 2022 թվականի զարգացման ծրագրում:		համագործակցություն» բաժնի 2022թ. նախատեսվող ծրագրերի 2-րդ կետի «Անմիջական նպատակ» ենթակետում հետևյալ բովանդակությամբ՝ «10. Իրականացնել ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում 2021-2025թթ. համագործակցության զարգացման միջոցառումների ծրագրով սահմանված կետերը՝ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցությամբ (կոմունալ տնտեսություն, արտաքին ձևավորման և գովազդ, «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ, զարգացման և ներդրումային ծրագրեր, երեխաների և սոցիալական պաշտպանություն, առողջապահություն, տրանսպորտ, հանրակրթություն, մշակույթ և տուրիզմ)»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	**Առաջարկության, առարկության հեղինակ**	**Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն**	**Պարզաբանում/ եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Գայանե Վարդանյան («Իմ քայլը» խմբակցության անդամ 10.12.2021թ. հ. 21/158353 գրություն)	Երևան քաղաքի աղբի տեսակավարում ծրագրում ներառել հանրային իրազեկման լայնածավալ միջոցառումներ:	Առաջարկն ընդունվել է: (Աշխատակազմի բնապահպանության վարչություն, 14.12.2021թ. հ.17/158353 գրություն)	**Երևանի քաղաքի զարգացման 2022թ. նախատեսվող ծրագրերի 10-րդ կետի «Անմիջական նպատակ» հատվածը վերաձևակերպվել է հետևյալ կերպ՝** «Վերամշակման ենթակա աղբը տարանջատել ընդհանուր աղբից, վերամշակման միջոցով նվազեցնելով աղբի ծավալը և նպաստելով շրջակա միջավայրի պահպանությանը աղտոտումից: Իրականացնել աղբի տեսակավորման վերաբերյալ իրազեկման միջոցառումներ»**:**
2.		Կոմունալ տնտեսություն կամ մեկ այլ համապատասխան բաժնում ներառել Շրջակա միջավայրը մաքուր պահելու վերաբերյալ կրթադաստիարակչական միջոցառումների ծրագրի իրականացում:	Առաջարկն ընդունվել է: Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 16.12.2021թ. հ. 12/158353 Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի Հանրակրթության բաժնի «2022թ. նախատեսվող ծրագրեր»-ի 6-րդ կետում նմանօրինակ ծրագիր ներառված է:	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:
3.		Կոմունալ բաժնում նախատեսել փոքր ծավալի աղբամանների գնում և տեղադրում հատկապես	Առաջարկն ընդունվել է:	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

		մարդաշատ հատվածներում, կանգառների մոտակայքում:	Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, 15.12.2021թ. հ.52/158353 Նախատեսվում է հայտարարել աղբամանների ձեռքբերման և տեղադրման բաց մրցույթ:	
4.		Հանրակրթության բաժնում նախատեսել միջոցառումներ, որոնք բխում են Հանրակրթության վարչության և Երևանի վարչական շրջանների համապատասխան բաժինների ֆունկցիոնալ գնահատման արդյունքներից:	Առաջարկներն ընդունվել են: Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 16.12.2021թ. հ. 12/158353	**Երևանի քաղաքի զարգացման 2022թ. ծրագում Հանրակրթության բաժնի, նախադպրոցական ոլորտի «Անմիջական նպատակ» հատվածի 3-րդ կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ՝** «Նախադպրոցական կրթության ոլորտում ընդգրկված անձնակազմերի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների, հմտությունների կատարելագործում վերապատրաստման և փորձի փոխանակման դասընթացների միջոցով, ինչպես նաև ծնողավարության դասընթացներ և ծնողների իրազեկման միջոցառումներ, և վարչական օղակների աշխատակիցների արդյունավետ կառավարման համակարգերի ներդնում»:
5.	Գայանե Վարդանյան («Իմ քայլը» խմբակցության անդամ 10.12.2021թ. հ. 21/158353 գրություն)	Հանրակրթության բաժնում նախատեսել մանկապարտեզների անձնակազմի հետ աշխատանք՝ ծնողավարման դասընթացներ, ծնողների իրազեկման միջոցառումներ իրականացնելու նպատակով:		
6.		Հանրակրթության Նախադպրոցական կրթության բաժնում նախատեսել անձնակազմերի փորձի փոխանակման պարբերական միջոցառումներ տարբեր թեմաներով:		

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

7.		Նախատեսել և իրականացնել փողոցների հասցեների միասնական ցուցանակների տեղադրման ծրագիր:	Առաջարկն ընդունվել է: Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, 15.12.2021թ. հ.52/158353 Միասնական ցուցանակների օրինակելի ձևի որոշման հարցը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:	Երևան քաղաքի զարգացման 2022 թվականի ծրագրի նախագծում փոփոխություն չի կատարվել:
8.	Գայանե Վարդանյան («Իմ քայլը» խմբակցության անդամ 10.12.2021թ. հ. 21/158353 գրություն)	Ծրագրի որոշ հատվածներում, օրինակ Արաբկիր վարչական շրջանին վերաբերող մասում, Հիմնախնդիրները ներկայացված են որպես կատարվելիք գործողություններ: Անհրաժեշտ է ողջ ծրագրի հիմնախնդիրներ բաժինների շարադրման մոտեցումը նույնականացնել:	Առաջարկն ընդունվել է:	Արաբկիր վարչական շրջանի հիմնախնդիրները ձևակերպվել են հետևյալ կերպ՝ ***Վարչական շրջանի հիմնախնդիրներ՝*** 1. Բակային տարածքների ամբողջական բարեկարգման, եզրաքարերի վերանորոգման, թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն, 2. Կանաչ տարածքների և ոռոգման ցանցի ընդլայնման անհրաժեշտություն, 3. Անվտանգ տեղաշարժն ապահովելու համար ստորգետնյա և վերգետնյա անցումների ընթացիկ նորոգման և կառուցման անհրաժեշտություն, 4. Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային և գույքային պայմանների վատթար վիճակ, 5. Հեղեղատարերի և կոյուղատար խողովակների վերանորոգման և նորերի կառուցման, բ/բ շենքերի կոյուղագծերի և

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

				ջրագծերի ներքին ցանցերի նորոգման անհրաժեշտություն 6. Տրանսպորտային նոր հանգույցների ստեղծման անհրաժեշտություն, 7. Վերելակային տնտեսության ուսումնասիրություն և հիմնանորոգման անհրաժեշտություն 8. Կանաչապատ տարածքների ավելացման և նոր պուրակների, ջրավազանների և կանաչապատ բակերի ստեղծման, ոռոգման ցանցի ընդլայնման անհրաժեշտություն, 9. Վարչական շրջանի հին բնակֆոնդի՝ շենքերի կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի, մասնավորապես շենքերի պատշգամբները պահող կոնստրուկցիաների ոչ բավարար վիճակ 10. Ավտոմոբիլային ճանապարհային ցանցի թեթևացում, նոր ճանապարհների և շրջանցող խճուղիների նախատեսում, 11. Գոյություն ունեցող ավտոտնակների կենտրոնացում նոր ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղիների և անթույլատրելի տեղերում գտնվողների ապամոնտաժում, 12. «Երևանի հ. 31 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ոռոգման ցանցի կարգավորման անհրաժեշտություն:
9.	Աշխատակազմի արտաքին կապերի վարչություն	ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև առևտրատնտեսական,	Առաջարկն ընդունվել է:	Ավելացվել է Երևանի 2022 թվականի զարգացման ծրագրի «Միջազգային համագործակցություն» բաժնի 2022թ. նախատեսվող ծրագրերի 2-րդ կետի

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	07.12.2021թ. հ. 21/156614 գրություն	գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում 2021-2025թթ. համագործակցության զարգացման միջոցառումների ծրագրով (Ճանապարհային քարտեզ) նախատեսված կետերը ներառել Երևան քաղաքի 2022 թվականի զարգացման ծրագրում:		«Անմիջական նպատակ» ենթակետում հետևյալ բովանդակությամբ՝ «10.Իրականացնել ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում 2021-2025թթ. համագործակցության զարգացման միջոցառումների ծրագրով սահմանված կետերը՝ աշխատակազմի համանատասխան ստորաբաժանումների հետ համագործակցությամբ(կոմունալ տնտեսություն, արտաքին ձևավորման և գովազդ, «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ, զարգացման և ներդրումային ծրագրեր, երեխաների և սոցիալական պաշտպանություն, առողջապաություն, տրանսպորտ, հանրակրթություն, մշակույթ և տուրիզմ)»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ